

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Եվրոպայի խորհրդի «Հաշմանդամների իրավունքների և հասարակության կյանքում նրանց լիարժեք մասնակցության խթանման. 2006-2015 թթ. Եվրոպայում հաշմանդամների կյանքի որակի բարելավման մասին» գործողությունների ծրագրի վերաբերյալ Նախարարների հանձնախմբի թիվ 5 Հանձնարարականը (2006 թ.) ուղղված անդամ-պետություններին

(Ընդունվել է Նախարարների հանձնախմբի կողմից 2006 թ. ապրիլի 5-ին կայացած Փոխնախարարների 961-րդ նիստում)

Հիմնվելով 1959 թ. նոյեմբերի 16-ի «Սոցիալական և մշակութային ոլորտներում Եվրոպայի խորհրդի գործունեության ընդլայնման մասին» թիվ (59) 23 որոշման վրա,

Հաշվի առնելով 1996 թ. թիվ (96) 35 որոշումը, որով նախատեսվում է վերանայել «Սոցիալական և հանրային առողջապահության ոլորտում մասնակի համաձայնագիրը», մասնավորապես փոփոխել Մասնակի համաձայնագրի կառուցվածքը և որոշում թիվ (59) 23-ում սահմանված դրույթներին փոխարինող վերանայված կանոններին համապատասխան շարունակել վերը որոշման ներքո իրականացվող աշխատանքները՝ ուղղված, ի թիվս այլոց, հաշմանդամներին հասարակությանը ինտեգրելուն, որի նպատակն է հաշմանդամների համար Եվրոպայի մակարդակով օրինակելի հետևողական քաղաքականության սահմանումն ու իրականացումը՝ հիմնվելով լիիրավ քաղաքացիության և ինքնուրույն կենսագործունեության սկզբունքների վրա, որոնք ենթադրում են ինտեգրմանը խոչընդոտող արգելապատճենների վերացում, ներառյալ հոգեբանական, կրթական, ընտանեկան, մշակութային, սոցիալական, մասնագիտական կամ ֆինանսական արգելապատճենները,

Հաշվի առնելով այն, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել անդամ-պետությունների ավելի մեծ միասնականության, և որ այս նպատակը հնարավոր է իրագործել, ի թիվս այլոց, քաղաքական, քաղաքացիական, մշակութային և կրթական իրավունքների պաշտպանությունն ամրապնդելու համար հաշմանդամության քաղաքականության ոլորտում ընդհանուր կանոնների սահմանման միջոցով,

Հաշվի առնելով «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների կոնվենցիան»,

Հաշվի առնելով «Եվրոպական սոցիալական խարտիա»-ի վերանայված տարբերակում (ETS No. 163) արտացոլված սկզբունքները, մասնավորապես, հաշմանդամ մարդկանց անկախության, սոցիալական ինտեգրման և հասարակության կյանքում մասնակցության իրավունքները,

Հաշվի առնելով Միացյալ ազգերի կազմակերպության 1993 թ. «Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման» ստանդարտ կանոնները,

Հաշվի առնելով Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից 2001 թ. սահմանված Կենսագործունեության, հաշմանդամության և առողջական վիճակի միջազգային դասակարգումը,

Հաշվի առնելով Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) 1981 թ. «Հաշմանդամ մարդկանց մասնագիտական վերականգնման և զբաղվածության մասին» կոնվենցիան և «Հաշմանդամ մարդկանց մասնագիտական վերականգնման և զբաղվածության վերաբերյալ» ՄԱԿ-ի համապատասխան հանձնարարականը (1983 թ.),

Հաշվի առնելով Հաշմանդամների վերաբերյալ հետևողական քաղաքականության վերաբերյալ անդամ-պետություններին ուղղված՝ Նախարարների հանձնախմբի թիվ (92) 6 հանձնարարականը,

Հաշվի առնելով Հաշմանդամների մասին «Առաջընթաց որպես քաղաքացիներ հաշմանդամների լիարժեք մասնակցության ուղով» նախարարների հռչակագիրը, որն ընդունվել է հաշմանդամների ինտեգրման համար պատասխանատու նախարարների կողմից 2003 թ. մայիսի 8-ին Մալազայում (Իսպանիա) կայացած Երկրորդ Եվրոպական կոնֆերանսում,

Հաշվի առնելով Եվրոպայի Խորհրդի պետությունների ու կառավարությունների ղեկավարների երրորդ վերաժողովի գործողությունների ծրագիրը (CM(2005)80 վերջնական), որն ընդունվել է 2005 թ. մայիսի 17-ին Վարշավայում և սահմանում է հետագա տարիներին Եվրոպայի Խորհրդի դերն ու պատասխանատվության հիմնական շրջանակները,

Հաշվի առնելով Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վերաժողովի «Դեպի հաշմանդամների լիարժեք սոցիալական ինտեգրումը» հանձնարարական թիվ 1592-ը (2003 թ.),

Կրկին ճանաչելով մարդու բոլոր իրավունքների ու հիմնարար ազատությունների միասնականությունը, անբաժանելիությունը և փոխկապվածությունը, ինչպես նաև հաշմանդամների համար առանց որևէ խտրականության կյանքը լիարժեքորեն վայելելու հնարավորության երաշխիքի անհրաժեշտությունը,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եվրոպայի ընդհանուր բնակչության մեջ հաշմանդամները կազմում են մոտ 10-15 տոկոսը, որ հաշմանդամության հիմնական պատճառներն են տարեց մարդկանց շրջանում տեղի ունեցող հիվանդությունները, դժբախտ պատահարներն ու անբարենպաստ պայմանները, որ կյանքի տևողության աճի հետ մեկտեղ, ի թիվս այլոց, ակնկալվում է հաշմանդամների թվի կայուն աճ,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշմանդամ քաղաքացիների իրավունքների պաշտպանության և հավասար հնարավորությունների ապահովման բացակայությունը ոտնձգություն է մարդու արժանապատվության նկատմամբ,

Հաշվի առնելով այն, որ հասարակության բոլոր խմբերի անդամների համար հավասար հնարավորությունների ապահովումը նպաստում է ժողովրդավարության և սոցիալական համախմբվածության ապահովմանը,

Համոզված լինելով, որ հասարակությանը հաշմանդամների ինտեգրման և հասարակության կյանքում նրանց լիարժեք մասնակցության ապահովման ուղղությամբ կիրառվող մոտեցումը, որը հիմնվում է մարդու իրավունքների վրա, պետք է ներառվի միջազգային, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում իրականացվող քաղաքականությունների բոլոր համապատասխան ուղղություններում,

Ընդգծելով հետևողական քաղաքականությունների ու համակարգված գործողությունների միջոցով բոլոր ոլորտներում հաշմանդամության հարցերի շուրջ համաձայնեցված մոտեցման անհրաժեշտությունը,

Հաշվի առնելով Հաշմանդամության վերաբերյալ սույն գործողությունների ծրագրի մշակման գործում Եվրոպայի Խորհրդի Հաշմանդամների վերականգնման և ինտեգրման հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքների արդյունքները,

Ընդգծելով Հաշմանդանության վերաբերյալ գործողությունների ծրագրի իրականացման խնդրում հաշմանդանների հասարակական կազմակերպությունների հետ գործընկերության հաստատման կարևորությունը,

Նախարարների հանձնախումբը առաջարկում է, որ անդամ-պետությունների կառավարությունները, ըստ պատշաճի հաշվի առնելով ազգային, տարածաշրջանային կամ տեղական կառույցների առանձնահատկություններն ու պատասխանատվության շրջանակները.

ա) ըստ անհրաժեշտության, իրենց քաղաքականություններում և օրենսդրությունում արտացոլեն, կիրառեն և իրականացնեն Եվրոպայի խորհրդի Գործողությունների ծրագրում սահմանված սկզբունքներն ու գործողությունները՝ 2006-2015 թթ. Եվրոպայում հաշմանդանների կյանքի որակը բարելավելու, նրանց իրավունքների պաշտպանությունը և հասարակության կյանքում նրանց լիարժեք մասնակցությունն ապահովելու նպատակով (տես սույն հանձնարարականի հավելվածը),

բ) նպաստել Եվրոպայի խորհրդի 2006-2015 թթ. Գործողությունների ծրագրի իրականացմանը և կիրառմանը այն ոլորտներում, որոնց համար պետական իշխանությունները ուղղակիորեն պատասխանատու չեն, սակայն, որտեղ, այնուամենայնիվ, նրանք իրականացնում են որոշակի վերահսկողություն կամ կարող են որոշակի դերակատարում ունենալ,

գ) այս նպատակի իրագործման համար ապահովել այն, որ սույն հանձնարարականը հնարավորինս լայն լուսաբանում ստանա բոլոր համապատասխան կողմերի շրջանում, օրինակ՝ իրազեկման ծրագրերի, մասնավոր հատվածի ու քաղաքացիական հասարակության հետ համագործակցության միջոցով, որտեղ կներգրավվեն հաշմանդանների հասարակական կազմակերպությունները:

Հանձնարարական թիվ (2006)5-ի հավելված

Եվրոպայի խորհրդի «Հաշմանդամների իրավունքների և հասարակության կյանքում նրանց լիարժեք մասնակցության խթանման. 2006-2015 թթ. Եվրոպայում հաշմանդամների կյանքի որակի բարելավման» գործողությունների ծրագիրը

Բովանդակության ցանկ

1. Ամփոփ եզրակացություններ
 2. Ներածություն
 3. Գործողությունների հիմնական ուղղությունները
 - 3.1. Գործողության ուղղություն թիվ 1. Մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքում
 - 3.2. Գործողության ուղղություն թիվ 2. Մասնակցությունը մշակութային կյանքում
 - 3.3. Գործողության ուղղություն թիվ 3. Տեղեկատվությունը և հաղորդակցությունը
 - 3.4. Գործողության ուղղություն թիվ 4. Կրթությունը
 - 3.5. Գործողության ուղղություն թիվ 5. Զբաղվածությունը, մասնագիտական ուղղորդումը և ուսուցումը
 - 3.6. Գործողության ուղղություն թիվ 6. Կառուցված միջավայրը
 - 3.7. Գործողության ուղղություն թիվ 7. Տրանսպորտը
 - 3.8. Գործողության ուղղություն թիվ 8. Համայնքային կյանքը
 - 3.9. Գործողության ուղղություն թիվ 9. Առողջապահությունը
 - 3.10. Գործողության ուղղություն թիվ 10. Վերականգնողական աշխատանքները
 - 3.11. Գործողության ուղղություն թիվ 11. Սոցիալական պաշտպանությունը
 - 3.12. Գործողության ուղղություն թիվ 12. Իրավական պաշտպանությունը
 - 3.13. Գործողության ուղղություն թիվ 13. Պաշտպանությունը բռնության և շահագործման դրսևորումներից
 - 3.14. Գործողության ուղղություն թիվ 14. Գիտահետազոտական աշխատանքները
 - 3.15. Գործողության ուղղություն թիվ 15. Իրազեկության բարձրացումը
 4. Բազմաբնույթ առանձնահատկություններ
 - 4.1. Ներածություն
 - 4.2. Հաշմանդամ կանայք և աղջիկները
 - 4.3. Մեծապես աջակցության կարիք ունեցող հաշմանդամները
 - 4.4. Հաշմանդամ երեխաներն ու երիտասարդները
 - 4.5. Տարեց հաշմանդամները
 - 4.6. Փոքրամասնությունների և ներգաղթացների խմբերին պատկանող հաշմանդամները
 5. Իրականացումը և հսկողությունը
 - 5.1. Ներածություն
 - 5.2. Իրականացումը
 - 5.3. Հսկողությունը
- Հավելված 1 «Առաջընթաց որպես քաղաքացիներ հաշմանդամների լիարժեք մասնակցության ուղղով» հաշմանդամների մասին նախարարների հռչակագիրը, որն ընդունվել է 2003 թ. մայիսի 7-ին և 8-ին Մալագայում (Իսպանիա) կայացած Երկրորդ Եվրոպական

Կոնֆերանսում՝ կազմակերպված հաշմանդամների ինտեգրման համար
պատասխանատու նախարարների կողմից

Չավելված 2 Չղումային փաստաթղթեր

1. Անփոփ եզրակացություններ

1.1. Առաքելությունը

1.1.1. Նախարարների Մալազայի հռչակագիրը հաշմանդամների մասին

1992 թվականին, հաշմանդամների վերաբերյալ քաղաքականությունների համար պատասխանատու նախարարների առաջին եվրոպական կոնֆերանսից հետո, Նախարարների հանձնախմբի կողմից ընդունվեց հաշմանդամ մարդկանց վերաբերյալ թիվ (92) 6 հանձնարարականը:

Այս անդրամիկ հանձնարարականն ավելի քան տաս տարի շարունակ հաշվի է առնվել հաշմանդամության վերաբերյալ քաղաքականություններում և որպես հիմք ծառայել քաղաքականությունների նոր մասնակցային ծրագրերի համար, որոնք իրենց դրական արդյունքներն են տվել հաշմանդամների համար ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում:

Ինչևէ, հասարակությունում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ, և հաջորդ տասնամյակում հաշմանդամության հարցերի նկատմամբ սոցիալական ու մարդու իրավունքների վրա հիմնվող մոտեցման հետագա զարգացման համար պահանջվում են նոր ռազմավարություններ:

2003 թ. մայիսին Իսպանիայի Մալազա քաղաքում կայացավ Նախարարների երկրորդ եվրոպական կոնֆերանսը, որտեղ ընդունվեց «Առաջընթաց որպես քաղաքացիներ հաշմանդամների լիարժեք մասնակցության ուղով» նախարարների հռչակագիրը:

Մշակվեց համապատասխան ռազմավարություն՝ Եվրոպայի խորհրդի հաշմանդամության վերաբերյալ գործողությունների ծրագրի կազմման ուղղությամբ, որի նպատակն էր պաշտպանել մարդու իրավունքները և բարելավել հաշմանդամների կյանքի որակը Եվրոպայում:

1.1.2. Առաքելության նպատակը

Հաշմանդամության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի 2006-2015 թթ. գործողությունների ծրագրի խնդիրն է հաշմանդամների իրավունքների, խտրականության բացառման, հավասար հնարավորությունների, լիիրավ քաղաքացիության և մասնակցության հետ կապված Եվրոպայի խորհրդի նպատակներն արտացոլել հաշմանդամության վերաբերյալ հաջորդ տասնամյակի Եվրոպական քաղաքականությունների դաշտում:

Սույն գործողությունների ծրագիրը նպատակ է հետապնդում ապահովելու այնպիսի համապարփակ դաշտ, որը և ճկուն է, և կարող է ենթարկվել փոփոխությունների՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրին բնորոշ առանձնահատկությունները: Այն կոչված է ծառայելու որպես ուղեցույց քաղաքականություն ձևավորողների համար և թույլ կտա նրանց նախագծել, ճշգրտել և իրականացնել համապատասխան ծրագրերն ու նորարարական ռազմավարությունները՝ վերասահմանվել դրանց ուղղությունները:

Եվրոպայի խորհուրդը կջանա իրականացնել Հաշմանդամության գործողությունների ծրագիրը՝ առաջարկությունների, խորհրդատվության և փորձագիտական տեղեկատվության տեսքով աջակցություն ցուցաբերելով անդամ-պետություններին:

1.2. Հիմնարար սկզբունքները և ռազմավարական նպատակները

1.2.1. Հիմնարար սկզբունքները

Անդամ-պետությունները կշարունակեն աշխատել խտրականության դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ, որպեսզի ամրապնդեն հաշմանդամների ինքնուրույնությունը, ընտրության ազատությունը և կյանքի որակը, ինչպես նաև բարձրացնեն հաշմանդամության՝ որպես մարդկային բազմազանության տարրերից մեկի, մասին իրազեկության աստիճանը :

Լիովին հաշվի են առնվել Եվրոպական և միջազգային գործող համապատասխան փաստաթղթերը, համաձայնագրերն ու ծրագրերը, ինչպես նաև հաշմանդամների իրավունքների մասին ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիայի նախագծի համատեքստում տեղի ունեցած զարգացումները:

Սոցիալական համերաշխության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նոր ռազմավարության (2004 թ.) մեջ նշվում է, որ անհրաժեշտ է դրսևորել հատուկ պատրաստակամություն, որպեսզի ապահովվեն այն անձանց իրավունքները, ովքեր կանգնած են խոցելի դառնալու ռիսկի առջև, օրինակ՝ երեխաներն ու երիտասարդները, մերգաղթածները, ազգային փոքրամասնություններին պատկանող մարդիկ, հաշմանդամներն ու տարեցները:

Հաշմանդամության վերաբերյալ գործողությունների ծրագրում ճանաչվում է այն հիմնարար սկզբունքը, որ հասարակությունն իր բոլոր քաղաքացիների նկատմամբ պատասխանատու է այն առումով, որ հաշմանդամության հետևանքերը պետք է նվազեցվեն առողջ ապրելակերպի, առավել անվտանգ միջավայրի, համարժեք առողջապահության, վերականգնողական աշխատանքների ապահովման և համայնքների ցուցաբերած աջակցության միջոցով:

1.2.2. Ռազմավարական նպատակները

Հաշմանդամության վերաբերյալ գործողությունների ծրագրի առաջնային նպատակն է ծառայել որպես գործնական միջոց՝ հասարակության կյանքում հաշմանդամների լիարժեք մասնակցության ապահովմանը և, ի վերջո, անդամ-պետությունների բոլոր քաղաքականությունների ոլորտներում հաշմանդամության հարցերի համաձայնեցմանն ուղղված կենսունակ ռազմավարություններ մշակելու և իրականացնելու համար: Գործողությունների ծրագիրը կոչված է արտացոլելու յուրաքանչյուր անդամ-պետությանը բնորոշ առանձնահատկությունները:

Այն ներառում է ազգային մակարդակով կոնկրետ գործողությունների նախաձեռնման մասին առաջարկություններ, ինչպես նաև լուսաբանում է հաշմանդամների այն խոցելի խմբերին բնորոշ առանձնահատկությունները, ովքեր կանգնած են համակողմանի լուծում պահանջող արգելապատնեղների ու խնդիրների առջև:

Այն խրախուսում է անդամ-պետություններին՝ որակյալ ու նորարարական ծառայությունների, արդեն իսկ իրականացվող միջոցառումների միջոցով արձագանքելու հաշմանդամների կարիքներին:

Գործողությունների ծրագիրը կոչված է ծառայելու որպես ոգեշնչման աղբյուր մասնավոր ընկերությունների, հասարակական և միջազգային կազմակերպությունների համար: Գործողությունների ծրագրում նշվում է այն մասին, որ հաշմանդամների հասարակական կազմակերպությունները ունակ և բանիմաց գործընկերներ են քաղաքականության մշակման խնդրում, և որպես շահագրգիռ կողմ նրանց կարծիքները պետք է հաշվի առնվեն հաշմանդամների կյանքի վրա ազդող որոշումների կայացման ժամանակ: Գործողությունների ծրագրի

իրականացումը պարբերաբար կենթարկվի մոնիտորինգի և կզնահատվի՝ ազգային մակարդակով առաջընթացը որոշելու և լավագույն փորձը փոխանակելու համար:

1.3. *Գործողությունների հիմնական ուղղությունները*

Հաշմանդամության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի գործողությունների ծրագրի շրջանակները ընդգրկում են և ներառում են հաշմանդամ մարդկանց կյանքի բոլոր հիմնական ոլորտները, որոնք պատշաճ կերպով արտացոլվել են գործողությունների 15 ուղղություններում: Վերջիններս սահմանում են անդամ-պետությունների կողմից իրագործվելիք գլխավոր նպատակները և կոնկրետ գործողությունները:

Գործողությունների ուղղությունները կազմում են ծրագրի առանցքային մասը և ներառում են հետևյալ ոլորտները.

- թիվ 1. Մասնակցություն քաղաքական և հասարակական կյանքում,
- թիվ 2. Մասնակցություն մշակութային կյանքում,
- թիվ 3. Տեղեկատվություն և հաղորդակցություն,
- թիվ 4. Կրթություն,
- թիվ 5. Ջրաղվածություն, մասնագիտական ուղղորդում և ուսուցում,
- թիվ 6. Կառուցված միջավայր,
- թիվ 7. Տրանսպորտ,
- թիվ 8. Համայնքային կյանք,
- թիվ 9. Առողջապահություն,
- թիվ 10. Վերականգնում,
- թիվ 11. Սոցիալական պաշտպանություն,
- թիվ 12. Իրավական պաշտպանություն,
- թիվ 13. Պաշտպանվածություն բռնության և շահագործման դրսևորումներից,
- թիվ 14. Գիտահետազոտական աշխատանքներ, և
- թիվ 15. Իրագեկման բարձրացում:

Քաղաքական և հասարակական կյանքում մասնակցությունը (թիվ 1) և ժողովրդավարական գործընթացները էական նշանակություն ունեն ժողովրդավարական հասարակության զարգացման ու պահպանման համար: Հաշմանդամ մարդիկ պետք է հնարավորություն ունենան ազդելու իրենց համայնքների ապագայի վրա: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ հաշմանդամները կարողանան իրականացնել քվեարկելու, քաղաքական ու հասարակական կյանքում մասնակցելու իրենց իրավունքը:

Հասարակությանը լիարժեքորեն ինտեգրվելու համար հաշմանդամները պետք է հնարավորություն ունենան նաև մասնակցելու հասարակության մշակութային կյանքում (թիվ 2): Անհրաժեշտ է նախաձեռնել համապատասխան միջոցառումներ, որպեսզի ապահովվել հաշմանդամների մասնակցությունը մշակութային իրադարձություններում, կազմակերպություններում և օգտագործել նրանց ստեղծագործական ու մտավոր ներուժը ի շահ հաշմանդամների և համայնքների:

Սրա նախապայմաններից մեկը տեղեկատվությունից ու հաղորդակցման միջոցներից օգտվելու հնարավորության ապահովումն է (թիվ 3): Կարևոր է, որ տեղեկատվություն և հաղորդակցման միջոցներ տրամադրող հանրային ու մասնավոր կազմակերպությունները հաշվի առնեն հաշմանդամների կարիքները: Անհրաժեշտ է իրականացնել համապատասխան միջոցառումներ, որպեսզի ապահովվել հաշմանդամների կողմից տեղեկատվության ստացումն ու հաղորդումը հասարակության այլ անդամների հետ հավասար հնարավորություններով:

Կրթություն ստանալու հավասար հնարավորությունը (թիվ 4) հաշմանդամների սոցիալական ինտեգրման և անկախության ապահովման հիմնարար պահանջներից մեկն է: Կրթությունը պետք է

Ներառի կյանքի բոլոր փուլերը՝ սկսած նախադպրոցական կրթությունից մինչև մասնագիտական կրթությունը, ինչպես նաև կյանքի ողջ տևողության ընթացքում ուսուցում ստանալու հնարավորությունը: Հիմնական կրթությունը և մասնագիտացված ծրագրերը, ըստ անհրաժեշտության, պետք է ընթանան համատեղ, քանի որ սա թույլ կտա հաշմանդամներին աջակցություն ստանալ իրենց տեղական համայնքներում: Ինտեգրված մոտեցումը կարող է նպաստել նաև ոչ հաշմանդամների իրազեկմանը և նրանց կողմից մարդկային բազմազանության ըմբռնմանը:

Ջբաղվածությունը, մասնագիտական ուղղորդումն ու ուսուցումը (թիվ 5) հաշմանդամների սոցիալական ինտեգրման և տնտեսական անկախության կարևոր գործոններն են: Հաշմանդամների համար աշխատանք ունենալու և աշխատատեղը պահպանելու հավասար հնարավորության ապահովման համար պահանջվում է համապատասխան օրենսդրության, միջոցառումների և ծառայությունների առկայությունը: Աշխատանք ունենալու հավասար հնարավորության ապահովմանը պետք է նպաստի խտրականության դեմ ուղղված պայքարի ու դրական գործողությունների համադրված իրականացումը և զբաղվածության քաղաքականություններում հաշմանդամների զբաղվածության հարցերի համակարգումը:

Մատչելի և անարգել միջավայրը (թիվ 6) խրախուսում է հավասար հնարավորությունները, ինքնուրույն ապրելակերպը, համայնքային կյանքում ակտիվ ներգրավվածությունը և աշխատելու հնարավորությունը: «Միասնական նախագծի» սկզբունքների կիրառման միջոցով հնարավոր է ստեղծել հաշմանդամների համար մատչելի միջավայր և խուսափել նոր արգելապատնեշների առաջացումից:

Մատչելի տրանսպորտի զարգացումն ու ապահովումը (թիվ 7) բոլոր մակարդակներում պետք է հանգեցնի հաշմանդամների համար ուղևորատար տրանսպորտի ծառայությունների մատչելիության զգալի բարելավմանը: Սա նախապայման է այն բանի, որ կապահովվի հաշմանդամների ինքնուրույնությունը, լիարժեք մասնակցությունը աշխատուժի շուկայում և ակտիվ ներգրավումը համայնքային կյանքում:

Հաշմանդամները պետք է ի վիճակի լինեն հնարավորինս ինքնուրույն կյանքով ապրել, ներառյալ իրենց ապրուստի վայրը և ձևը ընտրելու հնարավորությունը: Ինքնուրույն ապրելակերպի և սոցիալական ներառման հնարավորությունները նախևառաջ ստեղծվում են համայնքում ապրելու շնորհիվ: Համայնքի ներսում ապրելը խթանելու (թիվ 8) համար պահանջվում են ռազմավարական այնպիսի քաղաքականություններ, որոնք թույլ են տալիս անցում կատարել ինստիտուցիոնալ խնամքից դեպի համայնքում տեղակայված ապրուստի միջավայրը՝ սկսած ինքնուրույն ապրուստի պայմաններից մինչև խնամքի փոքր կենտրոնները: Այս ուղղությունը ենթադրում է նաև համայնքի ներսում տեղակայված անհատական աջակցության կառույցներ և ծառայությունների տրամադրում:

Ինչպես ոչ հաշմանդամ մարդկանց, այնպես էլ հաշմանդամներին անհրաժեշտ են համարժեք առողջապահական ծառայություններ (թիվ 9): Հաշմանդամները պետք է ունենան այնպիսի որակյալ առողջապահական ծառայություններից օգտվելու հավասար հնարավորություն, որոնք հարգում են հաճախորդի իրավունքները: Այս առումով կարևոր է, որ առողջապահության մասնագետները ավելի մեծ ուշադրություն դարձնեն (սովորեն դարձնել) հաշմանդամության սոցիալական մոդելի վրա:

Հաշմանդամության վատթարացումը կանխելու, դրա հետևանքները մեղմացնելու և հաշմանդամ մարդկանց ինքնուրույնությունը բարելավելու համար պետք է իրականացվեն վերականգնողական համապարփակ ծրագրեր (թիվ 10), որոնցում ներառվում են մատչելի և, ըստ անհրաժեշտության, համայնքներում տեղակայված ծառայություններ:

Սոցիալական պաշտպանության համակարգի կողմից տրամադրվող ծառայությունները (թիվ 11), ներառյալ սոցիալական ապահովությունը, սոցիալական աջակցությունը և օժանդակությունը, կարող են նպաստել շահառուների կյանքի որակի բարելավմանը: Հաշմանդամները պետք է ի

վիճակի լինեն ըստ պատշաճի օգտվելու սոցիալական պաշտպանության համակարգերից և օժտված լինեն նշված համակարգերի կողմից տրամադրվող ծառայությունները ստանալու հավասար հնարավորությամբ: Բոլոր հնարավոր դեպքերում պետք է զարգանան այն քաղաքականությունները, որոնք խրախուսում են նպաստներից կախվածությունից անցումը դեպի զբաղվածությունն ու ինքնուրույնությունը:

Ինչպես մնացած բոլոր քաղաքացիները, այնպես էլ հաշմանդամները պետք է ունենան իրավական համակարգից օգտվելու հավասար հնարավորություն: Իրավական պաշտպանությունը (թիվ 12) ենթադրում է հաշմանդամների նկատմամբ խտրականության վերացմանն ուղղված համապատասխան միջոցառումների նախաձեռնում: Խտրականությունը կանխելու և դրա դեմ պայքարելու համար անհրաժեշտ է համարժեք իրավական և վարչական համակարգ:

Հասարակության պարտականությունն է նաև պաշտպանել հաշմանդամներին շահագործման և բռնության դեպքերից և կանխել դրանք (թիվ 13): Քաղաքականությունները պետք է ուղղված լինեն շահագործման և բռնության բոլոր դրսևորումներից հաշմանդամների պաշտպանությանը և շահագործման ու բռնության զոհերի համապատասխան աջակցության ապահովմանը:

Գիտահետազոտական աշխատանքները (թիվ 14), վիճակագրական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը էական նշանակություն ունեն տեղեկացված և փաստերի վրա հիմնվող քաղաքականությունների նախագծման և իրականացման համար: Հուսալի տեղեկատվությունը կարևոր է առաջացող հարցերը բացահայտելու և դրանց լուծումները գտնելու առումով: Կարևոր է նաև որոշել լավագույն փորձը և հետևել հասարակությունում տեղի ունեցող փոփոխություններին:

Իրազեկման բարձրացումը (թիվ 15) կարևոր գործոն է, որն աջակցում է Գործողությունների ողջ ծրագրին: Անհրաժեշտ է պայքարել խտրական վարքագծի և խարազանման դեմ: Վերջիններիս պետք է փոխարինի անաշխատունակության և հաշմանդամության հետևանքների մասին մատչելի և օբյեկտիվ տեղեկատվությունը, որի նպատակն է նպաստել հասարակությունում հաշմանդամների կարիքների ու իրավունքների մասին պատկերացման ամրապնդմանը: Այս գործողությունը պետք է ուղղված լինի հաշմանդամների նկատմամբ բացասական վերաբերմունքի փոփոխմանը: Այն պետք է նպաստի կառավարության կողմից հրատարակվող, ինչպես նաև լրատվամիջոցներում բացահայտվող բոլոր նյութերում արտացոլված հաշմանդամության հարցերի համակարգմանը:

1.4. Խաչածևող մոտեցումներ

Եվրոպայի հաշմանդամ բնակչության շրջանում կան մարդիկ, ովքեր իրենց կյանքում հանդիպում են հատուկ խոչընդոտների կամ ենթարկվում կրկնակի խտրականության:

Հաշմանդամ կանայք ու աղջիկները, մեծապես խնամքի կարիք ունեցող հաշմանդամ մարդիկ, հաշմանդամ երեխաները և երիտասարդները, հաշմանդամ տարեցները, փոքրամասնություններին կամ ներգաղթած համայնքներին պատկանող հաշմանդամները կանգնած են մեկուսացման առավելի բարձր ռիսկի առջև: Այլ հաշմանդամների համեմատ նրանց մասնակցությունը հասարակության կյանքում սովորաբար ավելի ցածր է:

Հասարակության կյանքում հաշմանդամ կանանց ու աղջիկների մասնակցությանը հաճախ խոչընդոտում են տարբեր խնդիրներ՝ կապված ինչպես սեռի, այնպես էլ հաշմանդամության վրա հիմնվող խտրականության հետ: Կանանց և աղջիկների այս հատուկ վիճակը պետք է հաշվի առնվի բոլոր մակարդակներում և՛ հաշմանդամության, և՛ զենդերային քաղաքականությունների ու ծրագրերի մշակման ժամանակ:

Հաշմանդամ մարդկանց առավել խոցելի խմբերից են այն մարդիկ, ովքեր իրենց հաշմանդամության բարդության և լրջության պատճառով աջակցության խիստ կարիք ունեն: Նրանց կյանքի որակը մեծապես կախված է համապատասխան որակյալ ծառայությունների և

հատուկ, հաճախ ինտենսիվ աջակցության առկայությունից: Մարդկանց այս խմբին բնորոշ յուրահատուկ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է աշխատանքների ծրագրում և համակարգում բոլոր համապատասխան մարմինների, պետական գործակալությունների և ծառայություն մատուցողների համար:

Ինչպես մնացած այլ երեխաները, հաշմանդամ երեխաները նույնպես պետք է օգտվեն Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում սահմանված իրավունքներից ու հնարավորություններից: Հաշմանդամ երիտասարդները նույնպես մեր հասարակության խոցելի խմբերից են: Նրանք դեռևս կանգնած են կյանքի բոլոր ոլորտներում իրենց մասնակցությամբ խոչընդոտող խնդիրների առջև: Անհրաժեշտ է առավել մանրակրկիտ ուսումնասիրել հաշմանդամ երեխաների ու երիտասարդների առջև ծառայած առանձնահատուկ խնդիրները, ինչը թույլ կտա նախագծել և իրականացնել տեղեկացված որոշումներ քաղաքականությունների ոլորտների լայն սպեկտրում:

Հաշմանդամ բնակչության, հատկապես ինտենսիվ աջակցության կարիք ունեցող հաշմանդամների ծերացումը ողջ Եվրոպայի հասարակության համար նոր մարտահրավերներ է առաջացնում: Քաղաքականությունների և ծառայությունների ուղղություններով այս մարտահրավերները հաղթահարելու համար պահանջվում են նորարարական մոտեցումներ:

Փոքրամասնությունների խմբերին և ներգաղթած համայնքներին պատկանող հաշմանդամները խտրականության կամ հանրային ծառայություններին անծանոթ լինելու պատճառով կարող են կանգնել բազմաբնույթ խնդիրներ առջև: Այս խմբերին բնորոշ խնդիրները լուծելու համար պահանջվում է համակողմանի մոտեցում, որտեղ հաշվի են առնվում մշակութային առանձնահատկությունները, լեզվական և հատուկ կարիքները:

Հաշմանդամների վերը նշվող հատուկ խմբերը հասարակությանը ինտեգրելու համար անհրաժեշտ են համակողմանի քայլեր: Քաղաքականություն ձևավորողները պետք է ճանաչեն այս խմբերից յուրաքանչյուրին բնորոշ խոչընդոտներն ու մարտահրավերները: Նրանք պետք է ապահովեն այն, որ քաղաքականություններում ներառվեն այնպիսի գործողություններ, որոնք լրացնում են աշխատանքների հիմնական ուղղություններին և թույլ են տալիս անհատին բացահայտելու իր ողջ ներուժը: Սույն գործողությունների ծրագրից և Եվրոպայի խորհրդի Սոցիալական համերաշխության նոր ռազմավարությունից (2004 թ.) բացի, անհրաժեշտ է ներդնել զուգահեռ մոտեցում՝ ուղղված համակողմանի և ինտեգրված արդյունավետ քաղաքականությունների մշակմանը:

1.5. Իրականացումը և դրա նկատմամբ հսկողությունը

Գործողությունների ուղղությունների և համակողմանի հարցերի հիմքում ընկած հիմնարար սկզբունքներին, Միասնական նախագծի սկզբունքներին համապատասխան, որակը, ուսուցումը և համակարգումը համարվում են Հաշմանդամության գործողությունների ծրագրի իրականացման ռազմավարության կենսական տարրերը: Միասնական նախագծի սկզբունքների կիրառումը հանգուցային կարևորություն ունի միջավայրի մատչելիության ու ապրանքների օգտագործելիության բարելավման համար: Չափազանց կարևոր է նաև այն, որ որակի բարձր ստանդարտների կիրառման միջոցով բարելավվեն բոլոր քաղաքականությունները, գործողություններն ու ծառայությունները: Հասարակության միասնականության ամրապնդմանն է նպաստում նաև քաղաքականությունների մշակման և ծառայությունների տրամադրման խնդրում համաձայնեցված մոտեցման կիրառումը:

Անդամ-պետություններն առաջնային պատասխանատվություն են կրում ազգային մակարդակում հաշմանդամության վերաբերյալ քաղաքականությունների իրականացման և, մասնավորապես, գործողության յուրաքանչյուր ուղղությամբ իրենց իրավասության հատուկ գործողությունների նախաձեռնման համար: Անդամ-պետությունները պետք է սկսեն Հաշմանդամության գործողությունների ծրագրի հիման վրա առկա քաղաքականությունների և սկզբունքների

գնահատումից, որպեսզի պարզեն, թե ո՞ր ուղղություններով են դեռևս անհրաժեշտ բարելավումներ և կոնկրետ ո՞ր գործողությունները պետք է իրականացվեն:

Նշված գնահատման արդյունքների հիման վրա անդամ-պետությունները պետք է սահմանեն ռազմավարություններ՝ ուղղված Հաշմանդամության վերաբերյալ գործողությունների ծրագրի հանձնարարականների և հիմնարար սկզբունքների հետ իրենց քաղաքականությունների համապատասխանեցմանը, որը պետք է կատարվի սեփական ֆինանսական միջոցների հաշվին:

Հաշմանդամության վերաբերյալ գործողությունների ծրագրի իրականացման ու գնահատման ժամանակ անդամ-պետությունները պետք է ձգտեն կիրառել համատեղ մոտեցումներ և հաստատեն գործընկերություններ համապատասխան շահագրգիռ կողմերի, մասնավորապես, հաշմանդամների հասարակական կազմակերպությունների հետ:

Հաշմանդամության վերաբերյալ գործողությունների ծրագրի մասին իրազեկումը և իրականացումն ապահովելու համար քննարկումներ են տեղի ունեցել Եվրոպայի խորհրդի համապատասխան մարմինների և հանձնախմբերի հետ:

Նախարարների հանձնախումբը կստեղծի համապատասխան խումբ, որը կզբաղվի ծրագրի իրականացման նկատմամբ հսկողություն աշխատանքների կառավարմամբ և անդամ-պետություններին կարող է առաջարկել, որ վերջիններս խորությամբ վերլուծեն այս կամ այն առաջնահերթ հարցը: Հաշմանդամության վերաբերյալ գործողությունների ծրագրի իրականացման նկատմամբ հսկողության արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որ անդամ-պետությունները նշանակված խմբին պարբերաբար տրամադրեն համապատասխան տեղեկատվությունը:

Նշանակված խումբը կապահովի այն, որ Նախարարների հանձնախումբը պարբերաբար կտեղեկանա Հաշմանդամության վերաբերյալ գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացի մասին:

2. Ներածություն

2.1. Առաքելությունը

Գործողությունների ծրագրի խնդիրն է հաշմանդամների իրավունքների, խտրականության բացառման, հավասար հնարավորությունների, լիիրավ քաղաքացիության և մասնակցության ուղղությամբ Եվրոպայի խորհրդի նպատակներն արտացոլել հաշմանդամության վերաբերյալ հաջորդ տասնամյակի Եվրոպական քաղաքականությունների ծրագրում:

Սույն գործողությունների ծրագիրը նպատակ է հետապնդում ապահովելու այնպիսի համապարփակ դաշտ, որը և ճկուն է, և կարող է ենթարկվել փոփոխությունների՝ հաշվի առնելով այս կամ այն երկրին բնորոշ առանձնահատկությունները: Այն կոչված է ծառայելու որպես ուղեցույց քաղաքականություն ձևավորողների համար և թույլ կտա նրանց նախագծել, ճշգրտել և իրականացնել համապատասխան ծրագրերն ու նորարարական ռազմավարությունները, վերասահմանել դրանց ուղղությունները:

Եվրոպայի խորհուրդը կձգտի իրականացնել Հաշմանդամության գործողությունների ծրագիրը՝ առաջարկությունների, խորհրդատվության և փորձագիտական տեղեկատվության տեսքով աջակցություն ցուցաբերելով անդամ-պետություններին:

2.2. Հիվանդից դեպի քաղաքացի անցման պարադիգման

Վերջին տասնամյակը նշանավորվել է Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, սոցիալական և տեխնոլոգիական զգալի փոփոխություններով: Գլոբալացման ընձեռած հնարավորությունների և մարտահրավերների, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման, զբաղվածության և գործազրկության, առողջապահության և ժողովրդագրության, միգրացիայի միտումների փոփոխության, ինչպես նաև շուկայական հարաբերություններին անցում կատարելու արդյունքում տարածաշրջանը վերափոխվում է: Այս փոփոխություններից շատերը դրական են, որի շնորհիվ մեծացել են մարդկանց հույսերն ու ակնկալիքները:

Անցել են այն ժամանակները, երբ հաշմանդամը համարվում էր խնամքի կարիք ունեցող հիվանդ, որը որևէ ավանդ չունի հասարակության կյանքում: Այժմ հաշմանդամը դիտվում է որպես անհատ, որը ձգտում է հասնել առկա արժեքատեսակների վերացմանը, որպեսզի իր արժանի տեղը զբաղեցնի հասարակության մեջ որպես լիիրավ անդամ: Արժեքատեսակները ներառում են հաշմանդամների նկատմամբ հասարակության այլ անդամների վերաբերմունքը, սոցիալական, իրավական և ֆիզիկական միջավայրի խոչընդոտները: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նպաստել հաշմանդամության հին բժշկական մոդելից պարադիգմային անցմանը դեպի մարդու իրավունքների վրա հիմնվող մոդելին:

Համապարփակ, ինտեգրված մոտեցման մեջ ուշադրությունն ուղղվել է դեպի անհատը: Նման մոտեցումը ենթադրում է, որ հարգվում են բոլոր հաշմանդամների մարդու իրավունքները, հիմնարար ազատությունները և արժանապատվությունը: Հետևաբար, Եվրոպական շատ երկրներ սկսել են զարգացնել այն ակտիվ քաղաքականությունները, որոնք իրավունք են տալիս հաշմանդամներին լինել իրենց կյանքի տերը: Միևնույն ժամանակ, ընդհանրապես փոխվել է հասարակական կազմակերպությունների, և մասնավորապես, հաշմանդամների հասարակական կազմակերպությունների դերը հասարակության կյանքում: Նրանք դարձել են կառավարությունների գործընկերներ, ծառայություն մատուցողներ, փորձագիտական կարծիք և օժանդակության տրամադրող կազմակերպություններ:

Գործողությունների ծրագիրը ճկուն է այն առումով, որ այնտեղ կարող են արտացոլվել ապագա տեխնոլոգիական փոփոխությունները և այլ զարգացումները:

Կենսատեխնոլոգիայի բնագավառում վերջերս տեղի ունեցած զարգացումները և դրա հնարավոր կիրառումը մտահոգության տեղիք է տալիս համանդամների շրջանում, քանի որ այն կարող է վտանգել նույնիսկ մարդու կյանքի իրավունքը: Սույն ծրագիրը վերաբերում է հաշմանդամների լիարժեք սոցիալական ինտեգրմանը ու մասնակցությանը: Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ նպատակահարմար չէ այստեղ ներառել բժշկական նշանակության հարցեր, ինչպիսիք են նախածննդյան ախտորոշումը, աբորտների վերաբերյալ օրենքներում հաշմանդամության փաստի հետ կապված խտրական դրույթները:

Նման հարցերի կարևորությունը կասկածից վեր է: Կենսական նշանակություն ունի այն, որ ապահովվի համապատասխան ներկայացուցչական կազմակերպությունների միջոցով հաշմանդամների մասնակցությունը այս հարցերով զբաղվող էթիկական և կենսա-էթիկական ազգային և միջազգային հանձնաժողովներում:

2.3. Մալազայի հռչակագիրը

2003 թ. մայիսի 7-ին և 8-ին Մալազայում (Իսպանիա) կայացած Երկրորդ Եվրոպական կոնֆերանսը, որին մասնացել են հաշմանդամների ինտեգրման քաղաքականությունների համար պատասխանատու նախարարները, հիմնվել է Նախարարների առաջին Եվրոպական կոնֆերանսի արդյունքների վրա, որը կայացավ 1991 թվականին և որի արդյունքում 1992 թ. ապրիլին Նախարարների հանձնախումբն ընդունեց «Հաշմանդամներին վերաբերյալ համապարփակ քաղաքականության մասին» հանձնարարական թիվ (92) 6-ը: Ավելի քան տաս տարի շարունակ

վերջինս իր արտացոլումն է գտել Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների կողմից հաշմանդամության ուղղությամբ իրականացվող քաղաքականություններում և հուշել մասնակցային քայլեր, որոնք իրենց դրական արդյունքներն են տվել հաշմանդամների համար ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում: Ինչևէ, նախարարները ընդունել այն այն փաստը, որ փոփոխված միջավայրում հաշմանդամության հարցերում առաջընթաց ունենալու համար հետագա քայլեր են պահանջվում:

Մալագայում կայացած կոնֆերանսում նախարարների կողմից ընդունված «Առաջընթաց որպես քաղաքացիներ հաշմանդամների լիարժեք մասնակցության ուղով» հռչակագրում նախարարները նշում են, որ հաջորդ տասնամյակում գլխավոր նպատակն է լինելու շարունակել հաշմանդամների և նրանց ընտանիքների կյանքի որակի բարելավման աշխատանքները: Անհրաժեշտ է նոր ռազմավարություն, որը կարտացոլի հաշմանդամության սոցիալական մոդելը, հաշմանդամների ուղջ հասարակության ավելի բարձր ակնկալիքները:

Նախարարների կարծիքով, նշված ռազմավարությունը պետք է արտացոլվի գործողությունների ծրագրում, որը կոչված կլինի վերացնելու բոլոր հաշմանդամների (անկախ նրանց տարիքից) նկատմամբ խտրական վերաբերմունքը: Գործողությունների ծրագրում պետք է հատուկ ուշադրություն դարձվի հաշմանդամ կանանց, մեծապես խնամքի կարիք ունեցող հաշմանդամների, տարեց հաշմանդամների վրա, և ապահովվի նրանց իրավունքների, հիմնարար ազատությունների և լիիրավ քաղաքացիության պաշտպանությունը:

2.4. Մարդու իրավունքների շրջանակը

Եվրոպայի խորհուրդը և նրա անդամ-պետությունները շարունակում են աշխատել խտրականության դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ, որպեսզի հաշմանդամներին պաշտպանեն խտրականության կամ շահագործման ցանկացած դրսևորումներից և քաղաքականությունների բոլոր ուղղություններով հաշմանդամների համար ապահովեն հավասար հնարավորություններ:

Գործողությունների ծրագիրը կազմելիս՝ անդամ-պետությունները պետք է հաշվի առնեն գործող իրավական համաձայնագրերը, փաստաթղթերը, ստանդարտները և քաղաքականությունները, որոնք վերաբերում են հաշմանդամների նկատմամբ հավասար վերաբերմունքի ու նրանց հավասար իրավունքների պաշտպանությանը: Եվրոպայի մակարդակով ամուր հիմքեր են դրվել Նախարարների հանձնախմբի թիվ (92) 6 հանձնարարականով: Եվրոպական միության օրենսդրությունը և ծրագրերը լրացնում են դրա, իսկ Եվրոպական հանձնաժողովի գործողությունների ծրագիրը կսահմանի այն ձևը, որով Եվրոպական կառույցները կնշակեն և կիրականացնեն հաշմանդամության վերաբերյալ քաղաքականությունները: Եվրոպայի խորհրդի «Սոցիալական միասնականության» նոր ռազմավարությունը (2004 թ.) նախատեսում է հատուկ պարտավորվածություն իրականացնելու հասարակության այն անհատների և խմբերի իրավունքները, որոնց ավելի շատ է սպառնում խոցելիության և սոցիալական մեկուսացման ռիսկը:

Ի լրումն Եվրոպայում գործող փաստաթղթերի, հաշվի են առնվում նաև Միացյալ ազգերի կազմակերպության «Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման» ստանդարտ կանոնները, Միավորված Ազգերի կողմից ստորագրված մարդու իրավունքների մասին հիմնական համաձայնագրերը, ինչպես նաև Միավորված Ազգերի «Հաշմանդամների իրավունքների մասին» միջազգային կոնվենցիայի նախագծի շուրջ տեղի ունեցող զարգացումները:

2.5. Ռազմավարական նպատակները

Սույն գործողությունների ծրագրի գլխավոր խնդիրն է հասնել հասարակության կյանքում հաշմանդամների լիարժեք մասնակցությանը և համակարգել հաշմանդամության հետ կապված հարցերը քաղաքականությունների բոլոր ուղղություններում:

Ծրագիրն իրենից ներկայացնում է հատուկ առաջարկությունների համապարփակ փաթեթ, որոնք բավարար չափով ճկուն են և յուրաքանչյուր երկիր կարող է դրանք փոփոխել՝ ելնելով իր բնորոշ առանձնահատկություններից: Ծրագրում հաշվի է առնվել անդամ-պետությունների աշխարհագրական, տնտեսական, մշակութային և սոցիալական բազմազանությունը, ինչպես նաև տարբեր անդամ-պետություններում տեղի ունեցող անցումային գործընթացները: Այն կոչված է ծառայելու որպես հատուկ գործիք, ուղեցույց քաղաքականություն ձևավորողների համար՝ հնարավորություն տալով վերջիններիս մշակելու և իրականացնելու համապատասխան ռազմավարություններ, որոնք հիմնվում են գերակա առաջնահերթությունների վրա:

Ծրագիրը կօգնի ինչպես այն երկրներին, որոնք պատրաստվում են ընդունել հաշմանդամ քաղաքացիների ինտեգրման ազգային գործողությունների առաջին ծրագիրը, այնպես էլ այն երկրներին, որոնք արդեն ունեն նման քաղաքականություններ ու ծրագրեր:

Ծրագիրը կօգնի անդամ-պետություններին ամրապնդել այն ակտիվ քաղաքականությունները, որոնք ուղղված են խտրականության բացառմանը, հավասար հնարավորությունների իրավունքի ապահովմանը և նախատեսում են արդյունավետ ուղղիչ միջոցներ այն դեպքերում, երբ նշված իրավունքը ոտնահարվում է:

Ծրագիրը խրախուսում է անդամ-պետություններին արձագանքելու հաշմանդամների կարիքներին որակյալ և նորարարական ծառայություններ տրամադրելու և իրականացվող միջոցառումները համախմբելու միջոցով:

Այն ծառայում է որպես խրախուսման աղբյուր մասնավոր ընկերությունների, հասարակական կազմակերպությունների և այլ միջազգային կառույցների համար:

Ի վերջո, ամենակարևորն այն է, որ Գործողությունների ծրագիրը խթանում է այն առանցքային գաղափարը, որ հաշմանդամների և նրանց ներկայացուցիչների կարծիքները պետք է հաշվի առնվեն այն որոշումների կայացման գործընթացներում, որոնք ազդում են նրանց կյանքի վրա՝ սկսած ազգային քաղականության մշակումից ընդհուպ մինչև առանձին կոնկրետ հարցերը:

Գործողությունների ծրագրի իրականացումը պետք է պարբերաբար գնահատվի՝ առաջընթացը որոշելու և լավագույն փորձը փոխանակելու համար: Սրա համար կպահանջվեն արդյունավետ ու գործնականում կիրառելի մեխանիզմներ, որոնք թույլ կտան հետևել գործողությունների իրականացման ընթացքին և գնահատել արդյունքները ազգային մակարդակով:

2.6. Կառուցվածքը և բովանդակությունը

Գործողությունների ծրագրի շրջանակները լայն են և ընդգրկում են հաշմանդամների կյանքի բոլոր հիմնական ոլորտները, օրինակ՝ ապրուստի պայմանները, կրթությունը, զբաղվածությունը, շարժունակությունը և իրազեկումը: Այս առանցքային ոլորտներն իրենց արտացոլումն են գտել ծրագրի գործողությունների ուղղություններում:

Ծրագիրը ներառում է նաև տարաբնույթ հարցեր, ինչպիսիք են հաշմանդամ աղջիկների ու կանանց, երեխաների ու երիտասարդների, տարեց հաշմանդամների, մեծապես խնամքի կարիք ունեցող հաշմանդամների, փոքրամասնությունների և ներգաղթածների խմբերին պատկանող հաշմանդամների հետ կապված հարցերը:

Գործողությունների ծրագրում հաշվի են առնվել եվրոպական ու միջազգային գործող համապատասխան համաձայնագրերը, փաստաթղթերը, ծրագրերը և «Հաշմանդամների իրավունքների մասին» Միավորված Ազգերի միջազգային կոնվենցիայի նախագծի շուրջ տեղի ունեցող զարգացումները:

Սույն գործողությունների ծրագրի գերակայող հիմնարար սկզբունքներն են հաշմանդամների նկատմամբ խտրական վերաբերմունքի բացառումը, հավասար հնարավորությունները, ինքնուրույնությունը և լիարժեք մասնակցությունը:

Գործողությունների ծրագրի հանգուցային տարրերն են համապարփակ և հիմնարար սկզբունքները, հիմնական գործողությունների ուղղությունները, համակողմանի հարցերը, իրականացման և հսկողության մեխանիզմները, փուլային իրականացման գործընթացը, և Գործողությունների ծրագիրը կառուցված է դրանց հիման վրա:

Գործողությունների ծրագրում չի տրվում հաշմանդամության սահմանումը, քանի որ հանձնախումբը գտնում է, որ սա առանձին անդամ-պետությունների և նրանց ազգային քաղաքականության խնդիրն է:

Գործողությունների ծրագրում չեն ներառվել նաև հաշմանդամության կանխմանն ուղղված գործողությունները: Սա մի հարց է, որը կարևոր է և՛ հաշմանդամ, և՛ ոչ հաշմանդամ մարդկանց ու կառավարությունների համար, քանի որ հաշմանդամության հետևանքները ազդում են անհատի, ընտանիքի և ընդհանուր առմամբ, հասարակության վրա: Հիմնվելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Աշխատունակության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման վրա (ԱՄԴ)¹ Գործողությունների ծրագիրը նախատեսում է քայլեր աշխատունակության սահմանափակումների և մասնակցության խոչընդոտների կանխման ուղղությամբ: Այսպիսով, Գործողությունների ծրագիրը որպես հիմք է ընդունում ԱՄԴ-ը և խրախուսում անդամ-պետություններին կիրառելու այն որպես միասնական դասակարգման համակարգ:

Հանձնախմբի կարծիքով, բուժման և հաշմանդամության վաղ բացահայտման մեջ տեղի ունեցող շարունակական բարելավումների, ինչպես նաև հանրային առողջապահության քաղաքականությունների զարգացման հարցերով պետք է զբաղվեն Եվրոպայի խորհրդի համապատասխան հանձնաժողովները:

Հաշմանդամության գործողությունների ծրագրում ճանաչվում է այն սկզբունքը, որ հասարակությունն իր բոլոր քաղաքացիների նկատմամբ պատասխանատու է այն բանի համար, որ հաշմանդամության հետևանքները նվազեցվեն առողջ ապրելակերպի, առավել անվտանգ միջավայրի, համարժեք առողջապահության, վերականգնողական աշխատանքների ապահովման և համայնքների աջակցության միջոցով:

Այս հարցերը կարգավորվում են տարբեր ուղղությունների գործողություններով, սակայն դրանք գլխավորապես իրենց արտացոլումն են գտել առողջապահության և վերականգնողական աշխատանքներին ուղղված քայլերում:

2.7. Հիմնարար սկզբունքները

Գործողությունների ծրագրի հիմքում ընկած հիմնարար սկզբունքներն են.

- խտրականության բացառումը,
- հավասար հնարավորությունները,
- բոլոր հաշմանդամների լիարժեք մասնակցությունը հասարակության կյանքում,
- տարբերության նկատմամբ հարգանքը և հաշմանդամությունը որպես մարդկային բազմազանության տարր ճանաչումը,

¹ ԺՆԼ, 2001 թ.

- արժանապատվությունը և անձնական ինքնուրույնությունը, ներառյալ սեփական ընտրություն կատարելու ազատությունը,
- տղամարդկանց և կանանց միջև հավասարությունը,
- ներկայացուցչական կազմակերպությունների միջոցով հաշմանդամների մասնակցությունը բոլոր այն որոշումների կայացման մեջ, որոնք ազդում են նրանց կյանքի վրա ինչպես անհատի, այնպես էլ ողջ հասարակության մակարդակով:

2.8. Ընթացակարգը

Գործողությունների ծրագրի մշակման աշխատանքները սկսվել են 2003 թ հոկտեմբերին, Հաշմանդամների վերականգնման և ինտեգրման հանձնաժողովի նիստում (Մասնակի համաձայնագիր): Աշխատանքները դյուրինացնելու նպատակով ստեղծվել է Գործողությունների ծրագրի մշակման աշխատանքային խումբ, որին աջակցել է ժամանակավոր խումբը:

Գործողությունների ծրագրում ամրագրվում է հաշմանդամների հասարակական կազմակերպությունների՝ որպես փորձագիտական գիտելիքների աղբյուրի, դերը, և քաղաքականության մշակման խնդրում նրանք դիտվում են որպես լիիրավ գործընկերներ: Հետևաբար, Հաշմանդամների եվրոպական համաժողովը, որտեղ ներկայացված են հաշմանդամների կազմակերպությունները, կարևոր ու ակտիվ դեր է ունեցել Հաշմանդամության վերաբերյալ եվրոպայի խորհրդի գործողությունների ծրագրի մշակման մեջ:

Իրազեկման բարձրացումն ու Գործողությունների ծրագրի իրականացումն ապահովելու համար քննարկումներ են տեղի ունեցել եվրոպայի խորհրդի բոլոր համապատասխան մարմինների և հանձնաժողովների հետ:

3. Գործողությունների հիմնական ուղղությունները

Գործողությունների ծրագրում նկարագրվում են կոնկրետ գործողությունները, որոնք պետք է իրականացվեն քաղաքականությունների ոլորտների լայն համատեքստում: Դրանք համադրելու դեպքում հնարավոր է ապահովել համապարփակ դաշտ հաշմանդամների վերաբերյալ ազգային քաղաքականություններ ու ռազմավարություններ մշակելու և իրականացնելու համար, ինչպես նաև համաձայնեցնել քաղաքականությունները՝ նպատակ հետապնդելով նպաստել հասարակության կյանքում հաշմանդամների լիարժեք մասնակցությանը:

Գործողության ուղղությունները հիմնվում են «Առաջընթաց որպես քաղաքացիներ հաշմանդամների լիարժեք մասնակցության ուղով» նախարարների հռչակագիրը՝ ընդունված 2003 թվականի մայիսին Մալագայում (Իսպանիա) կայացած Երկրորդ եվրոպական կոնֆերանսում, որին մասնակցել են հաշմանդամների ինտեգրման համար պատասխանատու նախարարները: Գործողությունների ուղղությունները հիմնվում են նաև հաշմանդամների և, ընդհանուր առմամբ, եվրոպայում տեղի ունեցող զարգացումների ուղղությամբ համապարփակ քաղաքականության մասին եվրոպայի խորհրդի թիվ (92) 6 հանձնարարականի վրա:

Գործողության յուրաքանչյուր ուղղություն սահմանում է հետևյալ ոլորտներում անդամ-պետությունների կողմից իրագործվելիք հիմնական նպատակները և կոնկրետ գործողությունները.

- թիվ 1. Մասնակցություն քաղաքական և հասարակական կյանքում
- թիվ 2. Մասնակցություն մշակութային կյանքում
- թիվ 3. Տեղեկատվություն և հաղորդակցություն
- թիվ 4. Կրթություն
- թիվ 5. Զբաղվածություն, մասնագիտական ուղղորդում և ուսուցում
- թիվ 6. Կառուցված միջավայր
- թիվ 7. Տրանսպորտ

- թիվ 8. Համայնքային կյանք
- թիվ 9. Առողջապահություն
- թիվ 10. Վերականգնում
- թիվ 11. Սոցիալական պաշտպանություն
- թիվ 12. Իրավական պաշտպանություն
- թիվ 13. Պաշտպանություն բռնության և շահագործման դրսևորումներից
- թիվ 14. Գիտահետազոտական աշխատանքներ
- թիվ 15. Իրազեկության բարձրացում:

3.1. Գործողության ուղղություն թիվ 1. Մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքում

3.1.1. Ներածություն

Քաղաքական և հասարակական կյանքում բոլոր քաղաքացիների մասնակցությունը և ժողովրդավարական գործընթացները էական նշանակություն ունեն ժողովրդավարական հասարակության զարգացման ու պահպանման համար: Հասարակությունը պետք է արտացոլի իր քաղաքացիների բազմազանությունը և օգուտ քաղի իրարից տարբերվող փորձառություններից և գիտալիքներից: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ հաշմանդամները կարողանան իրականացնել քվեարկելու և նման աշխատանքներում մասնակցելու իրենց իրավունքը:

Անհրաժեշտ է ջանքեր գործադրել այնպիսի միջավայր ստեղծելու ուղղությամբ, որտեղ հաշմանդամներն ի վիճակի են մասնակցելու տեղական, տարածաշրջանային և միջազգային քաղաքական կյանքում, և որտեղ նման մասնակցությունը խրախուսվում է հասարակության կողմից: Սա հնարավոր է ապահովել միայն այն դեպքում, երբ յուրաքանչյուր քաղաքացու համար ստեղծվեն պայմաններ իր քաղաքական իրավունքներն իրականացնելու համար:

Հարկ է նշել, որ կանայք և երիտասարդները, ընդհանուր առմամբ, քիչ են մասնակցում ներկայացուցչական կազմակերպություններում: Այս առումով կարևոր է խրախուսել նրանց մասնակցությունը և ներգրավումը ներկայացուցչական խմբերում:

3.1.2. Նպատակները

- i. Ակտիվորեն նպաստել այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ հաշմանդամները կարող են հավասար հիմունքներով անդամակցել քաղաքական կուսակցություններին և մասնակցել քաղաքացիական հասարակության կյանքում,
- ii. հասարակության բազմազանությունն արտացոլելու համար ընդլայնել հաշմանդամների մասնակցությունը քաղաքական ու հասարակական կյանքում բոլոր մակարդակներում (տեղական, տարածաշրջանային, ազգային և միջազգային),
- iii. աշխատել խրախուսել հաշմանդամ կանանց ու երիտասարդների, մեծապես աջակցության կարիք ունեցող հաշմանդամ մարդկանց մասնակցությունը քաղաքական բնագավառում բոլոր մակարդակներում,
- iv. ապահովել այն, որ հաշվի առնվեն հաշմանդամների և նրանց ներկայացուցչական կազմակերպությունների կարծիքները և նրանք իրենց դերակատարումն ունենան հաշմանդամների վերաբերյալ քաղաքականությունների ձևավորման մեջ:

3.1.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

- i. Ապահովել այն, որ քվեարկության կարգը և տարածքային հարմարությունները մատչելի լինեն հաշմանդամներին, ինչը թույլ կտա նրանց օգտվելու իրենց ժողովրդավարական իրավունքներից և, անհրաժեշտության դեպքում, քվեարկելու ժամանակ ստանալ աջակցություն,
- ii. պաշտպանել հաշմանդամների՝ գաղտնի քվեարկությամբ իրենց ձայնը տալու իրավունքը և, անհրաժեշտության դեպքում, հաշմանդամների պահանջով թույլ տալ իրենց նշանակած անձի միջոցով քվեարկումը,
- iii. ապահովել այն, որ ոչ մի հաշմանդամ չզրկվի ընտրելու կամ ընտրվելու իր իրավունքից հաշմանդամության պատճառով,
- iv. ապահովել այն, որ ընտրությունների մասին տեղեկատվությունը բոլոր անհրաժեշտ այլընտրանքային ձևաչափերով մատչելի ու մատչելի, ինչպես նաև դյուրըմբռնելի լինի
- v. խրախուսել քաղաքական կուսակցություններին և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպություններին, որպեսզի վերջիններս տրամադրեն իրենց մասին տեղեկատվությունը հանրությանը, ինչպես նաև կազմակերպեն հանրության հետ հանդիպումներն այնպես, որ դրանք մատչելի լինեն հաշմանդամների համար,
- vi. խրախուսել, որ հաշմանդամները, հատկապես հաշմանդամ կանայք ու երիտասարդները ստեղծեն իրենց ներկայացուցչական կազմակերպությունները տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակներում և անդամակցեն դրանց, ինչը թույլ կտա հաշմանդամներին բոլոր մակարդակներում իրենց ավանդը ներդնելու քաղաքականություններում և ազդելու դրանց վրա,
- vii. խրախուսել որոշումների կայացման ժողովրդավարական գործընթացում հաշմանդամների և նրանց կազմակերպությունների հետ քննարկումները այլ քաղաքացիների հետ հավասար հիմունքով,
- viii. իրականացնել համապատասխան դրույթները, որոնք ներառված են Նախարարների հանձնախմբի՝ տեղական հասարակական կյանքում հաշմանդամների մասնակցության մասին անդամ-պետություններին ուղղված Հանձնարարական (2001)19-ը, քաղաքական և պետական որոշումների կայացման մեջ կանանց ու տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին անդամ-պետություններին ուղղված Հանձնարարական (2003)3-ում, էլեկտրոնային քվեարկման իրավական, գործառնական և տեխնիկական ստանդարտների մասին Հանձնարարական (2004)11-ում և էլեկտրոնային կառավարման մասին հանձնարարական (2004)15-ում:

3.2. Գործողության ուղղություն թիվ 2. Մասնակցությունը մշակութային կյանքում

3.2.1. Ներածություն

Ըրպես անհատ հասարակությանն ամբողջապես ինտեգրվելու հաշմանդամների իրավունքը կախված է տվյալ հասարակության մշակութային կյանքում մասնակցություն ունենալու նրանց ունակությունից: Հաշմանդամների ինքնուրույնության համար անհրաժեշտ է, որ նրանք ապրեն հնարավորինս լիարժեք կյանքով՝ շփվելով հասարակության այլ անդամների հետ (լինեն նրանք հաշմանդամ կամ ոչ հաշմանդամ): Նրանք իրավունք ունեն մասնակցելու մշակութային, հանգստի, սպորտային և զբոսաշրջային կյանքում:

Եվրոպայի խորհուրդը և նրա անդամ-պետությունները պարտավորվել են մշակութային քաղաքականության ձևավորման և իրականացման ժամանակ հաշվի առնել հաշմանդամների

իրավունքները: Եռանդուն ջանքեր են պահանջվում արվեստի բնագավառում և սոցիալական կյանքում մասնակցության միջոցով հաշմանդամների հնարավորությունները և կյանքի որակը փոխակերպելու համար:

Դյուրին չէ այս նպատակի իրագործումը: Կարող են կիրառվել տարբեր միջոցներ, սակայն նախևառաջ անհրաժեշտ է ընդունել հատուկ օրենսդրություն: Վերջինս պետք է արտացոլի «խելամիտ փոփոխությունների կատարում» հասկացությունը, հատկապես ավելի հին շենքեր, պատմական հուշարձաններ, մասնավոր փոքր ձեռնարկությունների շենքային տարածքներ մուտք գործելու հնարավորության համատեքստում: Նշված օրենսդրությամբ կպահանջվի նաև հեռարձակող լրատվամիջոցներում հասարակության բազմազանության ամբողջական լուսաբանում:

3.2.2. Նպատակները

i. Նախաձեռնել համապատասխան միջոցառումներ՝ ուղղված հաշմանդամների համար տեղական, տարածաշրջանային և ազգային մշակութային կյանքում մասնակցության հնարավորության ապահովմանը,

ii. ապահովել այն, որ հաշմանդամները կարողանան մասնակցել մշակութային, հանգստի, զվարճանքի, սպորտային և սոցիալական միջոցառումներին ինչպես դիտորդի, այնպես էլ անմիջական մասնակցի կարգավիճակով,

iii. աշխատել ապահովել այն, որ հաշմանդամները կարողանան զարգացնել և կիրառել իրենց ստեղծագործական, մարզական, հոգևոր և մտավոր ներուժն ի շահ իրենց համայնքի և սեփական նպատակների:

3.2.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

i. Խրախուսել տեղական, տարածաշրջանային և ազգային հաստատություններին և համապատասխան մարմիններին, որպեսզի վերջիններս հաշմանդամների համար մատչելի դարձնեն գրականությունը և մշակութային տեղեկատվություն պարունակող այլ նյութերը պարզ ու հասկանալի լեզվով՝ միաժամանակ բոլոր հնարավոր դեպքերում ողջ ծավալով օգտագործելով էլեկտրոնային տեխնոլոգիան,

ii. պարտադրել պետական հիմնարկներին և խրախուսել մասնավոր հաստատություններին, համապատասխան մարմիններին և մատակարարներին հաշմանդամներին ակտիվորեն ներգրավելու իրենց մշակութային, հանգստի, սպորտային, հոգևոր և մտավոր աշխատանքներում,

iii. Խրախուսել հեռարձակող կազմակերպություններին և հարակից ստեղծագործական բնագավառների հաստատություններին, որպեսզի ապահովել այն, որ հաշմանդամները կարողանան մատչելի ձևով օգտվել հեռարձակող նյութերից, ֆիլմերից, թատերական ներկայացումներից և արվեստի հետ կապված այլ գործունեության արդյունքներից, որոնք կարող են ուղեկցվել սուրդոթարգմանությամբ, ձայնային նկարագրությամբ և տիտրերով,

iv. պարտադրել հեռարձակող ազգային կազմակերպություններին և հարակից ստեղծագործական բնագավառների հաստատություններին, որպեսզի վերջիններս իրատարակեն իրենց Գործողությունների ծրագրերը՝ ուղղված հաշմանդամների աշխատանքի ընդունման դեպքերի թվի աճին ինչպես «տեսախցիկի / բարձրախոսի առջև, այնպես էլ դրա հետևում»,

v. Խրախուսել մշակույթի, սպորտի, զվարճանքի և զբոսաշրջության բնագավառներում գործունեություն իրականացնող և դրանց հարցերով զբաղվող համապատասխան մարմիններին

պարբերաբար անցկացնելու հաշմանդամության մասին իրազեկմանը նվիրված ուսուցում իրենց աշխատողների համար,

vi. հնարավորություն տալ հաշմանդամներին մասնակցելու մշակույթի, սպորտի, զբոսաշրջության և զվարճանքի միջոցառումներին, օրինակ՝ ցանկացած անհրաժեշտ միջոցներով միջոցառումների կազմակերպիչների շենքային տարածքները և ծառայությունները հաշմանդամների համար մատչելի դարձնելու միջոցով,

vii. նախաձեռնել համապատասխան քայլեր, որպեսզի.

- ապահովել այն, որ մտավոր սեփականության պաշտպանության մասին օրենքները չհանդիսանան չհիմնավորված կամ խտրական արգելապատնեշ հաշմանդամների կողմից մշակութային նյութերից օգտվելու համար՝ միաժամանակ պահպանելով համապատասխանությունը միջազգային իրավունքի դրույթների հետ,
- ապահովել այն, որ հաշմանդամները հնարավորություն ունենան ստանալ արվեստագետի կարգավիճակ և օգուտ քաղեն իրենց ստեղծագործական կապիտալից,

viii. խրախուսել հաշմանդամներին մասնակցելու ցանկացած աշխատանքներում, անկախ նրանից, թե դրանք նախատեսված են հաշմանդամ, թե ոչ հաշմանդամ մարդկանց համար,

ix. ապահովել այն, որ սպորտային և մշակութային միջոցառումները կազմեն հաշմանդամ երեխաների համար նախատեսվող կրթական ծրագրերի անբաժանելի մասը՝ գնահատելով նման միջոցառումների նշանակությունը սոցիալական հմտությունների զարգացման խնդրում:

3.3. *Գործողության ուղղություն թիվ 3. Տեղեկատվությունը և հաղորդակցությունը*

3.3.1. *Ներածություն*

Տեղեկատվության և հաղորդակցության միջոցներից օգտվելու հնարավորությունը հասարակության կյանքում մասնակացության կարևոր նախադրյալներից մեկն է: Իրենց իրավունքներից ակտիվորեն օգտվելու և սեփական ընտրություններ կատարելու համար չափազանց կարևոր է, որ հաշմանդամները կարողանան հաղորդակցման համարժեք համակարգերի միջոցով օգտվել տեղեկատվությունից: Ինչևէ, շատ հաշմանդամների համար տեղեկատվությունը և հաղորդակցության միջոցները դեռևս մեծապես անմատչելի են:

Տեղեկատվության և հաղորդակցությունների համակարգերում տեղի ունեցող շարունակական զարգացումների շնորհիվ փոխվում են այն ձևերն ու եղանակները, որոնցով քաղաքացիները շփվում են միմյանց հետ, վարում իրենց բիզնեսը, օգտվում ծառայություններից և, ընդհանրապես, տեղեկատվությունից ու հաղորդակցության միջոցներից: Տեխնոլոգիական զարգացումները ներառում են ինտերնետը, էլ-հաղորդակցման միջոցները, տեսախոսները և այլն: Կարևոր է, որ բոլոր քաղաքացիները, այդ թվում հաշմանդամները, օգուտ քաղեն նշված զարգացումներից:

Պետական մարմինները հատուկ պատասխանատվություն են կրում նրա համար, որ իրենց տեղեկատվությունը տարբեր ձևաչափերով մատչելի լինի քաղաքացիների համար՝ արձագանքելով հաշմանդամների բազմատեսակ կարիքներին: Նշված մարմինները պետք է որպես լավագույն օրինակ ծառայեն մասնավոր հատվածի, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր ծառայություններ են մատուցում հաշմանդամներին:

Հաղորդակցման համակարգերը նույնպես պետք է մատչելի լինեն հաշմանդամներին: Արդեն գոյություն ունեն նման համակարգերի լավ օրինակներ, ինչպիսիք են հեռախոսային ռեչե համակարգերը կամ տեքստային և տեսահաղորդակցման համակարգերը:

Հաղորդակցման և տեղեկատվական նոր համակարգերի նախագծման և դրանց վերաբերյալ ստանդարտների մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հաշմանդամ մարդկանց կարծիքները:

Իրականում, միասնական հասարակության հասնելու համար անհրաժեշտ է, որ հաշմանդամները կարողանան մյուս բոլոր քաղաքացիների նման օգտվել տեղեկատվական և հաղորդակցությունների համակարգերից:

3.3.2. Նպատակները

- i. Նախաձեռնել համապատասխան միջոցառումներ՝ ուղղված հասարակության այլ անդամների հետ հավասար հիմունքներով հաշմանդամների կողմից տեղեկատվություն որոնելու, ստանալու և հաղորդելու ապահովմանը,
- ii. լավագույնս օգտագործել նոր տեխնոլոգիաները՝ կենսագործունեության բոլոր ոլորտներում հաշմանդամների ինքնուրույնությունը և մյուս մարդկանց հետ շփվելու հնարավորությունը ընդլայնելու նպատակով:

3.3.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

- i. Ձգտել մատչելի ձևաչափերով և տեխնոլոգիաներով հաշմանդամներին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն՝ հաշվի առնելով տարբեր տեսակների հաշմանդամություն ունեցող մարդկանց կարիքները (օրինակ՝ Բրայլի տառաձևերի, լսատրոհների կամ դյուրընթեռնելի տարբերակների կիրառում),
- ii. իրականացել ուսուցում և այլ աշխատանքներ՝ նպատակ հետապնդելով խրախուսել հաշմանդամների կողմից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը,
- iii. ապահովել այն, որ էլ-ուսուցման բոլոր նյութերը մատչելի լինեն հաշմանդամների համար՝ պահպանելով համապատասխանությունը մատչելիության մասին գործող ստանդարտների հետ,
- iv. ընդունել, որ հաշմանդամները կարող են օգտվել ժեստերի լեզվից, Բրայլի տառաձևերից և հաղորդակցման այլընտրանքային միջոցներից ու եղանակներից, ինչպես նաև ձգտել դրանք հնարավորինս համապատասխանեցնել պաշտոնական շփման ձևերին ու եղանակներին: Հանդիպումների և համաժողովների ժամանակ տեղի ունեցածի բովանդակությունը պետք է հաշմանդամի խնդրանքով համառոտ ու պարզ տեքստով ներկայացվի նրան,
- v. նոր տեխնոլոգիաների, օրինակ՝ տեքստային հաղորդակցման, միջոցով հաղորդակցման համակարգերն առավել մատչելի դարձնել հաշմանդամների համար,
- vi. ապահովել այն, որ պետական իշխանությունները և այլ պետական մարմինները տեղեկատվությունը մատչելի դարձնեն հաշմանդամների համար, ներառյալ նրանց ինտերնետային կայքերը, որոնք պետք է համապատասխանեն մատչելիության գործող միջազգային ուղեցույցներին,
- vii. խրախուսել բոլոր մասնավոր կազմակերպություններին, հատկապես նրանց, որոնք ստանում են պետական ֆինանսավորում, մատչելի դարձնելու իրենց տեղեկատվությունը և հաղորդակցությունները հաշմանդամների համար,
- viii. խրախուսել տեղեկատվության և հաղորդակցության մեջ աջակցող տեխնոլոգիաների մշակումը, արտադրությունը և բաշխումը,

- ix. խթանել տեղեկատվական և հաղորդակցությունների բոլոր նոր տեխնոլոգիաների մշակմանը վերաբերող նախագծման միասնական սկզբունքների հետ համապատասխանությունը,
- x. իրականացնել «Ինտեգրման նոր տեխնոլոգիաների միջոցով դեպի հաշմանդամների լիիրավ քաղաքացիությունը» որոշում թիվ (2001)3-ը:

3.4. Գործողության ուղղություն թիվ 4. Կրթությունը

3.4.1. Ներածություն

Բոլոր մարդկանց, այդ թվում հաշմանդամների սոցիալական ներառման և ինքնուրույնության ապահովման խնդրում կրթությունը հիմնարար գործոններից մեկն է: Սոցիալական ազդեցությունը, որը գալիս է, օրինակ՝ ընտանիքներից և ընկերական շրջապատից, նույնպես կարևոր գործոն է, սակայն գործողության սույն ուղղության իմաստով կրթությունը ներառում է մարդու կյանքի բոլոր փուլերը, այդ թվում նախադպրոցական, տարրական, միջնակարգ, բարձրագույն և մասնագիտական կրթությունը, ինչպես նաև կյանքի ողջ տևողությամբ ընթացող ուսուցումը: Հիմնական կրթություն ստանալու հնարավորությունների ստեղծումը ոչ միայն նպաստավոր է իրենց իսկ հաշմանդամների համար, այլ նաև թույլ է տալիս հասարակության ոչ հաշմանդամ քաղաքացիներին ըմբռնել մարդկային բազմազանությունը: Կրթական համակարգերի մեծ մասը հաշմանդամներին տալիս է հիմնական և մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն: Անհրաժեշտ է խրախուսել հիմնական և մասնագիտական կրթական հաստատություններին, որպեսզի վերջիններս աշխատեն միասին՝ տեղական համայնքներում հաշմանդամներին օժանդակելու ուղղությամբ, սակայն այս աշխատանքը պետք է համահունչ լինի ամբողջական ինտեգրման նպատակին:

3.4.2. Նպատակները

- i. Ապահովել, որ բոլոր մարդիկ, անկախ իրենց հաշմանդամության բնույթից և աստիճանից, ունենան կրթություն ստանալու հավասար հնարավորություն, ինչպես նաև լիովին զարգացնեն իրենց անհատականությունը, տաղանդը, մտավոր ու ֆիզիկական ունակությունները,
- ii. ապահովել, որ հաշմանդամները հնարավորություն ունենան իրենց տեղը գտնել հիմնական կրթության համակարգում՝ համապատասխան մարմիններին խրախուսելով զարգացնելու իրենց ուսումնական հարմարություններ, որոնք կբավարարեն հաշմանդամ բնակչության կարիքները,
- iii. աջակցել և խթանել բոլոր տարիքի հաշմանդամների համար ուսուցումը կյանքի ողջ ընթացքում, ինչպես նաև դյուրինացնել արդյունավետ և էֆեկտիվ անցումը ուսուցման մի փուլից մյուսը, ինչպես նաև անցումը ուսուցումից դեպի աշխատանքային կյանք,
- iv. կրթական համակարգի բոլոր մակարդակներում, այդ թվում բոլոր տարիքի երեխաների շրջանում, զարգացնել հարգալից վերաբերմունք հաշմանդամների իրավունքների նկատմամբ:

3.4.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

i. Կատարելագործել օրենսդրությունը, քաղաքականությունները և ծրագրերը՝ ուղղված հաշմանդամ երեխաների, երիտասարդների և չափահասների նկատմամբ խտրականության դրսևորումների կանխմանը՝ սկսած վաղ տարիքում կրթություն ստանալու բոլոր փուլերից մինչև չափահասությունը: Այս ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում, հաշվի առնել հաշմանդամ օգտագործողների, ծնողների, խնամողների, կամավոր կազմակերպությունների և մասնագիտական այլ համապատասխան մարմինների կարծիքները,

- ii. խրախուսել միասնական կրթական համակարգի զարգացումը և աջակցել դրան, ներառյալ հիմնական և մասնագիտական կրթությունը, որը նպաստում է փորձի փոխանակմանը և հաշմանդամ երեխաների, երիտասարդների և չափահասների ավելի լայն ինտեգրմանը համայնքի կյանքում,
- iii. հնարավորություն ստեղծել հաշմանդամ երեխաների, երիտասարդների և չափահասների հատուկ կրթական կարիքների վաղ գնահատման համար, որի արդյունքները հաշվի կառնվեն նրանց ուսուցման ծրագրման ժամանակ,
- iv. հետևել անհատական կրթական ծրագրերի իրականացմանը և խթանել ուսուցման համակարգված մոտեցման կիրառումը՝ ընդհուպ մինչև հաշմանդամի աշխատանքի տեղավորվելը,
- v. ապահովել այն, որ հաշմանդամները, այդ թվում հաշմանդամ երեխաները, ստանան պահանջվող աջակցությունը հիմնական կրթական համակարգում, ինչպես նաև նպաստել նրանց արդյունավետ ուսուցմանը: Բացառիկ դեպքերում, երբ հիմնական կրթական համակարգը չի բավարարում փորձագիտորեն գնահատված նրանց կրթական կարիքները, անդամ-պետությունները պետք է ապահովեն այն, որ ամբողջական ինտեգրման նպատակին համահունչ նախաձեռնվեն աջակցության այլընտրանքային միջոցառումները: Հատուկ և հիմնական բոլոր ուսուցման դասընթացները պետք է խրախուսեն անցումը դեպի հիմնական կրթական համակարգին և հիմնվեն միևնույն նպատակների ու ստանդարտների վրա,
- vi. խրախուսել կրթական բոլոր ոլորտներում աշխատող մասնագետների սկզբնական և շարունակական ուսուցման զարգացումը՝ դրանում ներառելով հաշմանդամության մասին իրազեկումը և, անհրաժեշտության դեպքում, հաշմանդամ աշակերտներին և ուսանողներին աջակցելու համար դասավանդման համապատասխան մեթոդների ու նյութերի կիրառումը,
- vii. ապահովել այն, որ ընդհանուր կրթական համակարգում կիրառվող ուսումնական բոլոր նյութերն ու ծրագրերը մատչելի լինեն հաշմանդամների համար,
- viii. քաղաքացիական դաստիարակության դպրոցական ծրագրերում ներառել առարկաներ, որոնք աշակերտների մեջ սերմանում են այն գաղափարը, որ հաշմանդամներն ունեն միևնույն իրավունքները, ինչպես բոլոր այլ քաղաքացիները,
- ix. ապահովել, որ հաշմանդամության մասին իրազեկումը կազմի դպրոցական և բուհական ուսումնական ծրագրերի կարևոր տարրերից մեկը,
- x. նախաձեռնել քայլեր՝ ուղղված հաշմանդամների համար կրթական և ուսումնական հաստատությունների շենքային տարածքների մատչելիության ապահովմանը, այդ թվում նրանց կարիքները բավարարելու համար անձնական օգնության տրամադրելու և համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով (ներառյալ սարքավորումները),
- xi. ապահովել այն, որ հաշմանդամ երեխաների ծնողները որպես ակտիվ գործընկերներ մասնակցեն իրենց երեխաների համար անհատական ուսումնական ծրագրերի մշակման աշխատանքներին,
- xii. ապահովել ոչ ֆորմալ կրթության մատչելիությունը, որը հաշմանդամ երիտասարդներին թույլ կտա զարգացնելու անհրաժեշտ հմտությունները, եթե դա այլ կերպ հնարավոր չէ ֆորմալ կրթության միջոցով,

xiii. անհրաժեշտության դեպքում քննության առնել էվրոպական սոցիալական խորտիայի (վերանայված տարբերակի) (ETS No. 163), հատկապես 15-րդ հոդվածի ստորագրման և վավերացման հարցը:

3.5. Գործողության ուղղություն թիվ 5. Զբաղվածությունը, մասնագիտական ուղղորդումը և ուսուցումը

3.5.1. Ներածություն

Զբաղվածությունը աշխատանքային տարիքի բոլոր քաղաքացիների սոցիալական ինտեգրման և ինքնուրույնության կարևոր տարրերից մեկն է: Ոչ հաշմանդամների համեմատ հաշմանդամների շրջանում զբաղվածության և տնտեսական ակտիվության ցուցանիշը չափազանց ցածր է: Անհրաժեշտ է դիվերսիֆիկացնել ակտիվության ցուցանիշի աճին ուղղված քաղաքականությունները (ելենելով հաշմանդամների տնտեսական ակտիվության ներուժից), որպեսզի հաղթահարել աշխատուժում նրանց մասնակցությանը խոչընդոտող բոլոր արգելապատնեշները: Հաշմանդամների զբաղվածության մակարդակի բարելավումը շահեկան է ոչ միայն հաշմանդամների, այլ նաև գործատուների և հասարակության համար:

Մասնագիտական ուղղորդումն ու աջակցությունը կարևոր դեր են խաղում մասնագիտական լավագույն կողմնորոշման, ուսուցման կարիքների սահմանման կամ ապագա մասնագիտության ընտրության մեջ: Կենսական նշանակություն ունի այն, որ հաշմանդամները հնարավորություն ունենան ստանալու մասնագիտական ուղղորդում և ուսուցում, որի շնորհիվ նրանք կկարողանան բացահայտել իրենց ներուժը:

Գործողության այս ուղղության նպատակն է հիմքեր ստեղծել զբաղվածության մեջ հաշմանդամների ավելի լայն մասնակցության համար, ապահովել մասնագիտության ընտրությունների կատարումը: Բոլոր միջոցառումները վերաբերում են ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր հատվածների գործատուներին:

Սոցիալական կազմակերպությունները (օրինակ՝ սոցիալական ընկերությունները, կոոպերատիվները) կարող են նպաստել հաշմանդամների շրջանում զբաղվածության աճին՝ աշխատողների բաց հավաքագրման կամ հաշմանդամներին աշխատանքի սեմինարների միջոցով:

3.5.2. Նպատակները

i. Աշխատուժի բաց շուկայում խթանել հաշմանդամների զբաղվածության աճը՝ խտրականության դեմ պայքարի միջոցառումները միավորելով դրական գործողությունների հետ, նպատակ հետապնդելով ապահովելու հավասար հնարավորությունների հաշմանդամների համար,

ii. հաղթահարել խտրականությունը և խթանել հաշմանդամների մասնակցությունը մասնագիտական գնահատման, ուղղորդման, ուսուցման և զբաղվածության հետ կապված ծառայությունների մեջ:

3.5.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

i. Զբաղվածության ընդհանուր քաղաքականություններում համակարգել հաշմանդամների զբաղվածության հետ կապված հարցերը,

ii. ապահովել այն, որ հաշմանդամները հնարավորություն ունենան ստանալու իրենց ունակությունների անհատական և օբյեկտիվ գնահատականը, որի շնորհիվ.

– որոշվում են հնարավոր մասնագիտությունների տարբերակները,

- ուշադրությունն հաշմանդամության գնահատումից ուղղվում է դեպի ունակությունների գնահատումը և դրանց ուղղորդումը աշխատանքային կոնկրետ պահանջներին,
 - հիմքեր են ապահովվում հաշմանդամների մասնագիտական ուսուցման ծրագրի համար,
 - հաշմանդամները կարողանում են փոխել իրենց աշխատանքը կամ գտնել համապատասխան աշխատանք:
- iii. ապահովել այն, որ հաշմանդամները հնարավորություն ունենան ստանալու լավագույն որակի մասնագիտական ուղղորդում, ուսուցում և աշխատանքի տեղավորման ծառայություններ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում իրենց վերաորակավորում,
- iv. զբաղվածության բոլոր փուլերում, այդ թվում աշխատանքի ընդունման ժամանակ, ինչպես նաև աշխատանքային առաջխաղացման հետ կապված բոլոր հարցերում ապահովել հաշմանդամների պաշտպանությունը խտրականության դրսևորումներից,
- v. խրախուսել գործատուներին աշխատանքի ընդունելու հաշմանդամներին`
- կիրառելով աշխատանքի ընդունման այնպիսի ընթացակարգերը (օրինակ` թափուր տեղի մասին հայտարարում, հարցազրույց, թեկնածուի գնահատում և ընտրություն), որոնք ապահովում են հաշմանդամների համար աշխատանքի տեղավորման դրական հնարավորությունները,
 - համապատասխան փոփոխություններ կատարելով աշխատատեղում կամ աշխատանքային պայմաններում, ներառյալ հեռահաղորդակցումը, կես հաստիքով և տանը կատարվող աշխատանք, որպեսզի հարմարավեն հաշմանդամ աշխատողների հատուկ պահանջներին,
 - համապատասխան ուսուցման միջոցով ղեկավարների և աշխատողների շրջանում բարձրացնել հաշմանդամության մասին իրազեկման աստիճանը,
- vi. ապահովել այն, որ ինքնազբաղվածության ապահովմանն ուղղված ընդհանուր ծրագրերն մատչելի և աջակցող լինեն հաշմանդամներին,
- vii. ապահովել այն, որ աջակցության չափանիշները, օրինակ` հովանավորվող կամ օժանդակող զբաղվածությունը, իրականացվեն այն հաշմանդամների համար, որոնց կարիքները հնարավոր չէ առանց կողմնակի աջակցության բավարարել աշխատուժի բաց շուկայում,
- viii. օգնել հաշմանդամներին օժանդակող զբաղվածությունից դեպի աշխատուժի բաց շուկա անցում կատարելու խնդրում,
- ix. հաշմանդամության նպաստների համակարգում վերացնել աշխատանքը չխրախուսող գործոնները և խրախուսել նպաստառուներին աշխատելու, եթե իրենց վիճակը թույլ է տալիս,
- x. կանանց համար աշխատանքի հավասար հնարավորությունների, այդ թվում երեխայի խնամքի վերաբերյալ ծրագրեր և քաղաքականություններ մշակելիս հաշվի առնել հաշմանդամ կանանց կարիքները,
- xi. ապահովել այն, որ մնացած աշխատողների նման հաշմանդամ աշխատողները ևս ունենան հավասար իրավունքներ աշխատանքի պայմանների շուրջ բանակցելու, արհեստակցական միություններին անդամակցելու և ակտիվորեն մասնակցելու առումով,
- xii. իրականացնել արդյունավետ միջոցառումներ` ուղղված հաշմանդամների զբաղվածության խրախուսմանը,
- xiii. ապահովել այն, որ առողջապահության և աշխատանքային անվտանգության մասին օրենսդրական և ենթօրենսդրական ակտերն ներառեն հաշմանդամների կարիքները և չպարունակեն խտրական վերաբերմունք ենթադրող դրույթներ,

xiv. խթանել այն չափորոշիչները, այդ թվում օրենսդրական և ներառական կառավարման բնույթի միջոցառումները, որոնք հնարավորություն են տալիս հաշմանդամ դարձած մարդկանց քանի դեռ աշխատում են մնալ աշխատուժի շուկայում,

xv. ապահովել այն, որ հատկապես երիտասարդ հաշմանդամները օգտվեն աշխատանքային պրակտիկայի և մասնագիտական կատարելագործման գործնական դասընթացներից մասնակցելուց, որպեսզի զարգացնեն իրենց հմտությունները, ինչպես նաև օգտվեն աշխատանքային փորձի մասին տեղեկատվությունից,

xvi. անհրաժեշտության դեպքում քննության առնել Եվրոպական սոցիալական խարտիայի (վերանայված տարբերակ) (ETS No. 163), հատկապես 15-րդ հոդվածի ստորագրման և վավերացման հարցը,

xvii. իրականացնել «Հաշմանդամների մասնագիտական գնահատման խարտիայի» մասին որոշում (95)3-ը:

3.6. Գործողության ուղղություն թիվ 6. Կառուցված միջավայրը

3.6.1. Ներածություն

Համապարփակ նպատակն է ստեղծել հասարակություն բոլորի համար: Մատչելի միջավայրը էական նշանակություն պետք է ունենա առավել ինտեգրված հասարակության ձևավորման մեջ, որտեղ հաշմանդամները կարող են իրենց մասնակցությունն ունենալ ամենօրյա կենսագործունեության մեջ: Կառուցված միջավայրում առկա արգելապատնեշները խոչընդոտում են կամ թույլ չեն տալիս հաշմանդամների նման մասնակցությունը և նրանց հիմնարար իրավունքների իրականացումը: Հաշմանդամների համար միջավայրը մատչելի դարձնելը, անկախ նրանց հաշմանդամության տեսակից, շահեկան է հասարակության բոլոր անդամների համար: Սրա համար անհրաժեշտ է ընթացնել առկա արգելապատնեշները, այդ թվում մարդկային վերաբերմունքը և ֆիզիկական խոչընդոտները, ինչպես նաև պարտավորվել վերացնել դրանք դրական գործողությունների և այլ քայլերի միջոցով: «Միասնական նախագծի մասին» որոշում (2001)1-ը խթանում է կառուցվող միջավայրի ստեղծման վրա աշխատող բոլոր մասնագիտությունների տեր մարդկանց, այդ թվում ճարտարապետներին, ճարտարագետներին, քաղաքի նախագծողներին և բոլոր այլ համապատասխան մասնագետներին ներդնել միասնական նախագծի սկզբունքները: Որոշման նպատակն է նաև կառուցված միջավայրն առավելի մատչելի, օգտագործելի և հասկանալի դարձնելու միջոցով դյուրինացնել բոլոր քաղաքացիների կյանքը:

3.6.2. Նպատակը

Աստիճանաբար ստեղծել մի միջավայր, որը մատչելի է հաշմանդամների համար՝ կիրառելով Միասնական նախագծի սկզբունքները և դրանով իսկ խուսափելու նոր արգելապատնեշների ստեղծումից:

3.6.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

i. Ապահովել այն, որ քաղաքականությունների բոլոր համապատասխան ուղղություններում արտացոլվի կառուցված անարգել միջավայրի ստեղծման համապարփակ նպատակը,

ii. մշակել ուղեցույցներ, ստանդարտներ և, անհրաժեշտության դեպքում, օրենսդրություն, որպեսզի նպաստել նրան, որ հասարակական շենքերը, հասարակական բացօթյա և փակ տարածքները մատչելի և օգտագործելի լինեն հաշմանդամների համար՝ միաժամանակ հաշվի առնելով պատմական շինությունների առանձնակի բնույթը,

iii. ապահովել այն, որ կառուցվող միջավայրում զբաղված բոլոր տեսակի մասնագետներ (օրինակ՝ ճարտարապետներ և քաղաքի նախագծողներ, շինարարության ոլորտի մասնագետներ, մշակութային ժառանգության պահպանման մասնագետներ, մշակութային զբոսաշրջության մասնագետներ) պատրաստող համալսարանները և ինստիտուտները սկզբնական և հետագա ուսուցման ծրագրերի և այլ համապատասխան միջոցառումների միջոցով տարածեն միասնական նախագծի սկզբունքն իրենց ուսանողների շրջանում,

iv. հաշմանդամների համար կառուցված միջավայրը մատչելի դարձնելու և համայնքային կյանքում մասնակցության հավասար հնարավորություններ ընձեռնելու համար խթանել օժանդակող հարմարությունների և տեխնոլոգիական նորարարությունների կիրառումը: Վերջիններս պետք է կիրառել նոր կառուցվող շենքերում և աստիճանաբար ներդնել գոյություն ունեցող շենքերում,

v. աջակցել Միասնական նախագծի գաղափարը խթանող կենտրոնների ստեղծմանը, նշանակմանը և պահպանմանը,

vi. ապահովել այն, որ արտակարգ իրավիճակների և էվակուացման ընթացակարգերը սահմանելիս պատշաճ ուշադրություն դարձվի հաշմանդամների անվտանգությանը,

vii. ապահովել այն, որ մուտքը դեպի շենքերը և հասարակական վայրերը կույրերին ուղեկցող շներով չարգելվի,

viii. իրականացնել «Կառուցվող միջավայրում աշխատող մասնագետների պատրաստման ուսուցողական ծրագրերում Միասնական նախագծի սկզբունքների ներդրման մասին» որոշում (2001)1-ը:

3.7. Գործողության ուղղություն թիվ 7. Տրանսպորտը

3.7.1. Ներածություն

Մատչելի տրանսպորտի վերաբերյալ բոլոր մակարդակներում քաղաքականությունների մշակումն ու իրականացումը կարող է հանգեցնել շատ հաշմանդամների կյանքի որակի զգալի բարելավմանը: Այն կարող է դառնալ հնարավորությունների հավասարության, ինքնուրույն ապրելակերպի, համայնքի սոցիալական ու մշակութային կյանքում ակտիվ մասնակցության, ինչպես նաև զբաղվածության ապահովման նախապայմաններից մեկը:

Շատ անդամ-պետություններին արդեն ծանոթ կլինեն Տրանսպորտի նախարարների Եվրոպական կոնֆերանսի (ՏՆԵԿ) արդյունքում տեղի ունեցած զարգացումները, և նշված համաժողովի կողմից հաստատված սկզբունքներն ու գործողությունները կարող են ուղղորդել անդամ-պետություններին Հաշմանդամության վերաբերյալ գործողությունների ծրագրի իրականացման ժամանակ: Դրա արդյունքում ներդրված մատչելի տրանսպորտային ծառայություններից կօգտվեն այլ օգտագործողներ ևս, այդ թվում տարեց և փոքր երեխաներով երթևեկող ուղևորները:

Հաշմանդամների կողմից հասարակական տրանսպորտից օգտվելն ապահովելու համար չափազանց կարևոր է, որ տրանսպորտային ողջ համակարգը մատչելի լինի նրանց համար:

3.7.2. Նպատակները

i. Մատչելի տրանսպորտային ծառայություններին ուղղված քաղաքականությունների միջոցով խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակության կյանքում,

ii. ապահովել այն, որ մատչելի տրանսպորտային ծառայություններին ուղղված քաղաքականություններն իրականացվեն՝ հաշվի առնելով տարբեր կարգերի հաշմանդամություն ունեցող մարդկանց կարիքները,

iii. նպաստել բոլոր հաշմանդամների համար առկա ուղևորատար տրանսպորտային ծառայությունների մատչելիության աճին, ինչպես նաև ապահովել այն, որ տրանսպորտային բոլոր նոր ծառայությունները և հարակից ենթակառուցվածքները լինեն մատչելի հաշմանդամների համար,

iv. խթանել տրանսպորտի բնագավառում Միասնական նախագծի սկզբունքների իրականացումը:

3.7.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

i. Հաշվի առնել միջազգային մարմինների կազմած և համաձայնեցված առաջարկությունները, հաշվետվությունները և ուղեցույցները, հատկապես ստանդարտների, ուղեմիշների, ռազմավարությունների մշակման առնչությամբ, որպեսզի ապահովել տրանսպորտային ծառայությունների և ենթակառուցվածքների, այդ թվում կառուցված միջավայրի մատչելիությունը,

ii. հետևել և ուսումնասիրել մատչելի տրանսպորտային ծառայություններին վերաբերող քաղաքականությունների իրականացումը,

iii. ապահովել այն, որ հասարակական տրանսպորտային ձեռնարկությունները տրանսպորտային ծառայություններ մատուցող անձանց համար անցկացվող ստանդարտ ուսուցողական դասընթացներում պարտադիր ներառեն հաշմանդամության իրազեկմանը նվիրված ուսուցում,

iv. խթանել մատչելի տրանսպորտային ծառայությունների տրամադրման վերաբերյալ ազգային ուղեցույցների ներդրումը, որոնց պետք է հետևեն ինչպես հասարակական, այնպես էլ մասնավոր տրանսպորտային ձեռնարկությունները,

v. սահմանել ընթացակարգեր համապատասխան շահագրգիռ կողմերի հետ քննարկումների և համագործակցության վերաբերյալ, ներառյալ մասնավորապես համապատասխան պետական մարմինները, ծառայություն մատուցողները և հաշմանդամների շահերը ներկայացնող խմբերը, որպեսզի նրանց տեղեկացնել մատչելի տրանսպորտային ծառայությունների վերաբերյալ քաղաքականությունների մշակման և ծրագրման մասին,

vi. խթանել և խրախուսել մասնավոր տրանսպորտային ձեռնարկությունների կողմից մատչելի ծառայությունների մատուցումը,

vii. ապահովել այն, որ հասարակական տրանսպորտային ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի լինի հնարավորինս բազմատեսակ ձևաչափերով և բազմազան հաղորդակցման համակարգերի միջոցով, որպեսզի նշված տեղեկատվությունը բավարարի հաշմանդամների կարիքները,

viii. խրախուսել նորարարական այն ծրագրերի մշակումը, որոնք հնարավորություն են տալիս հասարակական տրանսպորտից դժվարությամբ օգտվող հաշմանդամներին օգտագործելու իրենց սեփական տրանսպորտային միջոցը,

ix. ապահովել այն, որ հաշմանդամներին ուղեկցող օգնական կենդանիները (օրինակ՝ ուղեկցող շները) տեղավորվեն հասարակական տրանսպորտում,

- x. ապահովել սահմանափակ շարժունակություն ունեցող հաշմանդամների համար ավտոկայանատեղերի տրամադրումն ու պաշտպանվածությունը,
- xi. ուղևորների իրավունքների ընդհանուր հիմնական բովանդակության տեքստեր կազմելիս հաշվի առնել հաշմանդամների հատուկ պահանջները,
- xii. օրենսդրորեն հաշմանդամներին պաշտպանել խտրականության դրսևորումներից տրանսպորտային միջոցներից օգտվելու ժամանակ,
- xiii. ապահովել այն, որ տրանսպորտի անվտանգության նորմերը և արտակարգ իրավիճակների ընթացակարգերը չստեղծեն լրացուցիչ անհավասար պայմաններ հաշմանդամների համար:

3.8. *Գործողության ուղղություն թիվ 8. Կյանքը համայնքում*

3.8.1. *Ներածություն*

Գործողության այս ուղղության առանցքային խնդիրն է հնարավորություն տալ հաշմանդամներին ապրելու հնարավորինս ինքնուրույն կյանքով՝ թույլ տալով նրանց ընտրել իրենց ապրելաձևը և ապրուստի վայրը: Սրա համար պահանջվում են ռազմավարական քաղաքականություններ, որոնք աջակցում են ինստիտուցիոնալ խնամքից անցումը դեպի համայնքներում տեղակայված ապրուստի վայրերը՝ սկսած ինքնուրույն ապրելակերպից մինչև փոքր խմբերով առանձին ինտերնատներում ապրելը: Նշված քաղաքականությունները պետք է լինեն ճկուն: Հաշվի առնելով մեծապես խնամքի կարիք ունեցող հաշմանդամների հատուկ կարիքները՝ դրանք պետք է ներառեն ծրագրեր, որոնք հնարավորություն են տալիս հաշմանդամներին ապրելու իրենց ընտանիքների հետ:

Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր ընտանիքի ամենօրյա կյանքը էապես տարբերվում է մյուս ընտանիքների կյանքից՝ կախված նրանից, թե այնտեղ կա՞ հաշմանդամ երեխա, թե՞ ոչ: Օրինակ՝ անհրաժեշտ է շատ ժամանակ հատկացնել հաշմանդամ երեխայի խնամքին ու դաստիարակմանը, բժշկներին կատարվող այցելություններին և այլն: Երեխան կարիք ունի առավել մեծ հսկողության և աջակցության ինչպես հանգստի, այնպես էլ ամենօրյա կենսական խնդիրների կատարման ժամանակ: Կարևոր է, որ հաշմանդամ երեխաների ծնողները կարողանա անցնել ուսուցում, որը թույլ կտա նրանց ձեռք բերել անհրաժեշտ հմտությունները և երեխայի հետ միասին վարել հնարավորինս նորմալ ապրելակերպ:

Ոչ բոլոր անհատներն են, որ կարող են ապրել լիովին ինքնուրույն կյանքով: Բացառիկ դեպքերում անհրաժեշտ է խրախուսել խնամքի հաստատությունների փոխարեն փոքր կառույցներում խնամքի տրամադրման տարբերակի կիրառումը: Ինքնուրույն ապրելակերպի մեխանիզմը պետք է ենթադրի հաշմանդամների և նրանց ներկայացուցչական կազմակերպությունների ներգրավում:

Համայնքի ներսում ապրող հաշմանդամների կարիքները տարբեր են և պահանջում են տարբեր մակարդակների խնամք, աջակցություն և օժանդակություն: Համապատասխանության թափանցիկ չափանիշները և անհատական անկախ գնահատման ընթացակարգերը, որոնցում հաշվի է առնվում հաշմանդամների սեփական ընտրությունը, կնպաստեն ծառայություններից օգտվելու հավասար հնարավորությունների ընձեռմանը:

Ինքնուրույն կյանքի քաղաքականությունները չեն սահմանափակվում միայն ինքնուրույն ապրելակերպով, այլ հիմնվում են նաև լայն շրջանակների ծառայությունների, այդ թվում տրանսպորտի մատչելիության վրա: Նշված քաղաքականությունների հաջող իրականացման համար անհրաժեշտ է հիմնական ծառայությունների ծրագրման, մշակման և տրամադրման

ժամանակ կիրառել համաձայնեցված մոտեցում, որպեսզի ապահովվել այն, որ նշված ծառայությունները նույնպես արձագանքեն հաշմանդամների կարիքներին:

3.8.2. Նպատակները

- i. Հնարավորություն տալ հաշմանդամներին պլանավորելու իրենց կյանքը և հնարավորինս ինքնուրույն ապրելու իրենց համայնքի ներսում,
- ii. տրամադրել աջակցության բազմատեսակ որակյալ ծառայություններ համայնքների մակարդակով, որի շնորհիվ կապահովվի ընտրության կատարման ազատությունը,
- iii. հատուկ ուշադրություն դարձնել այն ընտանիքներին, որոնք ունեն հաշմանդամ երեխա (երեխաներ) և խթանել այնպիսի մոտեցումը, որը ենթադրում է հաշմանդամ երեխաների ծնողների, ինչպես նաև հաշմանդամ ծնողների ուսուցում և նրանց մասնակցություն երեխայի խնամքի և ուսուցման մեջ:

3.8.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

- i. Համայնքներում տեղակայված աջակցության որակյալ ծառայությունների տրամադրման ժամանակ ապահովել համակարգված մոտեցումը, որը հնարավորություն կտա հաշմանդամներին ապրելու իրենց համայնքների ներսում և բարելավելու նրանց կյանքի որակը,
- ii. մշակել և զարգացնել բնակարանային քաղաքականություններ, որոնք հնարավորություն են տալիս հաշմանդամներին ապրելու հարմար բնակարանային պայմաններում իրենց համայնքների ներսում,
- iii. օժանդակել ֆորմալ և ոչ ֆորմալ աջակցության ձևերին՝ հնարավորություն տալով հաշմանդամներին ապրելու իրենց տանը,
- iv. ճանաչել խնամողների կարգավիճակը՝ տրամադրելով նրանց աջակցություն և համապատասխան ուսուցում,
- v. ապահովել ոչ ֆորմալ խնամք իրականացնող ընտանիքների, հատկապես հաշմանդամ երեխա ունեցող կամ մեծապես խնամքի կարիք ունեցող անաշխատունակ անդամ ունեցող ընտանիքների կարիքների մանրագնին գնահատումը՝ նպատակ հետապնդելով մասն ընտանիքներին տրամադրել տեղեկատվություն, ուսուցում և օժանդակություն, այդ թվում հոգեբանական աջակցություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով անձնական և մասնագիտական կյանքի վերականգնմանը և գենդերային հավասարությանը,
- vi. ապահովել համայնքներում տեղակայված որակյալ ծառայությունների տրամադրումը և բնակարանային այլընտրանքային մոդելները, որոնք թույլ են տալիս ինստիտուցիոնալ խնամքի կենտրոններից անցում կատարելու համայնքային կյանքին,
- vii. ապահովել այն, որ անհատները կարողանան տեղեկացված որոշումներ կայացնել, անհրաժեշտության դեպքում օգտվելով նաև հնուտ փաստաբանական ծառայությունից,
- viii. զարգացնել այն ծրագրերը, որոնք թույլ են տալիս հաշմանդամներին որոշումների կայացման ժամանակ օգտվելու անձնական օգնականների ծառայություններից,
- ix. տրամադրել լրացուցիչ ծառայություններ և այլ հարմարություններ, օրինակ՝ բուժման հարմար ձևեր առաջարկող ցերեկային ինտերնատներ, կարճաժամկետ ապրուստի ինտերնատներ

կամ ինքնաարտահայտման խմբեր, որի շնորհիվ հաշմանդամները և նրանց ընտանիքները կունենան ժամանակավոր հանգստի հնարավորություն և կստանան ժամանակավոր աջակցություն,

x. հաշմանդամներին, հատկապես մեծապես խնամքի կարիք ունեցող անձանց տրամադրել համապատասխանեցված աջակցություն, որպեսզի նվազեցնել սոցիալական մեկուսացման ռիսկերը,

xi. իրականացնել «Աշխատանքի և ընտանեկան կյանքի համատեղման մասին» Նախարարների հանձնախմբի Հանձնարարական թիվ (96) 5-ը՝ ուղղված անդամ-պետություններին:

3.9. Գործողության ուղղություն թիվ 9. Առողջապահություն

3.9.1. Ներածություն

Հաշմանդամները, ինչպես հասարակության այլ անդամները, ունեն որակյալ առողջապահական ծառայություններից ու տեխնոլոգիաներից օգտվելու և համապատասխան բուժում ստանալու հավասար իրավունքներ: Որոշ դեպքերում հաշմանդամների կյանքի որակի բարելավման համար պահանջվում են հատուկ և նորարարական առողջապահական ծառայություններ: Հաշմանդամների անհատական խնամքի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացում պետք է լիովին ընդգրկված լինեն հաշմանդամները և նրանց ներկայացուցիչները (անհրաժեշտության դեպքում): Այս մոտեցման շնորհիվ հաշմանդամները դառնում են առանցքային դերակատար խնամքի և առողջապահական ծառայությունների ծրագրման խնդրում: Բացի այդ, այս մոտեցումը թույլ է տալիս անհատներին տեղեկացված որոշումներ կայացնել իրենց առողջության մասին:

Առողջապահական ծառայությունների ծրագրման և մատուցման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել բնակչության ծերացման միտումները և դրա համապատասխան հետևանքները, հատկապես հաշմանդամների համար: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է առաջնահերթությունը տալ առողջապահության ոլորտում նոր քաղաքականությունների և ռազմավարությունների ձևավորմանը:

Բոլոր անդամ-պետություններում առողջապահության ոլորտի մասնագետները պետք է հաշվի առնեն հաշմանդամության սոցիալական և մարդու իրավունքների մոդելը, այլ ոչ պարզապես ուշադրությունը սևեռեն հաշմանդամության բժշկական առանձնահատկությունների վրա:

3.9.2. Նպատակները

- i. Ապահովել այն, որ հաշմանդամները, անկախ իրենց սեռական պատկանելիությունից, տարիքից ու ծագումից, հաշմանդամության բնույթից կամ աստիճանից.
 - ունենան առողջապահական բոլոր ծառայություններից օգտվելու հավասար հնարավորություններ,
 - անհրաժեշտության դեպքում օգտվեն առկա մասնագիտացված ծառայություններից,
 - հնարավորինս մասնակցեն իրենց անհատական խնամքի ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին,
- ii. ապահովել այն, հաշմանդամների կարքիներն արտացոլվեն առողջապահության մասին բացատրական նյութերում և հանրային առողջապահության ծրագրերում:

3.9.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

- i. Ապահովել այն, որ ոչ մի հաշմանդամի նկատմամբ խտրական վերաբերմունք չցուցաբերվի առողջապահական ծառայություններից օգտվելու և հիվանդության պատմության կազմման ժամանակ,
- ii. ապահովել այն, որ յուրաքանչյուր հաշմանդամի կամ նրա ներկայացուցչի, խնամողի կամ փաստաբանի (եթե հաշմանդամության ծագման, բնույթի կամ աստիճանի պատճառով հաշմանդամը ունակ չէ դա կատարելու) կարծիքը առավելագույնս հաշվի առնվի խնամքի, բժշկական միջամտության և բուժման ծրագրի գնահատման, նախագծման և իրականացման ժամանակ,
- iii. աշխատել հանրային ու մասնավոր առողջապահական հիմնարկների հարմարությունների և սարքավորումների մատչելիության ապահովման ուղղությամբ, ներառյալ այն, որ հոգեբուժական, հոգեբանական ծառայությունները, ամուբուլատոր և ստացիոնար բժշկական ծառայությունները հագեցված լինեն համապատասխան սարքավորումներով և բավարարեն հաշմանդամների կարիքներին,
- iv. ապահովել այն, որ հաշմանդամ կանայք ունենան առողջապահական ծառայություններից օգտվելու հավասար հնարավորություններ, ներառյալ նախածննդյան, գինեկոլոգիական և ընտանիքի անդամների պլանավորման ուղղությամբ կոսուլտացիաներն ու բուժումը,
- v. ապահովել այն, որ գենդերային հարցերը հաշվի առնվեն հաշմանդամներին բուժօգնություն տրամադրելու ժամանակ,
- vi. ապահովել խելամիտ քայլերի ձեռնարկումը՝ ուղղված անձին ցուցաբերվող բուժօգնության կամ առողջապահական ծառայությունների մասին հասկանալի ձևաչափով ողջ համապատասխան տեղեկատվության տրամադրմանը հաշմանդամներին,
- vii. ապահովել այն, որ հաշմանդամության մասին տեղեկացումը (անկախ նրանից, թե դա տեղի է ունենում մարդու ծնվելուց առաջ կամ հետո, հիվանդության կամ դժբախտ պատահարի արդյունքում) կատարվի այնպիսի պայմաններում, որտեղ երաշխավորվում է տվյալ անձի և նրա ընտանիքի նկատմամբ հարգալից վերաբերմունքը, ինչպես նաև ապահովել հստակ ու համապարփակ տեղեկատվության ու աջակցության տրամադրումը անձին և նրա ընտանիքի անդամներին,
- viii. ապահովել առողջապահական բացատրական աշխատանքների և հանրային առողջության ծրագրերին մասնակցելու հարավորությունը, ի թիվս այլոց, հաշմանդամների համար նախատեսվող տեղեկատվության և խորհրդատվության միջոցով,
- ix. ուսուցել առողջապահության ոլորտի մասնագետներին այնպես, որ նրանք քաջածանոթ լինեն հաշմանդամության հարցերին և հաշմանդամների հատուկ կարիքները բավարարելու մեթոդներին ու եղանակներին,
- x. բացահայտել վաղ միջամտության կարիքը և դրանով իսկ որոշել վաղ փուլում հաշմանդամությունը բացահայտելու, ախտորոշելու և բուժելու արդյունավետ միջոցառումները, ինչպես նաև մշակել ուղեցույցներ վաղ բացահայտման և միջամտության միջոցառումների մասին,
- xi. անհրաժեշտության դեպքում քննության առնել եվրոպական սոցիալական խարտիայի (վերանայված տարբերակի), մասնավորապես նրա 11-րդ հոդվածի ստորագրման և վավերացման հարցը:

3.10. Գործողության ուղղություն թիվ 10. Վերականգնում

3.10.1. Ներածություն

«Հաշմանդամների համար համապարփակ քաղաքականության մասին» Նախարարների հանձնախմբի հանձնարարական թիվ (92) 6-ում նշվում է, որ հաշմանդամների վերականգնումը, որն ապահովվում է տնտեսական և սոցիալական ինտեգրման շնորհիվ, հասարակության պարտականությունն է, որ այն երաշխավորում է մարդու արժանապատվությունը և մեղմացնում հասարակությունից ծագող դժվարությունները, և որ այն պետք է ներառվի ցանկացած հասարակության զերակա առաջնահերթությունների շարքում: Նշված հանձնարարականի իմաստով հաշմանդամների վերականգնմանն ուղղված համապարփակ քաղաքականության նպատակը պետք է լինի հաշմանդամության վիճակի վատթարացման կանխումը, դրա հետևանքների մեղմացումը, որպես անհատներ հաշմանդամների ինքնուրույնության բարելավումը, նրանց տնտեսական անկախության և հասարակության հետ ինտեգրման ապահովումը: Վերականգնողական համակողմանի ծրագրերը պետք է ներառեն լրացուցիչ միջոցառումների, ծառայությունների և հարմարությունների այն ամբողջությունը, որը կարող է զգալիորեն նպաստել հաշմանդամների ֆիզիկական ու հոգեբանական անկախությանը:

3.10.2. Նպատակները

- i. Հնարավորություն տալ հաշմանդամներին ձեռք բերելու առավելագույն անկախություն և լավագույնս բացահայտելու իրենց ֆիզիկական, մտավոր, սոցիալական և մասնագիտական կարողությունները,
- ii. կազմաերպել, ամրապնդել և ընդլայնել վերականգնողական համապարփակ ծառայությունները,
- iii. տալ հիմնական և հատուկ ծառայություններից օգուվելու հնարավորություն, որի շնորհիվ հաշմանդամները կկարողանան հասնել լիարժեք սոցիալական ինտեգրման իրենց համայնքներում և հասարակությունում,
- iv. մասնավորապես, մարդու ծննդյան օրվանից ապահովել որակյալ վաղ միջամտությունները, բազմակի բնագավառների համադրման մոտեցումը, ներառյալ ծնողներին տրամադրվող աջակցությունն ու խորհրդատվությունը:

3.10.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

- i. Ձևավորել, իրականացնել և պարբերաբար ուղւմնասիրել հաշմանդամների վերականգնման ազգային քաղաքականությունները՝ ապահովելով դրանց շարունակական բարելավումը,
- ii. ապահովել այն, որ հաշմանդամները, նրանց ընտանիքի անդամները և ներկայացուցչական կազմակերպություններն իրենց մասնակցությունն ունենան վերականգնման միասնական ծրագրերի նախագծման, իրականացման ու գնահատման աշխատանքներում,
- iii. ապահովել այն, որ վերականգնման ծրագրերը մատչելի լինեն հաշմանդամներին և համապատասխանեցվեն նրանց անհատական կարիքներին: Սա նշանակում է նաև, որ հաշմանդամները կամ նրանց ներկայացուցիչները պետք է հավանություն տան նշված ծրագրերին,
- iv. ապահովել, որ վերականգնողական մասնագիտացված կենտրոնները հնարավորինս հագեցված լինեն անհրաժեշտ սարքավորումներով և ունենան վերականգնողական աշխատանքներում մասնագիտացած բազմապրոֆիլ մասնագետների թիմ,

v. զարգացնել վերականգնողական ծառայություններն ու աջակցությունը՝ միասնական մոտեցման կիրառման միջոցով կատարելով բազմապրոֆիլ անհատական գնահատումներ,

vi. խթանել բազմակի ոլորտների համագործակցությունը՝ ներգրավելով բոլոր համապատասխան բնագավառների, հատկապես առողջապահության, կրթության, սոցիալական և զբաղվածության ոլորտներին, ինչպես նաև բոլոր անհրաժեշտ դեպքերում ապահովել վերականգնողական աշխատանքների ինտեգրված կառավարումը, որպեսզի երաշխավորել հաշմանդամների համար հավասար հնարավորությունները,

vii. ապահովել այն, որ կրթություն ստանալու ժամանակ հաշմանդամ երեխաները օգտվեն մանկավարժական վերականգնման ծրագրերից և այլ ռեսուրսներից, որոնք հնարավորություն են տալիս ամբողջությամբ բացահայտելու իրենց ներուժը,

viii. մասնագիտական վերականգնողական աշխատանքներում ներգրավել ինչպես գործատուներին, այնպես էլ աշխատողներին՝ դրանով իսկ աջակցելով հաշմանդամ դարձած մարդկանց հնարավորինս շուտ աշխատանքի անցնելու հարցում,

ix. աշխատել հաշմանդամների պահանջով անհատականացված և համայնքներում իրականացվող վերականգնողական ծրագրերի ապահովման ուղղությամբ,

x. նպաստել նրան, որ վերականգնողական միջոցառումների / ծրագրերի իրականացման ժամանակ հաշմանդամների պահանջով կիրառվեն մատչելի աջակցող սարքեր:

3.11. *Գործողության ուղղություն թիվ 11. Սոցիալական պաշտպանությունը*

3.11.1 *Ներածություն*

Սոցիալական պաշտպանությունը ներառում է սոցիալական ապահովությունը, սոցիալական աջակցությունը կամ օժանդակությունը և սոցիալական ծառայությունները, որոնք կենսական նշանակություն ունեն ման ծառայություններ ստացողների համար, քանի որ նպաստում են շահառուների կյանքի որակի բարելավմանը: Ինչևէ, շատ իրավիճակներում հաշմանդամները համարժեքորեն չեն օգտվում սոցիալական պաշտպանության համակարգերից՝ ծառայությունների բացակայության կամ դրանց մատչելիության հետ կապված դժվարությունների պատճառով: Եվրոպական սոցիալական խարտիայում (ETS No. 163) արտացոլված սոցիալական իրավունքները ներառում են, մասնավորապես, սոցիալական ապահովության իրավունքը (12-րդ հոդված), սոցիալական և բժշկական օգնության իրավունքը (13-րդ հոդված) և սոցիալական ապահովության ծառայություններից օգտվելու իրավունքը (14-րդ հոդված) : Այս իրավունքների իրականացումն օգնում է նվազեցնելու սոցիալական բացառման ու մեկուսացման ռիսկը և դրանով իսկ նպաստում է խարտիայում նախատեսվող մեկ այլ իրավունքի, մասնավորապես, հաշմանդամների ինքնուրույնության, սոցիալական ինտեգրման և համայնքային կյանքի մասնակցության իրավունքի իրականացմանը (15-րդ հոդված) :

3.11.2 *Նպատակները*

i. Ընձեռել սոցիալական պաշտպանությունից օգտվելու հավասար հնարավորություններ հաշմանդամների համար,

ii. խթանել այն քաղաքականությունները, որոնք բոլոր հնարավոր դեպքերում նպաստում են անցմանը ֆինանսական նպաստներից կախվածությունից դեպի զբաղվածությունն ու ինքնուրույնությունը:

3.11.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

- i. Ապահովել համաժեք հավասարակշռություն սոցիալական պաշտպանության միջոցառումների և զբաղվածության կողմորոշում ունեցող ակտիվ քաղաքականությունների միջև, որպեսզի չխրախուսվի նպաստներից պասիվ կախվածությունը,
- ii. ապահովել այն, որ սոցիալական ծառայությունների և հարակից աջակցության աշխատանքների բաշխումը հիմնվի անձի կարիքների բազմակողմանի գնահատման վրա, որն, իր հերթին, ենթակա է պարբերական ուսումնասիրման,
- iii. ապահովել այն, որ նպաստների գնահատման բոլոր համակարգերն ու ընթացակարգերը մատչելի լինեն հաշմանդամների կամ նրանց ներկայացուցիչների համար,
- iv. ապահովել այն, որ ընդհանուր բնույթի սոցիալական ծառայություններում հաշվի առնվեն հաշմանդամների և նրանց ընտանիքների հատուկ կարիքները,
- v. ապահովել այն, որ վարչական գերատեսչությունների, սոցիալական ծառայություններ մատուցող հանրային ու մասնավոր կազմակերպությունների միջև ու ներսում համակարգումը շարունակաբար բարելավվի, ինչը թույլ կտա որակյալ ծառայությունների տրամադրման ժամանակ հաշվի առնել հաշմանդամների կարիքները,
- vi. քննարկումներ ունենալ սոցիալական գործընկերների և այլ կարևոր դերակատարների, այդ թվում հաշմանդամների կազմակերպությունների հետ սոցիալական պաշտպանության քաղաքականությունների ծրագրման ու իրականացման հարցերով,
- vii. ապահովել սոցիալական պաշտպանության այն բոլոր նպաստների մասին տեղեկատվության արդյունավետ տարածումը, որ հաշմանդամները կարող են ստանալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով սոցիալական մեկուսացման ռիսկի առջև կանգնած հաշմանդամների վրա,
- viii. ապահովել այն, որ սոցիալական ներառման և աղքատության դեմ պայքարի ռազմավարություններն արտացոլեն հաշմանդամների հատուկ կարիքները,
- ix. նպատակահարմարության դեպքում քննության առնել եվրոպական սոցիալական խարտիան (վերանայված տարբերակ), Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգիրքը (ETS No. 48) և Սոցիալական ապահովության մասին եվրոպական կոնվենցիան (ETS No. 78) ստորագրելու և վավերացնելու հարցը,
- x. իրականացնել «Սոցիալական իրավունքներից օգտվելու մասին» Նախարարների հանձնախմբի հանձնարարական թիվ (2003)19-ը՝ ուղղված անդամ-պետություններին:

3.12. *Գործողության ուղղություն թիվ 12. Իրավական պաշտպանությունը*

3.12.1. Ներածություն

Հաշմանդամներն իրավունք ունեն ամենուր ճանաչվել որպես օրենքի առջև հավասար անձինք: Այս օրինական իրավունքի իրականացման հարցում որևէ աջակցության անհրաժեշտության դեպքում անդամ-պետությունները պետք է ապահովեն այն, որ այն պատշաճ կերպով երաշխավորվի օրենքով:

Հաշմանդամները ներկայացնում են բնակչության բազմաբնույթ խումբը, սակայն նրանք բոլորն էլ քիչ թե շատ կարիք ունեն լրացուցիչ ապահովությունների, որպեսզի լիարժեքորեն իրականացնեն իրենց իրավունքները և այլ քաղաքացիների հետ հավասար հիմունքներով մասնակցեն հասարակության կյանքում:

Այլ քաղաքացիների հետ հավասար հիմունքներով իրենց իրավունքներից օգտվելու առումով հաշմանդամների վիճակի վրա հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունն արտացոլվել է ազգային ու միջազգային մակարդակներում իրականացված միջոցառումներում:

Խտրականության բացառման սկզբունքը պետք է որպես հիմք ծառայի հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված պետական քաղաքականությունների համար:

Իրավական համակարգից օգտվելու իրավունքը ժողովրդավարական հասարակությունում հիմնարար իրավունքներից մեկն է, սակայն հաճախ հաշմանդամների առջև կարող են ծառանալ մի շարք արգելապատնեշներ, ներառյալ ֆիզիկական մատչելիության հետ կապված խոչընդոտները: Սրա համար անհրաժեշտ են մի խումբ միջոցառումներ և դրական գործողություններ, ներառյալ իրավաբանների շրջանում հաշմանդամության հարցերի մասին ընդհանուր իրազեկության բարձրացումը:

3.12.2. Նպատակները

- i. Այլ քաղաքացիների հետ հավասար պայմաններում ապահովել հավասար հնարավորություններ հաշմանդամների համար արդարադատության բնագավառում,
- ii. այլ քաղաքացիների հետ հավասար հիմունքով պաշտպանել և խթանել հաշմանդամների մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

3.12.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

- i. Ապահովել խտրականության դրսևորումներից պաշտպանությունը օրենսդրական հատուկ միջոցառումների իրականացման, մարմինների ստեղծման, հաշվետվական պահանջների և ուղղիչ մեխանիզմների կիրառման միջոցով,
- ii. ապահովել այն, որ հաշմանդամների նկատմամբ խտրականություն ենթադրող օրենսդրական դրույթները հանվեն հիմնական օրենսդրությունից,
- iii. խթանել օրինապահ մարմինների աշխատողների, պետական պաշտոնյաների, դատական համակարգի և բժշկական աշխատողների ուսուցումը (և՛ ազգային, և՛ միջազգային մակարդակով)՝ նվիրված մարդու իրավունքների ու հաշմանդամության հարցերին,
- iv. խրախուսել հաշմանդամների մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական իրավաբանական կազմակերպությունների ցանցի գործունեությունը,
- v. ապահովել այն, որ հաշմանդամներն ունենան դատական համակարգից օգտվելու հավասար հնարավորություններ՝ երաշխավորելով մատչելի տեղեկատվությունից և հաղորդակցության միջոցներից օգտվելու նրանց իրավունքը,
- vi. համապատասխան աջակցություն ցուցաբերել այն անձանց, ովքեր դժավորությամբ են կարողանում օգտվել իրենց իրականակությունից և ապահովել նման աջակցության համարժեք համապատասխանությունը պահանջվող օգնության հետ,

vii. նախաձեռնել համապատասխան միջոցառումներ՝ ուղղված հաշմանդամների ազատագրկման դեպքերի բացառմանը, բացառությամբ օրենքով նախատեսվող դեպքերի,

viii. նախաձեռնել համապատասխան արդյունավետ միջոցառումներ, որպեսզի ապահովել ունեցվածքին տիրելու և ժառանգելու հաշմանդամների հավասար իրավունքը՝ այլ քաղաքացիների հետ հավասար հիմունքներով իրենց ունեցվածքը կառավարելու հարցում երաշխավորելով նրանց իրավական պաշտպանությունը,

ix. ապահովել այն, որ ոչ մի հաշմանդամ չենթարկվի բժշկական փորձարկումների իր կամքին հակառակ,

x. իրականացնել Նախարարների հանձնախմբի «Անաշխատունակ չափահասների իրավական պաշտպանության սկզբունքների մասին» հանձնարարական թիվ (99) 4-ը՝ ուղղված անդամ-պետություններին:

3.13. Գործողության ուղղություն թիվ 13. Պաշտպանությունը բռնության և շահագործման դրսևորումներից

3.13.1. Ներածություն

Ցանկացած մարդու նկատմամբ շահագործման կամ բռնության դրսևորումները անընդունելի են, և հասարակությունը պարտավոր է ապահովել այն, որ անհատները, հատկապես ամենախոցելի մարդիկ, պաշտպանված լինեն նման դրսևորումներից:

Տվյալները վկայում են այն մասին, որ ընդհանուր բնակչության համեմատ հաշմանդամների նկատմամբ շահագործման և բռնության դրսևորումների տվյալները զգալիորեն բարձր են: Դրանք առավել բարձր են հաշմանդամ կանանց (հատկապես ծանր հաշմանդամություն ունեցող կանանց) շրջանում, որտեղ շահագործման դեպքերի ցուցանիշը շատ ավելի բարձր է ոչ հաշմանդամ կանանց համեմատ: Շահագործման դեպքերը կարող են տեղի ունենալ խնամքի հաստատություններում կամ այլ իրավիճակներում, այդ թվում ընտանեկան միջավայրում: Բռնությունը կարող է գործադրվել անհատին անձանոթ կամ ծանոթ մարդկանց կողմից և արտահայտվել տարբեր ձևերով, ներառյալ բառացի շահագործումը, բռնության գործողությունները կամ հիմնական կարիքները բավարարելուց հրաժարվելու դեպքերը:

Թեև կառավարությունները չեն կարող երաշխավորել բռնության դրսևորումների բացառումը, սակայն նրանք պետք է լավագույն ջանքերը գործադրեն դրանց կանխումը և հնարավոր ամենաուժեղ պահպանողական մեխանիզմներ սահմանելու ուղղությամբ: Կանխման միջոցառումները կարող են ներառել անձի պաշտպանվելու իրավունքի նկատմամբ հասարակության մեջ հարգանք սերմանելու, շահագործման ռիսկը ընդունելու և նվազեցնելու նպատակով անցկացվող բացատրական աշխատանքները: Շահագործման կամ բռնության ենթարկվող հաշմանդամները պետք է կարողանան ստանալ համապատասխան օգնությունը: Սնհրաժեշտ է նրանց համար ստեղծել գաղտնիություն ապահովող մի համակարգ, որի միջոցով հաշմանդամները կարող են համապատասխան օղակներին տեղեկացնել բռնության դեպքերի մասին և ակնկալել որոշակի հետևողական օժանդակություն, այդ թվում անհատական օգնություն: Նման համակարգերում պետք է ընդգրկված լինեն այնպիսի ունակ մասնագետներ, ովքեր կարող են բացահայտել բռնության դրսևորումները և արձագանքել դրանց:

Թեև վերջին տարիներին որոշակի հետազոտություններ են կատարվել, սակայն ակնհայտ է, որ ապագա ռազմավարությունների և լավագույն փորձի կիրառման համար անհրաժեշտ են նորացված մեթոդներ:

3.13.2. Նպատակները

- i. Աշխատել խտրականության բացառման և մարդու իրավունքների պաշտպանության համակարգում՝ ջանքերն ուղղելով բռնության և շահագործման ցանկացած դրսևորումներից հաշմանդամ մարդկանց պաշտպանվածությանը,
- ii. հաշմանդամների համար ապահովել բռնության ու շահագործման զոհերի համար նախատեսված ծառայություններից և աջակցությունից օգտվելու հնարավորությունը:

3.13.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

- i. Սահմանել ապահովության միջոցներ՝ ուղղված բռնության և շահագործման դրսևորումներից հաշմանդամների պաշտպանությանը, անհրաժեշտության դեպքում իրականացնելով արդյունավետ քաղաքականություններ և ընդունելով օրենսդրություն,
- ii. խթանել հաշմանդամների համար նախատեսված ուսուցման դասընթացների առկայությունը (օրինակ՝ մարդու մեջ ինքնավստահություն և վստահություն սերմանող դասընթացներ) և դրանց մասնակցելու հնարավորությունները՝ նպատակ հետապնդելով նվազեցնել բռնության և շահագործման ռիսկը,
- iii. մշակել հաշմանդամների կարիքներին համապատասխանեցված գործընթացներ, միջոցառումներ և արարողակարգեր, բարելավել բռնության և շահագործման դրսևորումների բացահայտումը, ինչպես նաև ապահովել այն, որ օրինազանցների նկատմամբ կիրառվեն անհրաժեշտ պատժամիջոցները, ներառյալ ուղղիչ քայլերը և հոգեբանական խնդիրների դեպքում համարժեք մասնագիտական կոնսուլտացիաները,
- iv. ապահովել այն, որ բռնության և շահագործման դրսևորումների զոհերը կարողանան օգտվել օգնության համապատասխան ծառայություններից, ներառյալ վնասների փոխհատուցումը,
- v. կանխել հաշմանդամին խնամող ընտանիքի կողմից բռնության, վատ վերաբերմունքի և շահագործման դրսևորումները բոլոր իրավիճակներում և պայքարել դրանց դեմ, բարձրացնել հանրության իրազեկումը, խթանել համապատասխան կողմերի միջև քննարկումներն ու համագործակցությունը,
- vi. տեղեկատվության տրամադրման և ծառայություններից օգտվելու հնարավորության ապահովման միջոցով աջակցել հաշմանդամներին, հատկապես կանանց և նրանց ընտանիքներին բռնության ենթարկվելու իրավիճակներում,
- vii. ապահովել հոգեբուժարաններում, սոցիալական խնամքի տներում և ինտերնատներում, մանկատներում և այլ հաստատություններում գտնվող հաշմանդամներին շահագործման դրսևորումներից պաշտպանության համակարգերի առկայությունը,
- viii. ապահովել այն, որ հաշմանդամների համար նախատեսված հաստատություններում և հիմնական աջակցության ծառայություններում զբաղված աշխատակիցներն անցնեն համապատասխան ուսուցում,
- ix. ուսուցել ոստիկանության և դատական մարմինների աշխատակիցներին, որպեսզի նրանք կարողանան ցուցումներ ստանալ հաշմանդամներից և լրջորեն զբաղվեն շահագործման դեպքերով,

x. հաշմանդամներին տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե ինչպես խուսափել բռնության և շահագործման դեպքերից, ինչպես ճանաչել դրանց և ինչպես համապատասխան օղակներին տեղեկացնել դրանց մասին,

xi. նախաձեռնել արդյունավետ և թափանցիկ օրենսդրական, վարչական, դատական և այլ միջոցառումներ խիստ պատժամիջոցների կիրառմամբ և թույլ տալ քաղաքացիական հասարակության կողմից անկախ գնահատման կատարում, որպեսզի կանխել հաշմանդամների նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնության, շահագործման, արհամարհանքի կամ անփույթ վերաբերմունքի, առևանգման բոլոր տեսակի դրսևորումները,

xii. իրականացնել անդամ-պետություններին ուղղված Նախարարների հանձնախմբի «Բռնության դրսևորումներից կանանց պաշտպանության մասին» հանձնարարական թիվ (2002)5-ում ներառված համապատասխան դրույթները,

xiii. իրականացնել անդամ-պետություններին ուղղված Նախարարների հանձնախմբի «Անաշխատունակ չափահասների իրավական պաշտպանության մասին» հանձնարարական թիվ (99) 4-ում ներառված համապատասխան դրույթները,

xiv. իրականացնել «Շահագործման դրսևորումներից չափահասների և երեխաների պաշտպանության մասին» որոշում թիվ (2005)1-ը և հաշվի առնել համապատասխան կից հաշվետվությունը:²

3.14. Գործողության ուղղություն թիվ 14. Գիտահետազոտական աշխատանքները

3.14.1. Ներածություն

Փաստերի վրա հիմնվող քաղաքականության ձևավորման ժամանակ հաշվի են առնվում համապարփակ հետազոտությունների, վիճակագրական տվյալների հավաքագրման և վերլուծության արդյունքները: Հուսալի տեղեկատվության միջոցով բացահայտվում են առաջացող հարցերը: Այն հաշվի է առնվում լուծումների որոշման և արդյունավետ արդյունքներ ստանալու ժամանակ: Այն նաև թույլ է տալիս որոշել լավագույն փորձը և հետևել հասարակությունում տեղի ունեցող փոփոխություններին:

Հաշմանդամների մասին տվյալների բացակայությունը համարվում է որպես խոչընդոտ ազգային և միջազգային մակարդակներում քաղաքականությունների մշակման համար: Անհրաժեշտ է խրախուսել և զարգացնել հաշմանդամների հարցերի ուղղությամբ համակողմանի, զանազանակերպված և մասնագիտացված հետազոտական աշխատանքները և համակարգել դրանք բոլոր մակարդակներում, որպեսզի նպաստել սույն Գործողությունների ծրագրում սահմանվող նպատակների իրագործմանը:

3.14.2. Նպատակները

i. Խթանել փաստերի վրա հիմնվող քաղաքականությունների և ստանդարտների մշակումը՝ բարելավելով դեպի ապագան կողմնորոշված հետազոտությունների արդյունքների արտացոլումը քաղաքականություններում,

ii. ազգային և միջազգային մակարդակներում համապատասխանեցնել վիճակագրական տվյալների հավաքագրման մեթոդաբանությունը, որպեսզի ապահովել ստացվող տեղեկատվության հուսալիությունը և համադրելիությունը,

² «Բռնության դրսևորումներից հաշմանդամ երեխաների և չափահասների պաշտպանությունը», Եվրոպայի խորհրդի հրատարակություն, Ստրասբուրգ, 2003 թ. ISBN 92-871-4919-4.

iii. բազմակողմանիորեն օգտագործել գիտահետազոտական ողջ ներուժը և աջակցել վերջինիս, որպեսզի խթանել հաշմանդամների մասնակցությունը և բարելավել նրանց կյանքի որակը:

3.14.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

i. Մշակել վիճակագրական և տեղեկատվական ռազմավարություններ հաշմանդամների վերաբերյալ քաղաքականությունների և ստանդարտների մշակման համար՝ հիմնվելով հաշմանդամության սոցիալական և մարդու իրավունքների մոդելի վրա, ինչպես նաև ուսումնասիրել առկա ազգային ռազմավարությունների ու տվյալների բազաների արդյունավետությունը,

ii. ապահովել այն, որ կարիքների գնահատման արդյունքում ստացվող տեղեկատվությունը (որը անհատների մակարդակով համարվում է գաղտնի) լավագույնս օգտագործվի ընդհանուր ծառայությունների ծրագրման և մատուցման ժամանակ ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում,

iii. ապահովել այն, որ հիմնական ուղղություններով կատարվող հետազոտությունները, անհրաժեշտության դեպքում, տրամադրեն տեղեկատվություն հաշմանդամների մասնակցության մասին սույն գործողությունների ծրագրով նախատեսվող բոլոր համապատասխան ոլորտներում,

iv. ապահովել այն, որ հետազոտություններում հնարավորինս ներառվեն գենդերային առանձնահատկությունները, ինչը կոյուրինացնի հաշմանդամ կանանց մասին տվյալների վերլուծությունը,

v. համաձայնցված միասնական դասակարգման շուրջ համաձայնություն ձեռք բերելու միջոցով աշխատել հետազոտությունների նկատմամբ համակարգման մոտեցման կիրառման ուղղությամբ, որն, իր հերթին, կհանգեցնի ազգային և միջազգային միասնական տվյալների բազայի գնահատմանը և վերլուծությանը,

vi. զարգացնել հասարակությանը վերահստեղծմանն ուղղված վերականգնողական հաջող միջոցառումներին նվիրված գիտահետազոտական աշխատանքները,

vii. զարգացնել հաշմանդամների կյանքի որակի վրա ժողովրդագրական փոփոխությունների և բնակչության ծերացման գործընթացի ազդեցությունների հետազոտությունները,

viii. հաշմանդամների ներկայացուցիչներին և այլ համապատասխան շահագրգիռ կողմերին ներգրավել գիտահետազոտական աշխատանքների ռազմավարության մշակման և տվյալների հավաքագրման գործընթացում,

ix. աջակցել, որպեսզի տեղեկատվական և հաղորդակցման նոր տեխնոլոգիաներում, ապարատներում, սարքերում և տեխնիկական հարմարություններում օգտագործվել կիրառական գիտությունների բնագավառում կատարված հետազոտությունների արդյունքները, որոնք կարող են նպաստել հաշմանդամների ինքնուրույն ապրելակերպին և նրանց մասնակցությանը հասարակության կյանքում,

x. խրախուսել, որ ապրանքների բոլոր հետազոտություններում հաշվի առնվեն Միասնական նախագծի սկզբունքները,

xi. խթանել համապատասխան մարմինների միջև փորձի ու տեղեկատվության փոխանակումը և համագործակցությունը՝ նպատակ ունենալով ապահովել քաղաքականությունների մեջ հաշվի առնվող համապարփակ տեղեկատվության առկայությունը,

xii. հետազոտական և նորարարական համապատասխան պիլոտային ծրագրերին հանձնարարել աջակցել այն քաղաքականության մշակման գործում, որտեղ ընդգրկված են սույն գործողությունների ծրագրի բոլոր ուղղությունները:

3.15. *Գործողության ուղղություն թիվ 15. Իրազեկման բարձրացումը*

3.15.1. *Ներածություն*

Հասարակության կյանքում մասնակցության և որպես լիիրավ քաղաքացիներ ճանաչման խնդրում հաշմանդամները կանգնում են բազմաթիվ խոչընդոտների առջև: Հաշմանդամների մեծ մասը գտնում է, որ իրենց ամբողջական ինտեգրմանը խոչընդոտող ամենալուրջ արգելապատնեշը հասարակության վերաբերմունքն է:

Հաշմանդամները շարունակում են հանդիպել անընդունելի վերաբերմունքի դեպքերի հետ, որոնք հիմնվում են նախապաշարունակների, վախի, ցածր ակնկալիքների և նրանց ունակությունների նկատմամբ անվստահության վրա: Նման վերաբերմունքը կարելի է փոխել տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ իրականացվող իրազեկման արդյունավետ ռազմավարությունների միջոցով:

Վերջին տարիներին բազմաթիվ անդամ-պետություններում ընդունվել է խտրականության դեմ պայքարի մասին օրենսդրություն և խրախուսվել են սոցիալական քաղաքականության միջոցառումները: Նշված միջոցառումները նպաստում են հաշմանդամների ինտեգրմանը տեղական համայնքների կյանքում, սակայն միայն դրանք բավարար չեն:

Աշխատանքների խթանման համար անդամ-պետությունները պետք է ապահովեն համագործակցությունը ինչպես լրատվության բնագավառում, այնպես էլ աշխատանքների այլ ուղղություններում, որոնք կարող են հանգեցնել հասարակության վերաբերմունքի փոփոխմանը:

Հաշմանդամները պետք է ներկայացվեն զովագրային նյութերում, էկրանի վրա, ռադիոյում և տպագիր նյութերում, որպեսզի տեղի ունենա հաշմանդամության և հաշմանդամների մասին ընկալման հարացույցային փոփոխություն, որից հետո հասարակության բոլոր անդամների վերաբերմունքի իրական փոփոխությունը կդառնա իրականություն:

Անհրաժեշտ է հասարակությանը իրազեկել այն մասին, որ հաշմանդամներն ունեն միևնույն իրավունքները, ինչ մնացած բոլոր մարդիկ, որ հասարակությունում գոյություն ունեն բազմաթիվ արգելապատնեշներ, որոնք խոչընդոտում են կամ թույլ չեն տալիս հաշմանդամներին օգտվելու այդ իրավունքներից: Արգելապատնեշների վերացումը շահեկան կլինի ոչ միայն հաշմանդամների, այլ նաև ողջ հասարակության համար: Ավելին, կարևոր է հասարակությանը ցույց տալ այն բոլոր դրական ավանդները, որ հաշմանդամները, անկախ իրենց հաշմանդամության աստիճանից, ունեցել են որպես հասարակության ակտիվ ու լիիրավ անդամներ:

3.15.2. *Նպատակները*

i. Բարելավել վերաբերմունքը հաշմանդամների հանդեպ, գործողությունների լայն տիրույթի միջոցով դարձնելով նրանց հասարակության ակտիվ և լիիրավ անդամ,

ii. բարձրացնել հասարակության իրազեկվածությունը հաշմանդամության և հաշմանդամ մարդկանց իրավունքների մասին, որոնք վերաբերում են հասարակության մյուս անդամների կողքին նրանց հավասար հնարավորություններին և խտրականությունից պաշտպանվածությանը,

iii. պայքարել հաշմանդամների հանդեպ ցանկացած բացասական վերաբերմունքի դեմ, որը կարող է նսեմացնել հաշմանդամների արժանապատվությունը և վնաս հասցնել նրանց շահերին:

3.15.3. Անդամ-պետությունների կողմից իրականացվելիք հատուկ գործողությունները

i. Համաձայնեցնել հաշմանդամների նկարագիրը բոլոր պետական գովազդման և հրապարակային արշավներում, նպատակ ունենալով փոխել հասարակության վերաբերմունքը հաշմանդամների հանդեպ,

ii. Խրախուսել բոլոր լրատվամիջոցներին և լրատվական կազմակերպություններին բոլոր տեսակի լրատվության հեռարձակման և գրավոր հաղորդակցության միջոցով բարձրացնելու և բարելավելու հաշմանդամների՝ որպես հասարակության լիիրավ քաղաքացիների դերը, օրինակ, ներդնելով հաշմանդամների արժանապատվության ապահովմանն ուղղված էթիկական նորմեր,

iii. Խրախուսել հեռուստատեսային ընկերություններին և ռադիոկայաններին քննարկել հաշմանդամների հետ կապված հարցերը ընդհանուր, իսկ նպատակահարմարության դեպքում, նաև հատուկ ծրագրերի հեռարձակման ընթացքում,

iv. ըստ հնարավորության ձեռնարկել կանոնավոր միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն հաշմանդամների իրավունքների, ներուժի և ներդրված նպաստի վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը,

v. օգտագործել նորամուծական և այլ գործնական միջոցներ երեխաներին, երիտասարդներին և մեծահասակներին լուսաբանելու հաշմանդամների առջև ծառայող խնդիրները,

vi. Խրախուսել հաշմանդամներին և նրանց կազմակերպություններին իրենց մասին հրապարակային ելույթներ ունենալու տեղական և հանրապետական մակարդակով, տրամադրելով նրանց ՁԼՄ-ների հետ աշխատելու գծով անհրաժեշտ ուղենիշեր,

vii. օժանդակել և նպաստել կյանքի բոլոր ոլորտներում լավ գործելակերպի օրինակների տարածմանը, նպատակ ունենալով կրթական, աշխատանքային միջավայրում և համայնքում բարձրացնելու հասարակության իրազեկվածության մակարդակը:

4. Խաչածևող հարցեր

4.1 Ներածություն

Եվրոպայի հաշմանդամների շրջանում կան մարդիկ, ովքեր որոշակի խոչընդոտների կամ կրկնակի խտրականության են հանդիպում:

Այս մարդկանց՝ հասարակությունից դուրս մղվելու ռիսկը ավելի մեծ է և սովորաբար նրանք ավելի քիչ են մասնակցում հասարակական կյանքին: Քաղաքականություն մշակողները պետք է ապահովեն, որպեսզի իրենց կողմից մշակված ներգրավման քաղաքականությունները և ռազմավարությունները հաշվի առնեն հաշմանդամների որոշակի խմբերի կարիքները՝ նրանց մասնակցությունը հասարակության կյանքում ապահովելու նպատակով:

Մալազայի հռչակագրում լուսաբանվում է նման երկու խումբ, որոնք քննարկվելու են սույն Գործողությունների Ծրագրի ողջ ընթացքում, այն է՝ հաշմանդամ կանայք և օգնության մեծ կարիք ունեցող մարդիկ: Հաշմանդամ կանանց և օգնության մեծ կարիք ունեցող մարդկանց նկատմամբ խտրականության հարցերով զբաղվող Աշխատանքային խմբի զեկույցներում վերլուծվում են այս խմբերին հատուկ որոշակի գործոնները և առաջարկվում որոշակի գործողություններ, որոնք

հատվում են գործողությունների շատ ոլորտների հետ, ներառյալ՝ անկախ ապրելակերպը, կրթությունը, զբաղվածությունը և այլն³:

Մյուս խմբերը, որոնք բազմաբնույթ արձագանք են պահանջում, ներառում են հաշմանդամ երեխաներին և ծերերին, փոքրամասնություն հանդիսացող մարդկանց շրջանում հաշմանդամներին (օրինակ, գնչուներին, ներգաղթածներին, փախստականներին, տարհանված մարդկանց կամ այլ ազգային, մշակութային կամ լեզվական փոքրամասնություններին): Քաղաքականություն մշակողները պետք է ճանաչեն այս խմբերից յուրաքանչյուրին հանդիպող խոչընդոտները և խնդիրները և ապահովեն, որ իրենց կողմից մշակված քաղաքականությունները նպաստեն այդ խոչընդոտների վերացմանը, և անհատները կարողանան մյուս քաղաքացիների հետ հավասար հնարավորություններով դրսևորել իրենց ողջ ներուժը:

4.2 Հաշմանդամ կանայք և աղջիկները

Հաշմանդամ կանայք և աղջիկները⁴ կարող են հանդիպել և հաճախ հանդիպում են բազմաթիվ խոչընդոտների, որոնք կապված են հասարակության կյանքում նրանց մասնակցության մեջ կրկնակի խտրականության, այն է՝ սեռի և հաշմանդամության հետ: Թեև հաշմանդամների ընդհանուր վիճակը զգալիորեն բարելավվել է, հասարակության մեջ նման փոփոխություններից բխող օգուտները հավասարապես չեն բաշխվում կին և տղամարդ հաշմանդամների միջև:

Համապատասխան քաղաքականությունների մշակումը և իրագործումը, ինչպես նաև իրականացման միջոցառումները այնպես պետք է ծրագրվեն, որպեսզի ապահովեն հաշմանդամ կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններ: Թե հաշմանդամության և թե սեռերի իրավունքների համաձայնեցմանն առնչվող բոլոր՝ միջազգային, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակների քաղաքականությունների ու ծրագրերի մշակման ընթացքում պետք է հաշվի առնել հաշմանդամ կանանց և աղջիկների կոնկրետ վիճակը:

Հարկ է միջոցներ ձեռնարկել վերացնելու այն խոչընդոտները, որոնք թույլ չեն տալիս հաշմանդամ կանանց օգտվել իրենց իրավունքներից այնպես, ինչպես դա անում են տղամարդիկ և մյուս կանայք: Այս միջոցները ընդգրկում են ոլորտների լայն տիրույթը, ներառյալ՝ մարդկանց միջև հարաբերությունները, ծնող լինելու հնարավորությունը, ընտանեկան կյանքը, սեքսուալությունը, և բռնությունից ու վիրավորանքից պաշտպանվածությունը: Դրանցում ներառվում են նաև այնպիսի միջոցառումներ, որոնք կոչված են ապահովելու քաղաքական և հանրային կյանքում, կրթության ասպարեզում, ուսուցման դասընթացներում, զբաղվածության, սոցիալական և մշակութային կյանքում մասնակցության հավասար հնարավորություններ: Քաղաքականության այս ոլորտներից շատերը ընդգրկված են սույն Գործողությունների ծրագրի համապատասխան ոլորտներում, սակայն պետք է դիտարկվեն այն առումով, թե ինչպես հաշմանդամ կանանց և աղջիկների մասնակցության վրա ազդող գործոնները կարելի է վերացնել անդամ-պետությունների կողմից:

4.3. Օգնության մեծ կարիք ունեցող հաշմանդամներ⁵

Հաշմանդամների ամենից անպաշտպան խմբերից մեկը այն հաշմանդամներն են, ովքեր վիճակի լրջության և հաշմանդամության բարդ բնույթի պատճառով օգնության մեծ կարիք ունեն: Նրանց կյանքի որակը չափազանց կախված է համապատասխան և որակյալ ծառայությունների առկայությունից, որոնք արձագանքում են նրանց և նրանց ընտանիքների կարիքներին, և որոնք կապված են հասարակության կյանքին նրանց մասնակցությանը հնարավորինս օժանդակման հետ, այլ ոչ թե կրկնօրինակում են հաշմանդամներին ընդհանրապես տրամադրվող ծառայությունները:

³ Խտրականություն հաշմանդամ կանանց հանդեպ, Եվրախորհրդի հրատարակչություն, Ստրասբուրգ, 2003թ., ISBN 92-871-5316-7, Օգնության մեծ կարիք ունեցող հաշմանդամների ապրելակերպը համայնքում, Եվրախորհուրդ, Ստրասբուրգ, 2004թ.

⁴ Սույն Գործողությունների Ծրագրում հաշմանդամ կանանց ցանկացած հղում ենթադրում է նաև հաշմանդամ աղջիկներին:

⁵ Օգնության մեծ կարիք ունեցող հաշմանդամների ապրելակերպը համայնքում

Այս խումբը այն ամենից հավանական խումբն է, որն ապրում է հատուկ հաստատություններում կամ որոշ դեպքերում իրենց ընտանիքներում, սակայն կարող է մեկուսացված լինել հասարակությունից համապատասխան ծառայություններ մատուցողների և հասարակության անդամների հետ կապի բացակայության պատճառով: Նշված պատճառները հանգեցնում են նրան, որ այս խմբի մարդիկ իրենց կոնկրետ կարիքների բավարարման համար ինտենսիվ և մշտական որակյալ ծառայությունների պահանջ ունեն:

Անհրաժեշտ է ամրապնդել ծառայությունների մատուցումը, որի նպատակն է արձագանքել հաշմանդամների կարիքներին, առանց շեղվելու համայնքի վրա հիմնված ծառայությունների օրինակելի ձևից և բոլորի համար արդարացի մատչելիության մոդելից: Եվրախորհրդի անդամ-պետությունները պետք է ճանաչեն, որ սա պահանջում է ինտենսիվ պլանավորում և համակարգում թե ազգային և թե տեղական մակարդակներում գործող համապատասխան իշխանության մարմինների, պետական գործակալությունների և ծառայություններ մատուցողների միջև:

4.4. Հաշմանդամ երեխաներ և երիտասարդներ

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան հիմնվում է չորս հիմնարար սկզբունքների վրա. խտրականության չենթարկվելու երեխայի իրավունքը, երեխայի շահերը պետք է հաշվի առնվեն բոլոր որոշումների կայացման ժամանակ, երեխայի՝ կյանքի և զարգացման իրավունքը և իր կարծիքն արտահայտելու իրավունքը: Հաշմանդամ տղաներն ու աղջիկները նույնպես իրավունք ունեն օգտվել նույն իրավունքներից, անդամ-պետությունները պետք է իրենց կարիքների վերաբերյալ տվյալների բազա հիմնեն, որով հնարավոր կլինի քաղաքականության ոլորտների լայն տիրույթում պլանավորման, որոշումների կայացման և գործելակերպերի իրականացման համար համապատասխան տեղեկատվություն ապահովել:

Հաշմանդամ երեխաների և նրանց ընտանիքների կարիքները պետք է մանրամասն գնահատվեն իշխանության համապատասխան մարմինների կողմից, որի նպատակն է նրանց օժանդակմանն ուղղված միջոցներ ձեռնարկել, այս միջոցառումները երեխաներին կօգնեն ապրել իրենց ընտանիքներում, մասնակցել համայնքի և տեղի երեխաների կյանքին և գործունեությանը: Հաշմանդամ երեխաները պետք է կրթություն ստանան՝ հարստացնելու իրենց կյանքը և օգտագործելու իրենց ողջ ներուժը:

Որակյալ ծառայություններ մատուցող և ընտանիքներին օժանդակություն ցուցաբերող կառույցները կարող են ապահովել հարուստ և զարգացող մանկություն և հիմքեր դնել, որպեսզի հաշմանդամ երեխաները, չափափաս դառնալով, մասնակցային և անկախ կյանք վարեն: Ուստի կարևոր է, որպեսզի քաղաքականություն մշակողները հաշվի առնեն հաշմանդամ երեխաների և նրանց ընտանիքների կարիքները հաշմանդամներին առնչվող քաղաքականություն մշակելիս և համաձայնեցնեն երեխաների և նրանց ընտանիքներին առնչվող քաղաքականությունները:

Մասնակցությունը և ակտիվ քաղաքացի լինելը նշանակում է ունենալ իրավունքներ, միջոցներ, տարածք ու հնարավորություն և, անհրաժեշտության դեպքում, նաև օժանդակություն՝ մասնակցելու որոշումների կայացման գործընթացին և ազդելու դրանց վրա, ինչպես նաև ներգրավվելու այն գործողություններին և գործունեությանը, որոնք ուղղված են նպաստելու ավելի լավ հասարակության կառուցմանը: Երիտասարդ հաշմանդամների կազմակերպություններին պետք է խորհրդատվություն տրամադրել երիտասարդության հետ կապված քաղաքականության և ծրագրերի մշակման ժամանակ: Երիտասարդ հաշմանդամների ձայնը պետք է լսվի իրենց վերաբերող բոլոր հարցերում:

Հաշմանդամ երիտասարդները դեռևս զգալի խոչընդոտների են հանդիպում իրենց կյանքի բոլոր հարցերում. կրթություն, աշխատանք, սպորտ, մշակույթ, զվարճություններ և համայնքի կյանք: Այս հարցերը կարելի է լուծել միայն համապարփակ ռազմավարության հիման վրա: Երիտասարդական ցանկացած քաղաքականություն մշակելիս պետք է ընտրվեն հասարակության մեջ

երիտասարդների լիարժեք մասնակցությունն ապահովող ուղիները, միաժամանակ հաշվի առնելով նրանց կոնկրետ կարիքները: Տեղական և տարածաշրջանային կյանքում երիտասարդների մասնակցության վերաբերյալ Եվրոպական խարտիայի համաձայն, տեղական և տարածաշրջանային մակարդակներում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների ակտիվ մասնակցությունը էական նշանակություն ունի ավելի ժողովրդավարական, ներգրավող և բարգավաճ հասարակություն կառուցելու ճանապարհին:

4.5. Հաշմանդամների ծերացումը

Հաշմանդամների ծերացումը, և մասնավորապես այն անձանց, ովքեր ավելի ինտենսիվ օգնության կարիք ունեն իրենց հաշմանդամության բնույթի պատճառով, նոր խնդիրներ է առաջադրում Եվրոպայի հասարակության համար: Սա իր մեջ ներառում է անհատներին և նրանց ընտանիքներին օժանդակության ցուցաբերում հատկապես այն դեպքերում, երբ ծեր ծնողները հիմնական խնամատարն են: Նորանուծական մոտեցումներ են պահանջվում լուծելու այս խնդիրները քաղաքականության և ծառայությունների լայն տիրույթի շրջանակներում: Եվրախորհրդի զեկուցումների մեջ բացահայտվում են այս խմբի հիմնական հարցերը և առաջ գնալու հետ կապված առաջարկությունները: Դրանց թվում առաջարկվում է ձեռնարկել համակարգված գործողություն, որը կարձագանքի ծերացող հաշմանդամների կոնկրետ կարիքներին, նրանց ի վիճակի դարձնելով հնարավորինս մնալ իրենց համայնքի անդամը: Սա պահանջում է անհատական կարիքների գնահատում և հեռանկարային պլանավորում, ինչպես նաև պահանջվող ծառայությունների առկայություն: Հաշմանդամության հարցերը ևս պետք է նկատի առնվեն ծերերին առնչվող քաղաքականությունների մշակման ժամանակ:

Ընդունված է, որ այն հարցերը և գործոնները, որոնք ազդում են առօրյա կյանքում և գործունեության մեջ ծեր հաշմանդամների մասնակցության վրա, պետք է հաշվի առնվեն սույն Գործողությունների ծրագրում սահմանված գործողությունների ոլորտների շրջանակներում որոշակի գործողություններ նախագծելիս⁶:

4.6. Փոքրամասնությունների և ներգաղթածների շրջանում հաշմանդամներ

Փոքրամասնություն կազմող խմբերի, ներգաղթածների և փախստականների շրջանում հաշմանդամները բազմաթիվ խոցելի կողմեր կարող են ունենալ խտրականության կամ հանրային ծառայությունների հետ նրանց ծանոթ չլինելու պատճառով:

Օրինակ՝ չնայած գնուչունների հանդեպ Եվրոպայում աճող ուշադրությանը, հետագա գործողություններ են անհրաժեշտ ճանաչելու նրանց կարգավիճակը որպես հասարակության լիիրավ և հավասար անդամների: Իրենց սեփական համայնքի ներսում հաշմանդամները անտեսանելի են համարվում, ուստի և առանձնահատուկ խոցելի խումբ են:

Կրթությունը, զբաղվածությունը, հանրային առողջապահական ծառայությունները և մշակութային կյանքը որոշակի կարևոր ոլորտներ են, որոնց ուղղությամբ հարկ է միջոցներ ձեռնարկել բոլոր խմբերի համար:

Անդամ-պետությունները պետք է ապահովեն, որպեսզի հաշմանդամներին տրամադրվող օժանդակության մեջ հաշվի առնվեն նրանց լեզուն կամ մշակույթը, ինչպես նաև նման փոքրամասնություն կազմող խմբերի որոշակի կարիքները:

5. Իրականացումը և հսկողությունը

5.1. Ներածություն

⁶ Ծերացող հաշմանդամների վերաբերյալ տվյալների որակական և քանակական վերլուծության հայեցակարգը, Եվրախորհրդի հրատարակչություն, Ստրասբուրգ, 1998, ISBN 92-871-3327-1.

Անդամ-պետությունների կառավարությունները առաջնահերթ պատասխանատվություն են կրում ազգային մակարդակով իրականացվող հաշմանդամների գծով քաղաքականությունների իրագործման և , մասնավորապես, յուրաքանչյուր գործողությունների ոլորտի հետ կապված որոշակի գործողությունների իրականացման համար:

Սույն Գործողությունների ծրագրում ընդունվում է, որ խտրականության դեմ պայքարի քաղաքականությունը, վարչարարական մեխանիզմը, ռեսուրսները, ժողովրդագրությունը և այլն տարբերվում են ըստ երկրների: Ուստի այն թույլ է տալիս անդամ-պետություններին որոշել ազգային գերակայությունները և դրանց իրականացման համար համապատասխան միջոցներով պրոգրեսիվ մոտեցում կիրառել:

Նախատեսված է, որ սույն Գործողությունների ծրագրում ներառված որոշակի գործողությունների իրականացման ժամանակ անդամ-պետությունները լիովին հաշվի պետք է առնեն.

- Գործողությունների ծրագրի հիմքում ընկած սկզբունքները, այդ թվում՝ խտրականությունից պաշտպանված լինելու, հավասար հնարավորությունների իրավունքները և նրանց՝ որպես քաղաքացիների, իրավունքները,
- խաչաձև հատվող հարցերը, այդ թվում՝ հաշմանդամ կանանց ու աղջիկների, երեխաների ու երիտասարդների, օգնության մեծ կարիք ունեցող հաշմանդամների, ժեր հաշմանդամների, հաշմանդամ ներգաղթածների, ինչպես նաև փոքրամասնության շրջանում հաշմանդամ ծերերի հետ կապված հարցերը, ի լրումն այն վճռորոշ դերի, որ որակյալ ծառայությունները և ուսուցումը խաղում են հաշմանդամներին տրամադրվող ծառայությունների գծով,
- հաշմանդամների ներկայացչական կազմակերպությունների ներգրավումը եվրոպական, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում ծրագրի իրականացման, մոնիտորինգի և գնահատման բոլոր փուլերում, սա վճռորոշ տարր է համարվում:

5.1.1 Միասնական նախագծում

Հասանելիության հավասար իրավունքը էական դեր է խաղում բոլորին ներգրավող հասարակության զարգացման գործում: Շենքերի, շրջակա միջավայրի, ապրանքների, հաղորդակցության միջոցների և էլեկտրոնային համակարգերի նախագծումը հատկապես կարևոր է կյանքի բոլոր հարցերում հաշմանդամների մասնակցության և անկախության օժանդակման գործում:

Միասնական նախագծումը արդյունավետ ուղի է բարելավելու շրջակա միջավայրի, ծառայությունների և ապրանքների մատչելիությունը և որակը: Այն ուշադրությունը կենտրոնացնում է նրա վրա, որպեսզի շրջակա միջավայրի, շենքերի և կենցաղային ապրանքների նախագիծը / դիզայնը ճիշտ լինի հենց սկզբից, այլ ոչ թե հետագայում հարմարեցվի: Մինչդեռ ոչ միշտ է հնարավոր, որ հին կամ պատմական շենքերը ամբողջովին մատչելի դառնան: Դեռևս չափազանց շատ խոչընդոտներ կան, որոնք խանգարում են հաշմանդամներին մասնակցելու հասարակության բոլոր ոլորտներին և օգտվելու բոլոր հնարավորություններից: Միասնական նախագծի գաղափարը, դրա լայն կիրառումը և օգտագործողների մասնակցությունը նախագծման բոլոր փուլերին չափազանց կարևոր են շրջակա միջավայրի, տրանսպորտի և հաղորդակցության միջոցների մատչելիությունը և ապրանքներից օգտվելու հնարավորությունը բարձրացնելու գործում:

5.1.2. Ծառայությունների որակը և աշխատակիցների ուսուցումը

Որակը և ուսուցումը այն հիմնական սկզբունքներն են, որոնք ընկած են սույն Գործողությունների ծրագրի գործողությունների գծի հիմքում: Եվրոպական շատ երկրներ արդեն իսկ կանոնավոր կերպով աշխատում են ծառայությունների որակի և աշխատակիցների ուսուցման բարելավման

ուղղությամբ: Էական նշանակություն ունի այն, որ բոլոր քաղաքականությունները, ծառայությունները և գործողությունները հիմնավորվեն որակյալ չափանիշերով և իրագործվեն հմուտ և ուսուցման դասընթացներ անցած անձնակազմի կողմից: Պատվիրատուի կարիքների բավարարումը պետք է առաջնային շահադրդիչը լինի կենսունակ և որակյալ քաղաքականությունների համար: Կենսական նշանակություն ունի այն, որ հաշմանդամները, ծառայություններից օգտվողները ակտիվորեն մասնակցեն որակի հավաստիացմանը և ծառայությունների տրամադրման մոնիտորինգին:

Ուսուցումը նաև որակյալ ծառայությունների ապահովման էական տարրն է: Սա ոչ միայն ներառում է կոնկրետ հաշմանդամների համար նախատեսված ծառայությունների և այլ ծառայությունների մատուցման մեջ ներգրավված աշխատակազմի, այլ նաև այն աշխատակիցների համապատասխան ուսուցումը, ովքեր որոշակի դեր են խաղում հաշմանդամների կյանքի վրա ազդող քաղաքականությունների մշակման գործում: Ուսուցումը պետք է ներառի հաշմանդամների իրավունքների մասին իրազեկվածության բարձրացում:

5.1.3. Համաձայնեցումը կամ ոլորտային պատասխանատվությունը

Քաղաքականության մշակման և ծառայությունների մատուցման ընթացքում համաձայնեցման մոտեցումը կամ ոլորտային պատասխանատվությունը կարևոր դեր է խաղում մարդկանց ներգրավող հասարակության առաջխաղացման հարցում և այն սույն Գործողությունների ծրագրի հիմնական տարրը և դրա հիմքում ընկած սկզբունքն է: Համաձայնեցումը ենթադրում է հաշմանդամներին տրամադրվող ծառայությունների միավորում մյուս մարդկանց տրամադրող ծառայությունների հետ: Սրա նպատակն է հրաժարվել այն քաղաքականություններից, որոնք նպաստում են տարանջատմանը, շարժվելով դեպի հնարավոր միավորում: Ինչևէ, համաձայնեցումը չի խանգարում, որպեսզի գոյություն ունենան հաշմանդամների համար նախատեսված որոշակի քաղաքականություններ, որոնք հաշմանդամների շահերին են ծառայում:

Գործնականում այս մոտեցումը նշանակում է, որ հաշմանդամների համար նախատեսված քաղաքականությունները այլևս չեն դիտվում որպես բացառապես որոշակի նախարարության կամ զերատեսչության պարտականություն: Բոլոր նախարարությունների պարտականությունն է ապահովել, որպեսզի նրանց նախաձեռնություններում հաշվի առնվեն հաշմանդամների իրավունքները: Պետք է արագացնել կառավարության տարբեր ճյուղերի միջև համակարգումը և հաշմանդամության բոլոր հարցերի համար կենտրոնական մարմնի ստեղծումը, որի նպատակն է ապահովել և զարգացնել համաձայնեցման մոտեցումը:

5.2. Իրականացումը

Անդամ-պետությունների կառավարությունները առաջնային պատասխանատվություն են կրում ազգային մակարդակում հաշմանդամների համար նախատեսված քաղաքականությունների իրականացման և, մասնավորապես, գործողությունների յուրաքանչյուր գծին համապատասխանող որոշակի գործողությունների իրագործման համար:

Անդամ-պետությունները պետք է սկսեն հաշմանդամների համար նախատեսված քաղաքականությունների իրագործման իրենց առկա ծրագրերի գնահատումից, ինչպես նաև այն հիմնական սկզբունքներից, որոնք ընկած են Եվրախորհրդի հաշմանդամներին առնչվող գործողությունների ծրագրի նախագծի հիմքում, որպեսզի բացահայտեն, թե որ ոլորտներում դեռևս առաջընթաց պետք է ապահովել և որ կոնկրետ գործողությունները դեռևս պետք է իրագործվեն:

Հիմնվելով այդ գնահատման վրա, անդամ-պետությունները պետք է ռազմավարություն մշակեն, որպեսզի ապահովեն հաշմանդամների համար նախատեսված իրենց սեփական համակարգված ծրագրերի, ռազմավարությունների և գործողությունների առաջընթացը՝ Եվրախորհրդի հաշմանդամներին առնչվող ծրագրին և բյուջեի ֆինանսական միջոցներին համապատասխան:

Յուրաքանչյուր անդամ-պետության պարտականություններում տրված միջոցառումների առաջնահերթությունների սահմանումը և իրականացման ժամանակացույցը:

Կարևոր է, որպեսզի անդամ-պետության կողմից Ծրագրի իրականացմանը նպաստի համակարգված մոտեցումը, համապատասխան շահագրգիռ մասնակիցների, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, հաշմանդամների ոչ-պետական կազմակերպությունները ներգրավմամբ:

Իրականացման շրջանակներում անդամ-պետությունները պետք է քննարկեն, նպատակահարմարության դեպքում, հաշմանդամության սահմանման հարցը:

Անդամ-պետությունները պետք է Գործողությունների ծրագիրը թարգմանեն իրենց պաշտոնական լեզվով և տրամադրեն այդ թարգմանությունները այլընտրանքային ձևաչափով: Անդամ-պետությունները պետք է Գործողությունների ծրագիրը առաջ տանեն, ներգրավելով բոլոր համապատասխան շահագրգիռ մասնակիցներին՝ երկարաժամկետ օժանդակություն ապահովելու նպատակով:

Պահանջի դեպքում Եվրախորհուրդը կօժանդակի անդամ-պետություններին Գործողությունների ծրագրի իրականացման հարցում: Անդամ-պետությունները պետք է դիտարկեն Եվրախորհրդի Զարգացման բանկի հետ համագործակցության հարցը և ներկայացնեն բանկային ծառայությունների գծով նախագծեր ազգային մակարդակով Գործողությունների ծրագրի իրականացման նպատակով:

5.3. Հսկողությունը

Անդամ-պետությունների կառավարությունները առաջնահերթ պատասխանատվություն են կրում ազգային մակարդակով Եվրախորհրդի Գործողությունների ծրագրի իրագործման հսկողության համար, որում նրանք որոշումներ են կայացնում համապատասխան ստուգումների և հսկողության մեխանիզմների վերաբերյալ: Այս նպատակով անդամ-պետությունները պետք է խորհրդակցեն համապատասխան շահագրգիռ մասնակիցների, մասնավորապես, հաշմանդամների հասարակական կազմակերպությունների հետ:

Եվրոպայում սույն Գործողությունների ծրագրի հսկողության շրջանակներում ուշադրությունը պետք է սևեռվի հաշմանդամության ոլորտում համագործակցության ամրապնդմանը և ապահովի տեղեկությունների, փորձի և լավագույն գործելակերպերի արդյունավետ փոխանակում:

Սույն Գործողությունների ծրագրի արդյունավետ հսկողությունը պահանջում է, որպեսզի անդամ-պետությունները կանոնավոր կերպով տրամադրեն Եվրախորհրդին համապատասխան տեղեկատվություն: Այս առումով առանձնակի հետաքրքրություն և կարևորություն են ներկայացնում ազգային կառավարության կողմից խորհրդարանին ներկայացվող հաշվետվությունները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրված հաշվետվությունները և հետազոտությունները:

Այն խումբը, որը նախատեսված է հետևելու Գործողությունների ծրագրի իրականացմանը, ղեկավարելու է այդ գործընթացը, այդ թվում՝ անհրաժեշտ ընթացակարգերը, ժամանակացույցի սահմանումը և հնարավոր միջնաժամկետ ստուգումները:

Այս խումբը կարող է առաջարկել անդամ-պետություններին կատարել որոշակի առաջնահերթ հարցերի խորը վերլուծություն: Սա կապահովի, որպեսզի Նախարարների Կոմիտեն կանոնավոր կերպով տեղեկացվի Գործողությունների ծրագրի իրականացման մեջ տեղի ունեցած առաջընթացի վերաբերյալ:

Չաշմանդամների միջազգային հասարակական կազմակերպությունները մասնակցելու են այս գործընթացին ընթացակարգի կանոնների շրջանակներում: Առաջընթացը խթանելու համար հետազայում կարող են հրավիրվել այլ շահագրգիռ մասնակիցների, և սա պետք է որոշակիացվի վերը նշված խմբի տեխնիկական առաջադրանքում:

«Առաջընթաց որպես քաղաքացիներ , լիարժեք մասնակցության ուղով» նախարարների Մալազայի հռչակագիրը Հաշմանդամության վերաբերյալ

(Ընդունվել է 2003 թ. մայիսին 7-ից 8-ը Իսպանիայի Մալազա քաղաքում կայացած երկրորդ եվրոպական կոնֆերանսում, որին մասնակցել են հաշմանդամների ինտեգրման համար պատասխանատու նախարարները)

1. Մենք՝ հաշմանդամների ինտեգրման քաղաքականությունների համար պատասխանատու նախարարներս, Իսպանիայի Կառավարության հրավերով 2003 թ. մայիսի 7-ից 8-ը մասնակցեցինք Մալազայում կայացած Նախարարների երկրորդ եվրոպական կոնֆերանսին, որը կազմակերպել էր Եվրոպայի խորհուրդը,

1. Հաշվի առնելով.

2. Եվրոպայի խորհրդի նպատակը՝ ամրագրված իր Կանոնադրության մեջ, որը նախատեսում է «հասնել իր անդամների միջև ավելի ամուր միասնականության՝ նպատակ հետապանելով պաշտպանել և իրագործել անդամների ընդհանուր ժառանգությունը հանդիսացող գաղափարները և սկզբունքները և նպաստել նրանց տնտեսական ու սոցիալական առաջընթացին»,

3. 1991 թ. նոյեմբերի 7-ից 8-ը Փարիզում կայացած հաշմանդամների վերաբերյալ քաղաքականությունների համար պատասխանատու նախարարների «Ինքնուրույն կյանք հաշմանդամների համար» առաջին կոնֆերանսի արդյունքները, որոնց հիման վրա Եվրոպայի խորհրդի նախարարների հանձնախումբը ընդունել է «Հաշմանդամների վերաբերյալ համապարփակ քաղաքականության մասին» հանձնարարական թիվ (92) 6-ը,

4. այն փաստը, որ մարդու իարվունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը և դրանց լիարժեք իրականացումը կենսական նշանակություն ունեն հասարակական կյանքում հաշմանդամների ակտիվ մասնակցության համար, և որ հաշմանդամների համար հավասար հնարավորությունների սկզբունքը հանդիսանում է հիմնարար արժեք, որը կիսում են Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ-պետությունները,

5. Եվրոպայի խորհրդի երկրորդ եվրոպական կոնֆերանսում լսված Եվրոպայի հաշմանդամների շարժման «Խոսքերից դեպի գործողությունները» ելույթը, որը ընդունվել է 2003 թ. ապրիլի 8-ին Մադրիդում կայացած Եվրոպական հասարակական կազմակերպությունների համաժողովում,

6. քաղաքական, տնտեսական և սոցիալական իրավիճակների առումով Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների միջև զգալի տարբերությունների առկայությունը, ինչպես նաև այն փաստը, որ անդամ-պետություններից մի քանիսը, հատկապես նրանք, որոնք գտնվում են տնտեսության անցումային փուլում, կարող են նվազ հնարավորություններ ունենալ բավարարելու հաշմանդամության վերաբերյալ ժամանակակից քաղաքականությունների պահանջները և կարիք ունեն ավելի մեծ աջակցության և խորհրդատվության,

7. այն փաստը, որ հաշմանդամների վերաբերյալ քաղաքականությունների իրականացումը կապված է որոշակի քաղաքական, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, մշակութային և տեխնոլոգիական մարտահրավերների հետ, քանի որ վերջին տասնամյակում Եվրոպան ենթարկվել է տարբեր փոփոխությունների, որոնք ազդում են բնակչության կյանքի որակի վրա և առաջ բերում

բազմաթիվ մարտահրավերներ՝ միաժամանակ ընձեռելով նոր հնարավորություններ հաշմանդամների համար համապարփակ քաղաքականությունների մշակման համար,

8. այն փաստը, որ հաշմանդամների համար առանձնակի կարևորություն ունեն երկու գործոն. մի կողմից, Եվրոպայում տարեց բնակչության աճող թիվը, որը պետք է հաշվի առնվի սոցիալական համերաշխությանն ուղղված ապագա բոլոր ռազմավարություններում՝ հիմնվելով կյանքի ընթացքում աջակցության ծառայություններից կախվածության կանխման և ծերության տարիքում կյանքի որակի պահպանման վրա, իսկ մյուս կողմից, այն հանգամանքը, որ առողջապահության ոլորտում տեղի ունեցած գիտական առաջընթացի և ապրուստի պայմանների բարելավման արդյունքում ֆիզիկական և մտավոր թերություններ ունեցող մարդիկ ապրում են ավելի երկար և լիարժեք կյանքով, ինչը նշանակում է, որ մեծանում են ծառայությունների մատուցման, տնտեսական աջակցության և մարդու իրավունքների պաշտպանության հարցերում նրանց կարիքները,

9. այն փաստը, որ 2003 թվականը Եվրոպական Միության կողմից ճանաչվել է որպես «Հաշմանդամների տարի», և որ նրա հիմնական նպատակն է բարձրացնել հավասար հնարավորություններ ունենալու հաշմանդամների իրավունքների մասին իրազեկվածությունը և խթանել այդ իրավունքների լիարժեք և հավասար հիմունքներով իրականացումը,

10. ՄԱԿ-ի ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքները, որը ստեղծվել է «հաշմանդամների իրավունքների և արժանապատվության խթանմանը և պաշտպանությանն ուղղված համապարփակ և միասնական միջազգային կոնվենցիայի վերաբերյալ առաջարկությունների ուղուսումնասիրման» նպատակով,

11. Եվրոպայի խորհրդի Հաշմանդամների վերականգնման և ինտեգրման Եվրոպական հանձնաժողովի աշխատանքները՝ ուղղված «Սոցիալական և հանրային առողջապահության ոլորտում մասնակի համաձայնագրի» շրջանակներում միջգերատեսչական համագործակցության զարգացմանը,

12. Եվրոպայի խորհրդի և միջազգային այլ կազմակերպությունների, հաստատությունների կամ միջոցառումների նվաճումները, որոնց ցանկը կից ներկայացվում է սույն Հռչակագրի հավելվածում,

2. Վերահաստատում ենք.

13. մեր պարտավորվածությունը ապահովելու մեր երկրներում ապրող ցանկացած անհատի մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, համաձայն «Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի», ինչպես նաև այն, որ բոլոր մարդիկ ծնված օրվանից ազատ են և ունեն հավասար իրավունքներ, արժանապատվություն և ներուժ՝ հասարակության զարգացմանը և բարեկացությանը իրենց կառուցողական ներդրումն ունենալու համար, և որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ և իրավասու են օրենքով ստանալ հավասար պաշտպանություն,

14. որ մարդու իրավունքների մասին Եվրոպական և միջազգային այլ փաստաթղթերում ամրագրված մարդու բոլոր իրավունքների լիարժեք և արդյունավետ իրականացման մեխանիզմները պետք է կիրառվեն առանց որևէ խտրականության կամ որևէ հիմքերով, այդ թվում հաշմանդամության պատճառով մարդկանց տարբերակման,

15. Հաշմանդամների վերաբերյալ քաղաքականությունների համար պատասխանատու նախարարների՝ 1991 թ. Փարիզում կայացած առաջին կոնֆերանսում արտահայտված մեր պատրաստակամությունը խթանելու հաշմանդամների վերաբերյալ համապարփակ և ինտեգրված քաղաքականությունը, և այն, որ «Հաշմանդամների վերաբերյալ համապարփակ քաղաքականության մասին» հանձնարարական թիվ (92) 6-ը ոգեշնչել է երկրներին նախաձեռնելու օրենսդրական և քաղաքական միջոցառումներ, որոնց շնորհիվ առաջընթաց է արձանագրվել

լիարժեք մասնակցության հասնելուն ուղղված ջանքերում, և որ այն հիմնարար սկզբնական փաստաթուղթ է և պետք է որպես հիմք ծառայի ապագա գործողությունների համար,

16. որ հաշմանդամների լիիրավ քաղաքացիության ու մասնակցության համար անհրաժեշտ է անձին թույլ տա կառավարելու իր սեփական կյանքը, ինչի համար կարող են պահանջվել աջակցության հատուկ միջոցառումներ,

3. Հաշվի ենք առնում.

17. որ հաջորդ տասնամյակում մեր գլխավոր նպատակն է բարելավել հաշմանդամների և նրանց ընտանիքների կյանքի որակը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հասարակության կյանքում նրանց լիարժեք մասնակցությանն ու ինտեգրմանը, քանի որ մասնակցային և մատչելի հասարակությունը ծառայում է ի շահ ողջ բնակչությանը,

18. որ հաշմանդամների կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումները պետք է հիմնված լինեն հաշմանդամների վիճակի, ներուժի և կարիքների հավաստի գնահատման վրա՝ տրամադրվող ծառայություններում զարգացնելով նորարարական մոտեցումները և հաշվի առնելով հաշմանդամների նախընտրությունները, իրավունքները և յուրահատուկ պայմանները,

19. որ նշված նպատակին հասնելու համապատասխան ռազմավարությունը պետք է արտացոլվի ապագա Գործողությունների ծրագրում՝ ցանկացած տարիքի հաշմանդամների դեմ ուղղված խտրականության դրսևորումները վերացնելու համար, և որ հատուկ ուշադրություն պետք է դարձվի հաշմանդամ կանանց և մեծապես խնամքի կարիք ունեցող հաշմանդամների վրա, որպեսզի նրանք ի վիճակի լինեն օգտվելու իրենց իրավունքներից, հիմնարար ազատություններից և լիիրավ քաղաքացիությունից,

20. որ անհրաժեշտ է որդեգրել ինտեգրված մոտեցումներ հաշմանդամության վերաբերյալ ազգային և միջազգային քաղաքականությունների և օրենսդրության մշակման ժամանակ, ինչպես նաև քաղաքականությունների բոլոր համապատասխան ուղղություններում, հատկապես կենսական նշանակություն ունեցող ոլորտներում, օրինակ՝ բնակարանային պայմաններին, կրթությանը, մասնագիտական ուղղորդմանը և ուսուցմանը, զբաղվածությանը, կառուցված միջավայրին, հասարակական տրանսպորտին, տեղեկատվությանը, առողջապահությանը և սոցիալական պաշտպանությանը՝ վերաբերող ուղղություններում պատշաճորեն արտացոլել հաշմանդամների կարիքները,

21. որ հիմնարար նպատակներից է նախաձեռնել տնտեսական, սոցիալական, կրթական, զբաղվածության, շրջակա միջավայրի պաշտպանության և առողջապահական միջոցառումներ, որպեսզի պահպանել յուրաքանչյուր հաշմանդամի առավելագույն աշխատունակությունի իր կյանքի տևողության ողջ ընթացքում և որպեսզի նպաստել հաշմանդամության կանխմանը,

22. որ կրթությունը սոցիալական ինտեգրման հիմնարար գործիքներից մեկն է, և ջանքեր պետք է գործադրվեն, որպեսզի հաշմանդամ երեխաները հնարավորություն ունենան հաճախելու հանրակրթական դպրոցներ, եթե դա բխում է երեխայի շահերից, ապահովել անցումը դպրոցից դեպի բարձրագույն ուսումնական հաստատություն, իսկ այնուհետև՝ աշխատանքի, զարգացնել կյանքի տևողության ընթացքում ուսանելու գաղափարը,

23. որ աշխատանք ունենալու հավասար հնարավորությունների ապահովումը սոցիալական մասնակցության կարևոր տարրերից մեկն է, և դրա համար անհրաժեշտ է ընթանալ աշխատուժի շուկայում (գերադասելիորեն՝ բաց շուկայում) հաշմանդամների ինտեգրման ուղով՝ ուշադրությունը սևեռելով ունակությունների գնահատման և ակտիվ քաղաքականությունների իրականացման վրա, և որ աշխատուժի շուկաներում հաշմանդամների մասնակցության խթանման միջոցով բազմատեսակ աշխատուժ ունենալը հասարակության համար առավելություն է,

24. չափազանց կարևոր է ընթացել տեխնոլոգիաների սոցիալական բնույթը և լավագույնս օգտագործել նոր տեխնոլոգիաների ներուժը՝ նպատակ հետապնդելով կենսագործունեության բոլոր ոլորտներում ընդլայնել հաշմանդամների ինքնուրույնությունը և շփումները,

25. որ առողջապահության ոլորտում տեղի ունեցած գիտական առաջընթացի և ապրուստի պայմանների բարելավման արդյունքում ֆիզիկական և մտավոր և հոգեկան հաշմանդամություն ունեցող մարդկանց կյանքը երկարել է, ինչն իր հերթին առաջ է բերել նոր կարիքներ և մարտահարվելներ խնամքի ծառայությունների մատուցման հարցում, որոնք պահանջում են նորարարական մոտեցումներ,

26. որ անհրաժեշտ է ապահովել այն, որ կյանքի տևողության աճից բխող օգուտները չհանգեցնեն աջակցության ծառայություններից կախման մեջ գտնվող անձանց թվի աճին՝ վաղ տարիքից բնակչության շրջանում սերմանելով առողջ ապրելակերպի գաղափարը, որի շնորհիվ հասուն տարիքում անհատը կպահպանի իր ֆիզիկական և հոգեկան լավ վիճակը,

27. որ առկա արգելապատնեշները վերացնելու և նորերի առաջացումը բացառելու համար միասնական նախագծի սկզբունքի որդեգրման համար պահանջվում է առաջընթաց,

28. որ գոյություն ունի մեծապես խնամքի կարիք ունեցող հաշմանդամների մի փոքր խումբ, որոնց թիվը գնալով մեծանում է, որի պատճառով ընդունում ենք նշված անձանց և նրանց ընտանիքներին աջակցող կառույցների ամրապնդման անհրաժեշտությունը՝ չհեռանալով համայնքում տեղակայված ծառայությունների մոդելից,

29. որ Եվրոպայում հաշմանդամ կանանց վիճակը արժանի է ավելի հատուկ ուշադրության, որպեսզի երաշխավորվի նրանց ինքնուրույնությունը, անկախությունը, մասնակցությունը և սոցիալական ինտեգրումը, և որ անհրաժեշտ է հաշմանդամության վերաբերյալ քաղաքականության մշակման ժամանակ գեներային համաձայնեցման մոտեցմանն աջակցող քայլեր ձեռնարկել,

4. Պարտավորվում ենք.

30. աշխատել խտրականության բացառման և մարդու իրավունքների պաշտպանության ծրագրերի շրջանակներում քաղաքականությունների բոլոր ուղղություններում հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման ուղղությամբ,

31. չդրսևորել խտրական վերաբերմունք հաշմանդամություն ունեցող անձի ծագման կամ ինքնության հիման վրա,

32. ինտեգրման առաջադիմական տեխնոլոգիաներում և կառուցված միջավայրում, հասարակական վայրերում, հաղորդակցությունների համակարգերում և բնակարանային շենքերում միասնական նախագծի սկզբունքների որդեգրման միջոցով զարգացնել համայնքում ինքնուրույն կյանքով ապրելու հաշմանդամների հնարավորությունները,

33. աշխատել պետական գերատեսչությունների միջև համագործակցությունն ամրապնդելու ուղղությամբ՝ հատուկ պարտավորություն ստանձնելով խթանելու հավասարությունը հիմնական ծառայությունների, առողջապահական ծառայությունների տրամադրման մեջ և իրավական համակարգում, ինչպես նաև բարելավելու հաշվետվողականությունը տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակով գործող համապատասխան մարմինների միջև,

34. խթանել որակյալ ծառայությունների տրամադրումը՝ արձագանքելով հաշմանդամների կարքիներին, ապահովելով ծառայությունների մատչելիությունը համապատասխանության

չափանիշների հրատարակման միջոցով՝ հիմնվելով մանրագնին և անաչառ գնահատման արդյունքների վրա, երբ նշված չափանիշները ձևավորվում են հաշմանդամների սեփական ընտրությունների, ինքնուրույնության, բարեկեցության հիման վրա, ապահովելով պատշաճ երաշխիքներ, կարգավորում և բողոքների անկախ քննության հնարավորություն, ինչպես նաև համախմբել և ամրապնդել արդեն իրականացվող միջոցառումները,

35. պաշտպանել կենսագործունեության բոլոր ոլորտներում հաշմանդամների ընդգրկումը կրթության համակարգի և որպես հասարակության լիիրավ անդամ հաշմանդամների հանդեպ պարտավորություն ստանձնելու միջոցով,

36. նպաստել աշխատուժի շուկայում հաշմանդամների մասնակցության զարգացմանը՝ ուշադրությունը սևեռելով ունակությունների (հատկապես մասնագիտական ունակությունների) գնահատման վրա և առավելի մատչելի դարձնելով մասնագիտական ուղղորդումը և ուսուցումը,

37. լիովին հաշվի առնել հաշմանդամ երեխաների և նրանց ընտանիքների, ինչպես նաև տարեց հաշմանդամների կարիքները՝ չչեղվելով աշխատունակ տարիքի հաշմանդամ (աշխատող կամ չաշխատող) չափահասների նկատմամբ ստանձնած պարտավորությունից՝ ընդունելով այն փաստը, որ չի կարելի թույլ տալ, որ զբաղվածությունը համարվի քաղաքացիության, մասնակցության ոլորտի և մարդու արժանապատվության միակ չափանիշը,

38. շարունակել աջակցությունը հիմնարար և կիրառական գիտությունների, հատկապես տեղեկատվական և հաղորդակցությունների նոր տեխնոլոգիաների բնագավառներում կատարվող գիտահետազոտական աշխատանքներին, որպեսզի բարելավել կենսագործունեության բոլոր ոլորտներում ինտերակտիվ մասնակցության միջոցները,

39. իրականացնել միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են տղամարդկանց և կանանց միջև հնարավորությունների արդյունավետ հավասարակշռության և հաշմանդամների ակտիվ մասնակցության համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով կրթության և ուսուցման ոլորտներում կանանց և աղջիկների, զբաղվածության, սոցիալական քաղաքականության, մասնակցության, որոշումների կայացման, սեքսուալության, մայրության, տան և ընտանիքի կյանքի, ինչպես նաև բռնության դրսևորումների կանխման հարցերի վրա,

40. կատարել այն միջոցառումների շրջանակների հետագա վերլուծություններ, որոնց իրականացման արդյունքում արդյունավետորեն կբարելավվի մեծապես աջակցության կարիք ունեցող հաշմանդամների կյանքը համայնքների ներսում, ինչպես նաև հավաքագրել հաշմանդամության վերաբերյալ քաղաքականությունների սահմանման և գնահատման համար անհրաժեշտ վիճակագրական տվյալներ,

41. ապահովել այն, որ պատասխանատու մարմինները մանրագնին ուսումնասիրեն հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքների կարիքները՝ նպատակ հետապնդելով իրականացնել աջակցության միջոցառումներ, որոնք թույլ կտան հաշմանդամ երեխաներին մեծանալ իրենց ընտանիքներում, ինտեգրվել տեղական համայնքի երեխաների կյանքում և ստանալ կրթություն,

42. ապահովել այն, որ մանրագնին գնահատվեն ոչ ֆորմալ խնամք իրականացնող ընտանիքների, հատկապես հաշմանդամ երեխա կամ մեծապես աջակցության կախման մեջ գտնվող չափահաս հաշմանդամ ունեցող ընտանիքների կարիքները՝ նպատակ հետապնդելով իրականացնել ընտանիքում կյանքի բարելավմանն ուղղված տեղեկատվական, ուսուցման և աջակցության, այդ թվում հոգեբանական աջակցության միջոցառումներ,

43. աշխատել ծրագրերի ու ռեսուրսների զարգացման ուղղությամբ՝ ծերացող հաշմանդամների կարիքները բավարարելու համար,

44. վաղ տարիքից բնակչության շրջանում սերմանել առողջ ապրելակերպի գաղափարը, որի շնորհիվ հասուն տարիքում անհատը կպահպանի իր ֆիզիկական ու հոգեկան լավ վիճակը,

45. աշխատել հաշմանդամների դրական կերպարի զարգացման ուղղությամբ՝ սերտորեն համագործակցելով տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում լրատվամիջոցների հետ,

46. հաշմանդամներին ներգրավել իրենց կյանքի վրա ազդող որոշումների կայացման գործընթացում՝ միաժամանակ ապահովելով հաշմանդամների կազմակերպությունների մասնակցությունը հաշմանդամության վերաբերյալ քաղաքականությունների ձևավորման աշխատանքներում և հատուկ ուշադրություն դարձնելով բազմակի կամ բարդ հաշմանդամություն ունեցող մարդկանց և բոլոր նրանց վրա, ովքեր ի վիճակի չեն ենթկայացնելու իրենց,

47. խթանել սոցիալական գործընկերների, բոլոր պետական ու մասնավոր շահագրգիռ կազմակերպությունների և դերակատարների համագործակցությունը և նրանց մասնակցությունը քաղաքականությունների ձևավորման գործընթացում,

5. Առաջարկում ենք.

48. որ Եվրոպայի խորհրդի Նախարարների հանձնախումբը շարունակի զարգացնել այն քաղաքականությունները, որոնք ուղղված են հաշմանդամների լիիրավ քաղաքացիության և ակտիվ մասնակցության ապահովմանը՝ աշխատանքներում ներգրավելով բոլոր անդամ-պետություններին, ինչպես նաև ամրապնդի Եվրոպայի խորհրդի՝ որպես հաշմանդամության վերաբերյալ քաղաքականության ձևավորման խնդրում միջազգային համագործակցության հարթակ ծառայելու դերը՝ կոչ անելով Հաշմանդամների վերականգնման և ինտեգրման հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի այլ համապատասխան հանձնաժողովներին շարունակել հաշմանդամության վերաբերյալ քաղաքականությունների համակարգումն իրենց պատասխանատվության ոլորտներում,

49. հաշվի առնել Հաշմանդամների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի գործողությունների ծրագրի հետ կապված հարցերը, որոնք արժարժվել են նախարարների սույն կոնֆերանսի ժամանակ՝ հիմնվելով մարդու իրավունքների և տարբեր դերակատարների միջև գործընկերության վրա, սահմանելով ռազմավարական նպատակներ և գերակա առաջնահերթություններ, նպատակ հետապնդելով իրագործելի և շարունակական քաղաքականությունների միջոցով հասնել հաշմանդամների լիիրավ քաղաքացիությանը և համայնքների կյանքում նրանց ակտիվ մասնակցությանը,

50. ելնելով մարդու իրավունքների բնագավառում իր մեծ փորձից՝ Եվրոպայի խորհուրդն ակտիվ դերակատարում ունենա Միավորված Ազգերի ժամանակավոր հանձնաժողովի գալիք նիստի աշխատանքներում, որը ստեղծվել է «հաշմանդամների իրավունքների և արժանապատվության խթանմանը և պաշտպանությանը ուղղված համապարփակ և միասնական միջազգային կոնվենցիայի վերաբերյալ առաջարկությունների ուղևորման ասիուման» նպատակով:

6. Հրավիրում ենք.

51. Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ և դիտորդ պետություններին, Եվրոպական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին մասնակցելու հաշմանդամների վերաբերյալ համապարփակ քաղաքականության մշակման և իրականացման ուղղությամբ հաշմանդամների լիարժեք մասնակցությամբ տարվող աշխատանքներին,

7. Ցանկանում ենք.

52. Կիսել հաշմանդամների մարդու իարվունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև լիիրավ քաղաքացիության ու համայնքում ակտիվ մասնակցության մասին համոզմունքները, արժեքներն ու սկզբունքները, որոնք ամրագրված են Եվրոպական նախարարների հռչակագրում և սահմանվել են որպես ընդհանուր եվրոպական հատկանիշներ ինչպես Եվրոպայում, այնպես էլ նրանից դուրս ապրող ցանկացած մարդու համար:

* * *

Ի վերջո, մեր երախտագիտությունն ենք հայտնում Իսպանիայի իշխանություններին համաժողովի գերազանց կազմակերպման և ջերմ հյուրընկալության համար:

Հղումային փաստաթղթեր

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիա (ETS No. 5),

Եվրոպական սոցիալական խարտիա (ETS No. 35) և Եվրոպական սոցիալական խարտիա (վերանայված) (ETS No. 163),

Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգիրք (ETS No. 48), Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի արձանագրություն (ETS No. 48A), Սոցիալական ապահովության եվրոպական օրենսգիրք (վերանայված) (ETS No. 139),

Մարդու իրավունքների և անձի պաշտպանություն կենսաբանական միջոցների ու դեղորայքի կիրառության մասին «Մարդու իրավունքների և կենսաբանական բժշկության կոնվենցիա» (ETS No. 164),

Ճարտարապետական ժառանգության մասին եվրոպական կոնվենցիա (ETS No. 121),

Լանդշաֆտի մասին կոնվենցիա (ETS No. 176),

«Սոցիալական համերաշխության ռազմավարություն»՝ ընդունված 2000 թ. մայիսի 12-ին Եվրոպայի խորհրդի Սոցիալական համերաշխության հանձնաժողովի կողմից,

Սպորտի եվրոպական խարտիայի մասին Նախարարների հանձնախմբի հանձնարարական թիվ (86) 18-ը հաշմանդամների վերաբերյալ,

Հաշմանդամների վերաբերյալ համապարփակ քաղաքականության մասին Նախարարների հանձնախմբի հանձնարարական թիվ (92) 6-ը,

Հաշմանդամների մասնագիտական գնահատման խարտիայի մասին որոշում (95)3-ը,

Աշխատանքի և ընտանեկան կյանքի համատեղման մասին Նախարարների հանձնաժողովի հանձնարարական (96) 5-ը՝ ուղղված անդամ-պետություններին,

Բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի մասին Նախարարների հանձնաժողովի հանձնարարական (98) 3-ը՝ ուղղված անդամ-պետություններին,

Ինքնուրույնության մասին Նախարարների հանձնաժողովի հանձնարարական (98) 9-ը՝ ուղղված անդամ-պետություններին,

Անաշխատունակ չափահասների իրավական պաշտպանության մասին Նախարարների հանձնաժողովի հանձնարարական (99) 4-ը՝ ուղղված անդամ-պետություններին,

Առողջապահության և ծայրահեղ իրավիճակներում գտնվող մարդկանց շրջանում առողջապահական ծառայությունների նկատմամբ առկա պահանջարկին առողջապահական ծառայությունների համապատասխանեցման մասին Նախարարների հանձնաժողովի հանձնարարական (2001) 12-ը՝ ուղղված անդամ-պետություններին,

Տեղական հասարակական կյանքում քաղաքացիների մասնակցության մասին Նախարարների հանձնաժողովի հանձնարարական (2001) 19-ը՝ ուղղված անդամ-պետություններին,

Բռնության դրսևորումներից կանանց պաշտպանության մասին Նախարարների հանձնաժողովի հանձնարարական (2002) 5-ը՝ ուղղված անդամ-պետություններին,

Քաղաքական և պետական որոշումների կայացման մեջ կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին Նախարարների հանձնաժողովի հանձնարարական (2003) 3-ը՝ ուղղված անդամ-պետություններին,

«Սոցիալական իրավունքներից օգտվելու հնարավորությունների ընդլայնման մասին» Նախարարների հանձնախմբի Հանձնարարական թիվ(2003)19-ը՝ ուղղված անդամ-պետություններին,

«Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» Նախարարների հանձնախմբի Հանձնարարական թիվ(2004)10-ը՝ ուղղված անդամ-պետություններին,

«Էլ-քվեարկության իրավական, գործառնական և տեխնիկական ստանդարտների մասին» Նախարարների հանձնախմբի հանձնարարական թիվ(2004)11-ը՝ ուղղված անդամ-պետություններին,

«Էլեկտրոնային կառավարման (էլ-կառավարման) մասին» Նախարարների հանձնախմբի հանձնարարական թիվ(2004)15-ը՝ ուղղված անդամ-պետություններին,

«Գիշերօթիկ հաստատություններում ապրող երեխաների իրավունքների պաշտպանության մասին» Նախարարների հանձնախմբի հանձնարարական թիվ(2005)5-ը՝ ուղղված անդամ-պետություններին,

«Կառուցված միջավայրում աշխատող բոլոր մասնագետների պատրաստման ուսումնական ծրագրերում Միասնական նախագծի սկզբունքների ներդրման մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների հանձնախմբի որոշում թիվ (2001)1-ը («Տոմարի որոշում»),

«Ինտեգրման նոր տեխնոլոգիաների միջոցով դեպի հաշմանդամների լիարժեք քաղաքացիությունը» Եվրոպայի խորհրդի նախարարների հանձնախմբի որոշում թիվ (2001)3-ը,

«Շահագործման դեպքերից հաշմանդամ չափահասների և երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների հանձնախմբի որոշում թիվ (2005)1-ը,

«Հաշմանդամների վերականգնողական աշխատանքների քաղաքականությունների մասին» Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարական թիվ 1185 (1992)-ը,

«Անբուժելի հիվանդ և մեռնող անձանց մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարական թիվ 1418 (1999)-ը,

«Ողնուղեղի վնասվածքների բուժմանն ուղղված ջանքերի մասին» Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարական թիվ 1560 (2002)-ը,

«Դեպի հաշմանդամների լիարժեք սոցիալական ինտեգրումը» Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարական թիվ 1592 (2003)-ը,

«Եվրոպայի խորհրդի անդամ-պետություններում նշանների լեզվի պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարական թիվ 1598 (2003)-ը,

«Հաստատություններում ապրող լքված երեխաների կյանքի բարելավման մասին» Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարական թիվ 1601 (2003)-ը,

«Հաստատություններում ապրող երեխաների իրավունքների մասին» Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարական թիվ 1698 (2005)-ը,

«Հաշմանդամների վերականգնման և ինտեգրման խնդրում տեղական իշխանությունների դերի մասին» Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների մշտական միստի թիվ 216 որոշումը (1990 թ.) (ներկայումս Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների հանրագումար (Հանրագումար)),

Հանրագումարի հանձնարարական թիվ 129-ը (2003 թ.) և որոշում թիվ 153-ը (2003 թ.) գբաղվածության և խոցելի խմբերի վերաբերյալ,

«Տեղական և տարածաշրջանային կյանքում երիտասարդների մասնակցության մասին» Եվրոպական վերանայված խարտիա (հանրագումար), 21-ը մայիսի, 2003 թ.,

1997 թ. հոկտեմբերին Ստրասբուրգում կայացած Եվրոպայի խորհրդի Երկրորդ վեհաժողովում Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների ղեկավարների կողմից ընդունված Վերջնական հռչակագիրը, որտեղ ճանաչվել է, որ «սոցիալական համերաշխությունը ընդլայնված Եվրոպայի ամենագերակա խնդիրներից մեկն է և պետք է իրագործվի որպես մարդու իրավունքների և արժանապատվության ապահովման կարևոր բաղադրիչներից մեկը»,

Վերջնական հռչակագիրը (Մալթայի հռչակագիրը)՝ ընդունված 2002 թ. նոյեմբերի 14-15-ը կայացած Եվրոպայի խորհրդի Սոցիալական իրավունքներին նվիրված համաժողովում,

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի հայտարարությունները,

«Երեխայի իրավունքներ մասին» Միավորված Ազգերի կոնվենցիան (1989 թ.),

«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ մասին» Միավորված Ազգերի միջազգային համաձայնագիրը (1966 թ.),

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ մասին» Միավորված Ազգերի միջազգային համաձայնագիրը (1966 թ.),

«Մարդու իրավունքների մասին» Միավորված Ազգերի միասնական հռչակագիրը (1948 թ.),

«Հաշմանդամների համար հնարավորությունների հավասարեցման մասին» Միավորված Ազգերի միասնական կանոնները (1993 թ.),

ՅՈՒՆԵՍԿՈ-ի ընդունած Սալամանկայի փաստաթուղթը և «Կրթության հատուկ պահանջների» վերաբերյալ գործողությունների ծրագիրը (1994 թ.),

Բնակչության ծերացման վերաբերյալ Գործողությունների միջազգային ծրագիրը՝ ընդունված 2002 թ. ապրիլի 8-12-ը Մադրիդում կայացած Բնակչության ծերացման հարցերին նվիրված Երկրորդ համաշխարհային հանրագումարի կողմից,

Բնակչության ծերացման վերաբերյալ 2002 թ. Մադրիդի Գործողությունների միջազգային ծրագրի ռազմավարությունը՝ ընդունված Միավորված Ազգերի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի կողմից 2002 թ. սեպտեմբերի 11-13-ին,

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Հաշմանդամության, առողջական վիճակի վատթարացումների, ֆիզիկական կամ մտավոր հետամնացություն դեպքերի միջազգային դասակարգումը (ICIDH) (1980 թ.),

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Աշխատունակության, անաշխատունակության և առողջական վիճակի միջազգային դասակարգումը (ICF) (2001 թ.),

Մասնագիտական վերականգնման և զբաղվածության (հաշմանդամներ) մասին Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կոնվենցիան (No.C159), 1983 թ., և «Մասնագիտական վերականգնման և զբաղվածության (հաշմանդամներ) մասին» ԱՄԿ-ի համապատասխան հանձնարարականը (No. R168), 1983 թ.

Կրթական ընդհանուր համակարգերում հաշմանդամ երեխաների և երիտասարդների ինտեգրման վերաբերյալ 1990 թ. մայիսի 31-ին կայացած նիստի ժամանակ խորհրդի և կրթության նախարարների ընդունած որոշումը,

Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների հանձնաժողովի փաստաթուղթը. Եվրոպական համայնքի հաշմանդամության վերաբերյալ նոր ռազմավարությունը (COM(96) 406 վերջնական տարբերակ),

«Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների մասին» Եվրոպական միության խորհրդի և անդամ-պետությունների կառավարությունների ներկայացուցիչների 1996 թ. դեկտեմբերի 20-ի որոշումը,

«Հաշմանդամների համար ավտոմեքենաների կայանատեղերի քարտի մասին» 1998 թ. հունիսի 4-ի խորհրդի հանձնարարականը (98/376/EC),

«Հաշմանդամների համար աշխատանքի և զբաղվածության հավասար հնարավորությունների մասին» 1999 թ. հունիսի 17-ի խորհրդի որոշումը (1999/C 186/02),

«Դեպի հաշմանդամների համար անարգել Եվրոպա» փաստաթուղթը՝ հաստատված Եվրոպայի խորհրդարանի Տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի և Տարածաշրջանների հանձնաժողովի կողմից (COM(2000) 284 վերջնական տարբերակ),

«Զբաղվածության մեջ և մասնագիտությունում հավասար վերաբերմունքի ընդհանուր ծրագրի մասին» 2000 թ. նոյեմբերի 27-ի խորհրդի Դիրեկտիվը (2000/78/EC),

«Խտրականության դեմ պայքարի 2001-2006 թթ. գործողությունների համայնքային ծրագրի հաստատման մասին» 2000 թ. նոյեմբերի 27-ի խորհրդի որոշումը (2000/750/EC),

«Եվրոպայի հաշմանդամների տարի - 2003» միջոցառման մասին» 2001 թ. դեկտեմբերի 3-ի խորհրդի որոշումը (2001/903/EC),

«Էլ.մատչելիություն. գիտելիքների վրա հիմնվող հասարակություն մուտք գործելու հաշմանդամների հնարավորության բարելավման մասին» 2003 թ. փետրվարի 6-ի խորհրդի որոշումը (2003/C 39/03),

«Կրթության և ուսուցման բնագավառում հաշմանդամ աշխակերտների և ուսանողների համար հավասար հնարավորությունների մասին» 2003 թ. մայիսի 5-ի խորհրդի որոշումը (2003/C 134/04),

«Հաշմանդամների համար մշակութային ենթակառուցվածքների և մշակութային միջոցառումների մատչելիության մասին» 2003 թ. մայիսի 6-ի խորհրդի որոշումը (2003/C 134/05),

«Չաշմանդամների զբաղվածության և սոցիալական ինտեգրման բարելավման մասին» 2003 թ. հունիսի 15-ի խորհրդի որոշումը (2003/C 175/01),

«Էլ-մատչելիությունը»՝ հաստատված Եվրոպայի խորհրդարանի Տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի և Տարածաշրջանների հանձնաժողովի կողմից (COM(2005) 425 վերջնական տարբերակ),

«Եվրոպայի հաշմանդամների տարի - 2003» միջոցառման իրականացումը, արդյունքները և ընդհանուր գնահատականը»՝ հաստատված Եվրոպայի խորհրդարանի Տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի և Տարածաշրջանների հանձնաժողովի կողմից (COM(2005) 486 վերջնական տարբերակ),

«Ընդլայնված Եվրամիությունում հաշմանդամների վիճակը. 2006-2007 թթ. Եվրոպական գործողությունների ծրագիրը»՝ հաստատված Եվրոպայի խորհրդարանի Տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի և Տարածաշրջանների հանձնաժողովի կողմից (COM(2005) 604 վերջնական տարբերակ),

«Չավասար հնարավորություններ հաշմանդամների համար. Եվրոպական գործողությունների ծրագիրը»՝ հաստատված Եվրոպայի խորհրդարանի Տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի և Տարածաշրջանների հանձնաժողովի կողմից (COM(2003) 650 վերջնական տարբերակ),

«Խտրականության բացառման և սոցիալական համերաշխության դրական գործողությունների արդյունքների մասին» Մադրիդի հռչակագիրը, որն ընդունվել է 2002 թ. մայիսին Մադրիդում կայացած Եվրոպական հասարակական կազմակերպությունների համաժողովում,

«Քաղաքը և հաշմանդամները» Բարսելոնայի հռչակագիրը (1995 թ.),

Չաշմանդամների զբաղվածության մասին Եվրոպական սոցիալական գործընկերների հռչակագիրը (Քյոլն, 1999 թ. մայիս),

«Եվրոպայում հաշմանդամների տարի» միջոցառման սոցիալական գործընկերների «Չաշմանդամների համար հավասար հնարավորությունների և աշխատանք ունենալու իրավունքի պաշտպանության մասին» հռչակագիրը (20-ը հունվարի, 2003 թ.),

Եվրոպայի խորհրդի Երկրորդ կոնֆերանսում լսված Եվրոպայի հաշմանդամների շարժման «Խոսքերից դեպի գործողությունները» Ելույթը, որն ընդունվել է 2003 թ. ապրիլի 8-ին Մադրիդում կայացած Եվրոպական հասարակական կազմակերպությունների համաժողովում: